Որ առաքեցեր ես ազգի մարդկան և ստեղծիչ ՟Քս ՟Այ մեր, որ ի ձեռն ՟Մր յարութե քոյ ազատե- ցեր զմեզ ի ծառայութէ մահու։ Նոյն ինքն և այժմ ՟Տր՝ դառնիցէս ճանապարհի յաշխարհէս զծառայս քո՝ խաղաղութե յանզուեալ։ և առաջնորդեալ սմա ի ձեռն հրեշտակին խաղաղութե ի յօթեւանս սրբոց առաջնորդ։ Զի դու ես ՟Տր ՟Այ մեր, և քեզ վայել է փառք՝ իշխանութի և պատիւ այժմ և միշտ։

Հոգւոյդ։ Սբ հանգ։ ՟Քս որդի։ Հայր մեր։

Ապա ի Չորրորդ Առաւօտուն։ Եւ ասեն Շարական ՟Դ․ Ողբերւր անմահութե բղխեալ ի բեթա։ Երէց ասէ։

Ընթերցուած յԵսայեայ Մարգարէէ։

Լուարուք ինձ կղզիք, և ունկն դիք հեթանոսք։ յետ բազում ժամանակաց հաստատեսցի այդ ասէ ՟Տր։ յարգանդէ կոչեաց զիս ՟Տր․ և յո- րովայնէ մօր իմոյ կարդաց զանուն իմ։ Եդ զբերան իմ իբրև զսուսեր սուր․ և ՟Է հովանեաւ ձեռին իւրոյ թաքոյց զիս։ եդ զիս իբրև զնետ ընտիր, և ի կապարճս իւր թաքոյց զիս։ Եւ ասէ ցիս․ ծառայ իմ ես դու․ և ես ի քեզ փառաւորեցայց։ Եւ ասեմ, ի զուր ուրեմն վաստակեցի ի տարապարտու․ յոչինչ ետու

Քահանայաբար ասելոյ ։

Ետու զզօրութիւն իմ ․ վն այնորիկ իրաւունք իմ ՚ի տնէ ․ եւ վաստակք իմ առաջի այ իմոյ ։ Այժմ արդ այսպէս ասէ Տր Այ, որ ստեղծ զիս յորովայնէ ծառայ իւր ․ ժողովել զյակոբ եւ զիսրայէլ առ ինքն ․ ժողովեցայց, եւ փառաւորեցայց առաջի տն ․ եւ Այ իմ է ինձ զօրութիւն ։ Այժմ ասէ ցիս ․ մեծ է քեզ այդ՝ կոչելդ քեզ ծառայ իմ ․ հաստատել զազգն յակոբու՝ եւ զցրուեալսն իսրայէլի դարձուցանել ․ ահաւադիկ ետու զքեզ յուխտ ազգի՝ եւ ՚ի լոյս հեթանոսաց ։

Պօղոսի առաքելոյն ՚ի կորնթացւոց առաջնոյ թղթոյն է՝ ։

Արդ՝ զխորհուրդ մի ասեմ ձեզ ։ ամենեքեան ննջեսցուք, այլ ո՛չ ամենեքեան նորոգեսցուք ։ Յանկարծակի յական թօթափել ՚ի փող յետին ․ քանզի փող հարկանի ․ եւ մեռեալք յարիցեն առանց ապականութեան ․ եւ մեք նորոգեսցուք ։ Զի պարտ է ապականութեանս այսմիկ զգենուլ զանապականութիւն ․ եւ մահկանացուիս այսմիկ ըզգենուլ զանմահութիւն ։ Այլ յորժամ մահկանացուս այս՝ զգեցցի զանմահութիւն, եւ ապականացուս զանապականութիւն, յայնժամ եղիցի բանն՝ որ գրեցաւ ․ եթէ ընկլաւ մահ ՚ի յաղթութիւն ։ Ո՞ւր է մահ յաղթութիւն քո ․ ո՞ւր դժոխք խայթոց քո ։ Խայթոց մահու մեղք են, եւ զօրութիւն մեղաց օրէնք ։ Այլ շնորհք Այ՝ որ ետ մեզ զյաղթութիւն ՚ի ձեռն տն մերոյ Յի Քի ։ որում փառք յաւիտեանս ամէն ։

Ալէլուիա ։ Տո՛ւր զօրութիւն ծառայի քո՝ ։

Աւետարանն որ ըստ Յոհաննու ։

Ես եմ լոյս աշխարհի ․ որ գայ առ իս՝ ՚ի խաւար մի՛ մնասցէ ․ այլ ընկալցի զլոյսն կենաց ։ Այժ

եթէ

Ի տանիլն յեկեղեցին, Ի Չորրորդ Հանգիստն։

Եթէ որք լուիցեն բանից իմոց և ոչ պահիցեն, ես ոչ դատեմ զնա. քանզի ոչ եկի թէ դատեցից զաշխարհ. այլ զի փրկեցից զաշխարհ։ Որ անարգէ զիս, և ոչ ընդունի զբանս իմ, գոյ՝ որ դատէ զնա. բանն, զոր ես խօսեցայ, նա դատէ զնա յաւուրն յետնում։ Զի ես յանձնէ իմմէ ոչ խօսեցայ. այլ որ առաքեացն զիս Հայր, նա ետ ինձ պատուէր՝ զինչ ասացից՝ կամ զինչ խօսեցայց։ Եւ գիտեմ, եթէ պատուէրն այն կեանք են յաւիտենականք։ Արդ՝ զոր ես խօսիմ, որպէս պատուիրեաց ինձ Հայր, այնպէս խօսիմ։

Սարկաւագն քարոզէ, Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ։ Եւ քահանայն ասէ Գ Տէր ողորմեա։

Եւ ասէ զԱղօթս։

Ա հոգւոց և ստեղծիչ մարմնոց. որ զմահ խափանեցեր և զսատանայ կործանեցեր՝ և աշխարհի կեանս պարգևեցեր։ Հանգո՛ զհոգի ծառայիս քո (այս անուն քահանայիս) ի տեղւոջ լուսոյ և ի տեղւոջ հանգստեան՝ ուստի փախուցեալ են ամենայն ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք։ Եւ ամենայն մեղաց առ ի սմանէ գործելոց՝ ներողամիտ արասցես. եթէ բանիւ՝ կամ գործով կամ մտածութեամբ. դու որպէս բարերար և ողորմած և մարդասէր Աստուած՝ թողութիւն շնորհեա սմա։ Վասն զի ոչ է մարդ՝ որ կեցցէ և ոչ մեղիցէ. զի դու միայն ես առանց մեղաց. և արդարութիւն քո արդարութիւն յաւիտենից՝ որ ոչ անցանէ. և բանք քո ճշմարիտ են։ Զի դու ես կեանք և յարութիւն ամենայն ննջեցելոց։ Եւ քեզ վայելէ փառք՝ իշխանութիւն և պատիւ այժմ և"։

Հոգւոց"։ Վասն հանգու"։ Քրիստոս որդի" Հայր մեր"։

Եւ

Քահանայաթաղ առնելոց։

Նոյն բառնան քահանայքն, և բերեն ի դուռն Սրահի եկեղեցւոյն։ Իսկ թէ սրահ ունիցի, այսինքն ժամատունն, ածցեն յանդիման Դրան եկեղեցւոյն ի բացեայ։ Նոյն այս կանոն կատարի։ Շարականէ կ,

Որ որդիդ ես և բանդ ած։ Տն շարական Ծածկի և Տն խնայէ։ Սաղմոս ԼԳ, Այս աղքատ կարդաց առ Տր։ Օրհնեցից զՏր յամ ժամ։

Ընթերցուած Յեսուայ որդւոյ Նաւեայ։

Եւ պաշտեաց Իսրայէլ զՏր զամ աւուրս Յեսուայ. և զամ աւուրս ծերոցն՝ որք ձգեցին զժամանակս ընդ Յեսուայ. որք և տեսին զամ գործս Տն՝ զոր արար Իսրայէլ։ Եւ եղև յետ այսորիկ մեռանիլ Յեսուայ որդւոյ Նաւեայ ծառայի Տն, հարիւր և տասն ամաց։ Եւ թաղեցին զնա առ սահմանօք ժառանգութեան իւրոյ ի Թամնասարար ի լերինն Եփրեմայ հիւսիսոյ. լերինն Գայասու։ Եւ անդ եդին ընդ նմա ուր թաղեցին զնա առ ի յիշատակ՝ զսուրսն քարեղէնս. որովք թլփատեաց Յեսու զորդիսն Իսրայէլի ի Գաղգաղայ. յորժամ եհան զնս յերկրէն Եգիպտացւոց ոպ հրամայեաց Տր. և անդ են մինչև ցայսօր ժամանակի։ Եւ զոսկերսն Յովսեփու հանին որդիքն Իսրայէլի յԵգիպտոսէ. և թաղեցին զնա ի Սիկիմ, ի բաժնի ագարակին զոր ստացաւ Յակոբ յամօրհացւոցն բնակելոցն ի Սիկիմ որոջաց հարիւրոց։ և ետ զայն Յովսեփայ ի բաժին։ Եւ եղև յետ այսորիկ վախճանել Եղիազարու քահանայի որդւոյ Ահարոնի. և թաղեցաւ ի գաբաաթ

փե

’Ի տանիլն յեկեղեցին, ’ի դրան Գաւթին։

փենեէսի որդւոյ իւրում, զոր ետ նմա ’ի լերինն եփրե-
մայ։ Յաւուրսն յայնոսիկ առեալ որդւոցն Իսրայէլի
զտապանակ ուխտին Այ շրջեցուցանէին ընդ իւրեանս։
Այն քահանայացաւ փենեէս փոխանակ եղիազարու հօր
իւրոյ. մինչև մեռաւ և թաղեցաւ յիւրում գաբաաթ։
Այն որդիքն Իսրայէլի դնային իւրաքանչիւր ’ի տեղիս
իւրեանց՝ և իւրաքանչիւր ’ի քաղաքս իւրեանց։

Ողբերգութիւն Երեմիայ Մարգարէի.

Յիշեա՛ Տէր՝ որ ինչ անցք անցին ընդ մեզ. նայեա՛ց, և
տես զնախատինս մեր։ Ժառանգութիւն մեր դար-
ձաւ յօտարութիւն. և բնակութիւն մեր ’ի նչդեհութիւն։
Որբ եղաք՝ և ո՛չ գոյր մեր հայր. մարք մեր իբրև այ
րիք ’ի ժամանակաց մերոց։ Զջուր մեր գնոյ արբաք.
և փայտն մեր առանց փոխանակի։ Այլ ’ի վզ պարա-
նոցի մերոյ՝ հալածականք եղաք. և ո՛չ գտաք հան-
գիստ։ Ձեռնամփոփք եղեն եգիպտացիքն՝ և ասորեստա
նեայք, յագեցուցանել հացիւ։ Հարքն մեր մեղան.
և չիք ուրեք ’ի միջի. և մեղս հարցն ընդ մեզ ելին։
Ծառայք տիրեցին մեզ. և այն որ փրկէրն զմեզ ’ի ձե
ռաց նց, չիք ուրեք ’ի միջի։

Պետրոսի առաքելոյն ’ի կաթուղիկեայց առաջինն Բղ"։

Օրհնեալ է Ած և Հայր Տն մերոյ Յի Քի. որ ըստ
բազում ողորմութեան իւրում ծնաւ զմեզ վերստին
’ի յոյսն կենդանի. ’ի ձեռն յարութեան Յի Քի ’ի մե-
ռելոց։ Յանեղծ՝ և յանարատ՝ և յանթառամ ժառան
գութիւնն՝ որ պահեալ է յերկինս ձեզ։ Որք զօրութեամբն
Այ պահեալ էիք հաւատովք ’ի պատրաստեալ փրկու-
թիւնն, յայտնել ’ի յետին ժամանակի։ Որով ուրախ
լի

Քահանայաբար ասելոյ։

լինիջիք՝ որք այժմ սակաւ ինչ ըստ պատշաճի իրացդ-տրտմեալ էք ՚ի պէսպէս փորձութիւնս ։ Զի հանդէս ձե-րոյ հաւատոցն առաւել քան զոսկի կորստական պատուականէ, որ հրով փորձեալ գտանէ ՚ի գովութի̅ և ՚ի փառս, և ՚ի պատիւ յայտնութեա̅ն Յի̅ Քի̅ ։ Զոր ոչն տեսիք՝ և սիրեցիք. ընդ որ այժմ ոչ հայեցեալք՝ բայց հաւատայիք. և ուրախ էք անճառ և փառաւորեալ խըն-դութեամբն ։ Ընկալեալ զկատարումն հաւատոյն ձե-րոյ զոգւոյն փրկութիւն ։

Ալէլուիայ ։ Տր̅ լոյս իմ և կեանք իմ. ես յումմէ եր-կեայց տր̅ ապաւէն կենաց իմոց ես ։

Աւետարան որ ըստ Յօհաննու ։

Զայս խօսեցայ ը̅ ձեզ մինչ առ ձեզս եմ։ Իսկ մխիթարիչն հոգին սբ̅ զոր առաքեսցէ հայր յանուն իմ, նա ուսուսցէ ձեզ զա̅մ. և յիշեցուսցէ զա̅մ, զոր ինչ ասացի ձեզ։ Զխաղաղութի̅ թողում ձեզ. զխաղաղութի̅ զիմ տամ ձեզ. ո՛չ ո̅պ աշխարհս տայ՝ տամ ես ձեզ։ մի՛ խռովեսցին սիրտք ձեր. և մի՛ զանգի տեսցեն ։ Լուայք, զի ասացի ես ձեզ՝ թէ երթամ, և գամ առ ձեզ։ եթէ սիրէիք զիս, ապա ուրախ լեալ էր ձեր՝ թէ ես առ հայր երթամ. զի հայր իմ մեծ է քան զիս ։ Եւ այժմ ասացի ձեզ մինչչև եղեալ. զի յորժամ լինիցի հաւատասջիք ։ Ո՛չ ևս այլ շատ խօսեցայց ընդ ձեզ։ գայ իշխան աշխարհիս այսորիկ՝ և յիս ինչ ո՛չ գտանէ ։ Այլ զի ծանիցէ աշխարհ, եթէ սիրեմ զհայր։ և ո̅պ պատուիրեաց ինձ հայր՝ այնպէս առնեմ։ Ա՛ն ա-րի՛ք գնասցուք աստի ։

Քարոզէ Սարկաւագն, Ա̅ծ ուղղելոյ զգնացս մեր"։

Դատանիքն ջենեւլեգյին, Դերրան Պռաշխն ։

Ապա ասէ զԱղօթս ։

Տէ՛ր փրկիչ մեր մարգարէք · կարգամբ զմեծ և զամենասուրբ անուանդ քո ։ Հանգո՛ հո֊ գի ծառայիս քոյ (այս անուն) քահանայի · ա֊ ղաչանօք սրբուհւոյ ածածնին և ամ սրբոց , և որք մի֊ աբանեալ հայցեմք ի քո առատ մարդասիրութենէդ՝ շնոր հել զթողութիւն մեղաց սորա ։ Զի դու ես շնորհեցեր ծառայի քում առաջնորդութիւն , հովուել իմաստութ եամբ զժողովուրդս քո ։ Նոյն ինքնդ և այժմ շնորհեա սմա ընդ երջանիկ հայրապետացն վերադասիլ · զի ընդ նոսին փառաւորեսցէ զհայր և զորդի և՛ ։

Խաղաղականն ասենյան ։ Ո՛ւ երկիրպագանեսցուք ։

Մի՛ Տէր ամենեցուն և արարիչ ։ Մի՛ Աստուած ամենեցուն՝ և տէր , և հայր , և ուղղիչ ։ Մի՛ կենաց և մահու տէր ։ Մի՛ հոգւոց մերոց շտեմարան և բարեգործ · որ առնես զամ , և յօրինեալ փոփոխես արուեստաւոր բանիւդ ըստ ժամանակի՝ որպէս դու ինքնին գիտես խորին քոյով իմաստութեամբդ և մատակարարութեամբ ։ Ընկա՛լ և այժմ զաղաչանս մեր , և զհոգի սորա հանգո՛ ընդ սուրբս քո ի խո րանս սիրողաց անուան քոյ · և արժանի՛ արա վերստին նորոգման · ի լսել զձայն ածային փողոյն՝ ընդ առաջ ելանել քեզ փառօք · զի կայցէ առաջի քոյ զուարթե րես և պայծառ ։ Ընկալցիս և զմեզ յետոյ ի դէպ ժա մանակի , շնորհօք և մարդասիրութեամբ տն մերոյ և փրկի չին ՅՍԻ ՔՍԻ · որում վայել է փառք իշխա՛ ։

Ապա ասէն Քարոզան զկ , Այսօր անձառ լուսոյն ծա՛ .

Վէյ տուն ։ և Դէյ տուն Ասրգ ։

Հոգւոց՛ ։ Սրբ հանգոյ՛ ։ Քս որդի՛ ։ Հայր մեր՛ ։

41 Ապ

Այժմ Բանդ անհասանելին, եւ բերեն ՚ի լիաստան..., կամ... ա... Պետրոսն եկեղեցւոյն։ Այժմ աւէն Շնորհաց Տէր, Հայր բարեգութ՝։ Դու շնորհաց Աղբիւր, եւ Դու խաղ...։ Սաղմոս ձայն եւ հինգ, Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո՝։ Դատեա զիս Տէր, զի ես յամբծութեան՝։

Ընթերցուած յԵրրորդ Թագաւորութեանց։

Եւ մերձեցան աւուրք դաւթի մեռանելոյ. եւ պատուիրեաց որդւոյ իւրում սողոմոնի՝ եւ ասէ։ Ես երթամ ճանապարհ ամ. երկրի. եւ դու զօրասցիր՝ եւ եղիցիս այր։ Եւ պահեսցես զպահպանութիւնս տն. այ քո՝ գնալ ՚ի ճանապարհս նր. եւ պահել զպատուիրանս նր՝ եւ զիրաւունս՝ եւ զդատաստանս՝ եւ զվկայութիւնս նորա, զգրեալս յօրէնս մովսէսի. զի ՚ի միտ առնուցուս՝ զոր առնիցես. ըստ ամի զոր պատուիրեմ քեզ։ Զի հաստատեսցէ տր զբան իւր. զոր խօսեցաւ մի իմ եւ ասէ. եթէ պահեսցեն որդիք քո զճանապարհս իւրեանց գնալ առաջի իմ ճշմարտութբ. յամ սրտէ իւրեանց՝ եւ յամ անձնէ իւրեանց ոչ գնասցէ դու, ասէ. մի՛ պակասեսցի քո այր յաթոռոյ իսրայէլի։ Եւ ննջեաց դաւիթ ընդ հարս իւր՝ եւ թաղեցաւ ՚ի քաղաքի դաւթի։

Ընթերցուած յԵզեկիէլէ Մարգարէէ։

Եւ տարաւ զիս ՚ի սրահն ներքին. եւ ահա երկու պատշգամբք էին ՚ի ներքոյ սրահին. մի ՚ի հարաւոյ դրանն որ հայէր ընդ հիւսիս, եւ հանէր ընդ հարաւ. եւ միւս ընդ հիւսիսոյ դրանն որ հայէր ընդ հարաւ, եւ

հա

՚ի Քահանայօրհնէն , կամ Տէրն Նորան Եկեղեցւոյն ։

հանէր ընդ հիւսիսի ։ Եւ ասէ ցիս · այս պատշգամբ՝ որ հայի ընդ կողմն հարաւոյ՝ քահանայից եղիցի , որք պահեն զպահպանութիւն տանն ։ Եւ պատշգամբն՝ որ հայի ընդ հիւսիսի՝ քահանայից եղիցի , որք պահեն զպահպանութիւն սեղանոյն · Նոքա են որդիքն Սադովկայ՝ որք մերձենան ՚ի ղեւտացւոց անտի պաշտել զՏր ։

Դարձեալ յԵզեկիէլ Մարգարէէ ։

Եւ եղիցի ՚ի մտանել քահանայիցն ընդ դրունս սրահին ՚ի ներքնոյ՝ զգեցցին զպատմուճանս կտաւիս · և մի զգեննուցուն ասուիս ՚ի պաշտաման իւրեանց ՚ի դրրանն սրահին ներքնոյ ։ Եւ խոյրս կտաւիս ունիցին ՚ի գլուխս իւրեանց · և անդրավարտիս կտաւիս յերանս իւրեանց · և ոչ զգեննուցուն ՚ի քրտնութն ։ Եւ յելանելն իւրեանց յարտաքին սրահն առ ժողովուրդն՝ մերկասցին զպատմուճանս իւրեանց որով պաշտիցենն · և դիցեն զնս ՚ի սենեակս սրբութեան , և զգեցցին այլ պատմուճանս · և մի սրբեսցեն զժողովուրդն պատմուճանօք իւրեանց ։ Եւ զգլուխս իւրեանց մի գերծցեն · և զվարս իւրեանց մի անսարսեսցեն · ծածկելով ծածկեսցեն զգլուխս իւրեանց ։ Եւ զգինի մի արբցեն ամ քահանայքն ՚ի մտանելն իւրեանց ՚ի ներքին սրահն ։

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց Թղթոյն է ընթերցուած ։

Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց · և հպատակ կացէք նց ։ Զի նոքա տքնին վս ոգւոց ձերոց՝ որպ թէ համարս տալոց իցեն ընդ ձեր · զի խնդութբ արասցեն զայն՝ և մի յոգւոց հանելով ։ զի այն ոչ յօգուտ ձեր է ։ Աղօթս արարէք վասն մեր · զի հաստատեալ գիտեմք եթէ բարւոք միտս ունիմք · յամի կամիմք բարւոք գնացս ցուցանել ։ Եւ առաւել աղաչեմ , զի զայն առ

առնիցէք, զի վաղագոյն պատսպարեցայց ձեզ: Այլ Ած խաղաղութե՝ որ էհան ի մեռելոց զհովիւն հօտից ըզ մեծն արեամբ յաւիտենականի ուխտին զՏր մեր ՅՍ ՔՍ. հաստատեսցէ զձեզ ի գործս բարուտ՝ առնել զկամս նր: և արասցէ ի մեզ զհաճոյսն առաջի իւր ի ձեռն ՅԻ ՔԻ. որում փառք յաւիտեանս: Ամէն:

Ալէլուիա: Յիշեաց ողորմութե իւրով զյակոբ. ճըշմարտութե իւրով զուխտն իւր. և տեսին":

Աւետարանն որ ըստ Յոհաննու:

Զայս խօսեցայ ընդ ձեզ. զի ուրախութին իմ ի ձեզ իցէ. և ձեր ուրախութին լցեալ եղիցի: Այս է պատուէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս, որպ և ես զձեզ սիրեցի: Մեծ ևս քան զայս սէր ոչ ոք ունի եթէ զանձն իւր դիցէ ի վր բարեկամաց իւրոց: Դուք բարեկամք էք իմ. եթէ առնիցէք՝ զոր ես պատուիրեմ ձեզ: Ոչ ևս կոչեմ զձեզ ծառայս, զի ծառայն ոչ գիտէ զինչ գործէ տէրն նր: այլ զձեզ կոչեցի բարեկամս, զի զամ, զոր լուայ ի Հօրէ իմմէ ծանուցի ձեզ: Ոչ եթէ դուք ընտրեցիք զիս. այլ ես ընտրեցի զձեզ, և եդի զձեզ. զի դուք երթայցէք՝ և պտղաբերք լինիցիք. և պտուղն ձեր կայցէ. և զորինչ խնդրիցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ, տայցէ ձեզ. Զայս պատուիրեմ, զի սիրեսջիք զմիմեանս: Եթէ աշխարհ զձեզ ատեայ. գիտասջիք զի նախ զիս ատեաց: Եթէ յաշխարհէ աստի էիք՝ աշխարհ զիւրն սիրէր արդեօք: բայց զի չէք յաշխարհէ, այլ ես ընտրեցի զձեզ յաշխարհէ, վն այնորիկ ատեայ զձեզ աշխարհ: Յիշեցէք զբանն՝ զոր ասացի ձեզ. եթէ ոչ է ծառայ մեծ քան զՏր իւր: Եթէ զիս հալածեցին.

ապա

Ի Յովհաննէ, կամ Գրչ Յորան Եկեղեցւոյն։

ապա և զձեզ հալածեսցեն. եթէ զբանն իմ պահեցին, ապա և զձերն պահեսցեն։ Այլ զնոյնս արասցեն ընդ ձեզ վասն անուան իմոյ. զի ոչ գիտեն զայն՝ որ առաքեացն զիս։ Եթէ չէր եկեալ և խօսեցեալ ընդ նոսա, մեղ ինչ ոչ գոյր նոցա. բայց արդ չիք պատճառ վասն մեղաց իւրեանց։ Որ զիս ատեայ՝ և զՀայրն իմ ատեայ։ Եթէ զգործսն չէր գործեալ ի նոսա՝ զոր ոչ այլոք գործեաց, մեղ ինչ ոչ գոյր նոցա. բայց արդ տեսին, և ատեցին. և զիս և զՀայր իմ. Այլ զի լցցի բանն, որ յօրէնս նոցա գրեալ է. թէ ատեցին զիս ի տարապարտուց։ Այլ յորժամ եկեսցէ Մխիթարիչն՝ զոր ես առաքեցից ձեզ ի Հօրէ՝ զՀոգին ճշմարտութեան որ ի Հօրէ ելանէ, նա վկայեսցէ վասն իմ։ Այլ և դուք վկայէք՝ զի ի սկզբանէ ընդ իս էք։ Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի գայթագղիցիք։ Ի ժողովրդոց իւրեանց հանիցեն զձեզ. այլ եկեսցէ ժամանակ՝ զի ամենայն որ սպանանիցէ զձեզ՝ համարեսցի պաշտօն մատուցանել Աստուծոյ։ Այլ զայն արասցեն ընդ ձեզ. քանզի ոչ ծանեան զՀայր՝ և ոչ զիս։ Այլ և զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի յորժամ եկեսցէ ժամանակն՝ յիշիցէք՝ թէ ես ասացի ձեզ։ Զայս ի սկզբանէ ոչ ասացի ձեզ. քանզի ընդ ձեզ էի։

Առաքելական քարոզէ։ Մի՛ դատանելոյ մեզ զշնորհս։
Առ ժամհանգչին ասէ զԱղօթս։

Հովուապետ բարի Քրիստոս, գտող կորուսելոյ և խնդրող մոլորելոյս. որ եղեալս քեզ անուանեցեր ի հօտէ ընտրեաց զքո առաքելոյն. և նոքօք որսայեր զմարդիկ ի կեանսն յաւիտենականս։ Այժմ ծառայս քո որ աւանդեցաւ զհօտի իւր ի ձեռս քո. զի և սա է

 ղև

դու փրկեր ՚ի շատէ սպասաւոր Տէրութեդ քո, յիշեա՛ ըզ հոգի սորա և զմարմին որ կայ առաջի քոյ. և թող զմեղս սորա զկամայ և զակամայ. ՚ի ձեռն կենդանաբեր խաչի քո. բարեխօսութբ սրբոյ հօրս ամենայն և ամ սբց քոց. և հա՛ն մասն և բաժին ընդ սբս քո յարքայութն քում։ Զի զմեզ արժանաւորեա՛ գոհանալով փառաւորել զՀայր և զորդի և զսբ հոգին. այժմ և միշտ և"։

Խաղաղութիւն ամենեցուն։ Այ երկիր պագեսցուք։

Պարձեալ մատուցանեմք զմաղթանս մեր առ դրունս սբյ եկեղեցւոյ քոյ քահանայքս և ժողովուրդքս. մի՛ թողուր զմեզ ՚ի ձեռանէ քումմէ. և մի՛ տար օտարաց զժառանգութիւն քո։ Զի ՚ի կատարման ծառայիս քո (այս անուն) բաժանեցի, յանձն արա զմեզ ուղղափառ հաւատալի։ զի ՚ի կեանս սորա դու պահեիր զմեզ և պահեցեր. և այժմ ես ՍԲ հոգեովդ և խաչիւդ քով սրբով պահեա՛ զմեզ։ Զի զմեր բարեկայուս մեր որ փոխեցաւ ՚ի մեղօք ՚ի յաշխարհէս՝ դատաստանին սորա և անթառամին սբ հայ բարեպաշտացն և հարց. զի ահաւասիկ հրաժարեալ ՚ի մեղօք ուղղութեամբ՝ և ըստ հրամանի քում դառնայ ՚ի հող ուստի առեալ էր զնա։ Դու տէր եղիցիս պահապան՝ մարմնոյ սբյ, և հանգիստ հոգւոյ սորա. յոյս յարութն ՚ի մեծի աւուր գալստեանն, յորժամ գալ ժողովել զկենդանիս և զմեռեալս. Թն յոյս մեր և ապաւէն պարծանաց հաւատացելոց քոց։ Յիշեա՛ զծառայս քո զվախճանեալս. և կայծ յաջակողմեանդ քո՝ ընդ սիրելիս երկնաւոր հօրդ ՚ի ժառանգութե, ՚ի ձեռն նորոգող հոգւոյդ սբյ։ Որում վայել է փառք ՚ի շնո"։

Ասէ աւետ։ Ասից զօրհնեան մաւեսի։ Ձեզ տան. Ողջ փառ.

Ասէ։ Հոգւոյ"։ Հայր մեր"։

Ապա

Տաւնին յիշեցելին, և ամէն ընթերցուածն։

Այս փարեալ ի գլուխն եկեղեցւոյն՝ սաղմոսեն Սաղմոս, Բացէք ինձ զդրունս արդարութե։ Խոստովան եղերուք տն զի քաղցր է։ Մինչև ցայն տեղին որ ասէ, Բացէք ինձ զդրունս։ Այլ բանան զդրունս տաճարին յիշեցելին, ասելով շարական, Զօրութիւն քո զդրունսն բաց մեզ։ Մտանին և խաչին, և փառք։ Այլ դնեն ի մէջ եկեղեցւոյն առաջի բեմին, և այս կանոն կատարի։

Ընթերցուած ի Ծննդոց։

Ել Յակոբ ի Ջրհորոյ երդման. և գնաց ի Խառան։ Եւ եհաս ի տեղին մի և ննջեաց անդ. զի արև ի մուտս էր։ և եառ ի քարանց տեղւոյն. եդ ընդ սնարս իւր և ննջեաց ի տեղւոջն յայնմ։ Եւ ետես երազ. և ահա սանդուղք հաստատեալ յերկիր. որոյ գլուխն հասանէր յերկինս. և հրեշտակք այ ելանէին՝ և իջանէին ընդ նա։ Եւ տր հաստատեալ կայր ի նմա. և ասէ. Ես եմ Տր Ած աբրահամու հօր քո և Ած իսահակայ. մի երկնչիր. զի զերկիրդ յորում դու ննջես քեզ տաց զդա՝ և զաւակի քում։ Եւ եղիցի զաւակ քո իբրև զաւազ երկրի. և ընդարձակեսցի ի ծովակողմն. և ընդ արևելս. և ընդ հիւսիս. և ընդ հարաւ. և օրհնեսցին ի քեզ ամ ազգք երկրի՝ և ի զաւակի քում։ Եւ ես ահաւասիկ ընդ քեզ եմ պահել զքեզ յամ ճանապարհս քո՝ յոր գնասցես. և դարձուցից զքեզ յերկիրս յայս. զի ոչ թողից զքեզ մինչև արարից զամ ինչ զոր խօսեցայ ընդ քեզ։

Ըն

՚Ի Քահանայական աւծելոյ ։

Ընթերցուած յԵսայեայ Մարգարէէ ։

Իբրեւ զի գեղեցիկ են ՚ի վր լերանց ոտք աւետա-րանչի համբաւոյն խաղաղութե. իբրեւ աւետարան-չի բարութեց. զի լսելի արարից զփրկութի քո. ասել ցսիոն թէ թագաւորեսցէ քեզ այ։ Զի ձայն պահա-պանաց քոց բարձրացաւ. եւ ՚ի նոյն բարբառ առ հասա-րակ ցնծասցեն. զի դէմ յանդիման տեսցեն զծառա-նալն՝ յորժամ ողորմեսցի Տր սիոնի։ Երինք գոչեսցեն աւերակըն համբերձ երուսաղէմի զփրկութի. զի ողոր-մեցաւ նմա Տր. եւ փրկեաց զերուսաղէմ։ Յայտնի արասցէ Տր զբազուկ իւր սբ առաջի ամ ազգաց. եւ տեսցեն ամ ծագք երկրի զփրկութի այ մերոյ։

Ընթերցուած ՚ի Մաղաքիա Մարգարէէ ։

Այսպէս ասէ Տր. ուխտն իմ, որ էր ընդ նմա կենաց եւ խաղաղութե. եւ ետու նմա զերկիւղ երկնչել յինէն՝ եւ յերեսաց անուան իմոյ խորշել։ Օրէնք ճշմար-տութե էին ՚ի բերան նր. եւ անիրաւութի ոչ գտաւ ՚ի շրթունս նր. խաղաղութբ եւ ուղղութբ գնաց ընդ իս. եւ զբազումս դարձոյց յանիրաւութենէ։ Զի շրթունք քահանային զգուշասցին գիտութե. եւ օրէնս խնդրես-ցեն ՚ի բերանոյ նր. զի հրեշտակ տն ամենակալի է։

Պետրոսի առաքելոյն ՚ի կաթուղիկեայց առաջին ԵՂԲ"։

Զերիցունս այսու հետեւ աղաչեմ. իբրեւ երիցակից՝ եւ վկայ չարչարանացն Քի. որ եւ հանդերձելոյ փառացն յայտնելոյ հաղորդ։ Արածեցէք՝ որ ՚ի ձեզ հօտդ է այ. վերակացու լինիք՝ մի իբրեւ ակամայ՝ այլ կամաւ յայ։ մի փոշաքաղութբ. այլ յօժարութբ։ Մի իբրեւ տիրելով վիճակացն. այլ լինիք օրինակ հօ-

տին

Ի Դշ. Եկեղեցւոյն ընթերցի:

տին. զի յերևիլ հովուապետին ընդունիցիք զանթառամ փառացն պսակ:

Ալէլուիա: Ողորմեա՛ ինձ Ած ըստ մեծի ողորմութ":

Աւետարան որ ըստ Յոհաննու:

Բայց արդ երթամ ես առ առաքիչն իմ. և ոչոք ի ձէնջ հարցանիցէ ցիս, թէ յո՞ երթաս: Այլ զի զայս խօսեցայ ընդ ձեզ՝ տրտմութիւն ելից զսիրտս ձեր: Այլ ես զճշմարիտն ասեմ ձեզ. լաւ է ձեզ եթէ ես երթամ. զի եթէ ես ոչ երթայց՝ մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ. ապա եթէ երթամ, առաքեցից զնա առ ձեզ: Եւ նա եկեալ յանդիմանեսցէ զաշխարհ, վն մեղաց՝ և վն արդարութե՝ և վն դատաստանի: Վն մեղաց՝ զի ոչ հաւատան յիս: Վն արդարութե՝ զի առ հայր իմ երթամ. և ոչ ևս տեսանէք զիս: Վն դատաստանի՝ զի իշխան աշխարհիս այսորիկ դատապարտեալ է: Եւս բազում ինչ ունիմ ասել ձեզ՝ այլ ոչ կարէք հանդարտել այժմիկ: Յորժամ եկեսցէ նա հոգին ճշմարտութեան՝ առաջնորդեսցէ ձեզ ամ ճշմարտութբ. զի ոչ եթէ յանձնէ ինչ խօսիցի. այլ զոր լսիցէ՝ խօսիցի. և զգալոցն պատմեսցէ ձեզ: Նա զիս փառաւորեսցէ՝ զի յիմմէ անտի առնուցու և պատմեսցէ ձեզ: Զամ ինչ զոր ունի հայր՝ իմ է. վն այնորիկ ասացի ձեզ, թէ յիմմէ անտի առնուցու և պատմեսցէ ձեզ. փոքր մի, և ոչ ևս տեսանէք զիս. և ապա սակաւիկ մի, և տեսանիցէք զիս. և զի ես երթամ առ հայր: Ասէին ոմանք յաշակերտացն ցմիմեանս. զի՞նչէ այս՝ զոր ասէս ցմեզ. թէ փոքր մի, և ոչ տեսանէք զիս. և դարձեալ սակաւիկ մի, և տեսանիցէք զիս. և թէ ես առ հայր երթամ: Եւ ասէին

Ի [illegible] պահելոյ։

զինչ իցէ այն փոքր մի ս ասէ. չգիտեմք զինչ խօսի։ Գիտաց Յս՟ եթէ կամէին զնա հարցանել. և ասէ ցնս՟ վն՟ այդորիկ խնդրէք ը՟ միմեանս՝ զի ասացի թէ փոքր մի, և ոչ տեսանէք զիս. և դարձեալ սակաւիկ միւս ևս, տեսանիցէք զիս։ Ամէն ամէն ասեմ ձեզ. զի լայջիք և ողբասջիք դուք՝ և աշխարհ խնդասցէ. դուք տրտմեսջիք՝ այլ տրտմութիւնն ձեր յուրախութի՟ եղիցի։ Կին յորժամ ծնանիցի՝ տրտմութի՟ է նմա, զի հասեալ է ժամ նորա. այլ յորժամ ծնցի զմանուկն, ոչ ևս յիշէ զնեղութիւնն վն՟ խնդութե՟ն. զի ծնաւ մարդ յաշխարհ։ Եւ դուք այժմ տրտմութի՟ ունիք. այլ դարձեալ տեսից զձեզ՝ և ուրախ լիցին սիրտք ձեր. և զուրախութի՟ն ձեր՝ ոչոք հանիցէ ՚ի ձէնջ։ Եւ յայնմ աւուր զիս ինչ ոչ հարցանիցէք. ամէն ամէն ասեմ ձեզ՝ զի զոր ինչ խնդրիցէք ՚ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ ձեզ։ Մինչև ցայժմ ոչինչ խնդրեցիք յանուն իմ, խնդրեցէք, և առնուցուք. զի ուրախութի՟ն ձեր լցեալ եղիցի։ Զայս առակօք խօսեցայ ը՟ ձեզ. եկեսցէ ժամանակ՝ յորժամ ոչ ևս առակօք խօսեցայց ընդ ձեզ. այլ յայտնապէս զՀօրէ պատմեցից ձեզ։ Յայնմ աւուր խնդրեսջիք յանուն իմ. և ոչ ասեմ ձեզ՝ եթէ ես աղաչեցից զՀայր վն՟ ձեր։ Զի ինքն իսկ Հայր սիրէ զձեզ՝ զի դուք զիս սիրեցիք. և հաւատացիք, եթէ ես յԱյ՟ ելի։ Ելի ՚ի Հօրէ՝ և եկի յաշխարհ. դարձեալ թողում զաշխարհ, և երթամ առ Հայր։

[illegible]։ Հայր մեր։ [illegible]

Ի Քահանայաբար ասելոյ։

Ապա 'ի հինգերորդին ժամուն 'ի կատարել զհարկ հինգերորդին
աղօթամատոյց, կացցեն չորս քահանայք յաջմէ և յահեկէ
ննջեցելոյն, և ընթերցցեն զչորեսին Աւետարանս բոլո-
րովին, այսինքն՝ զՄատթէոսին, զՄարկոսին, զՂուկա-
սուն, և զՅովհաննուն։ Ապա 'ի վերջն ասել, ասասցեն
Հոգւոյն։ և Հայր մեր։

Ապա մին քահանայն ընդ Աւետարանն, 'ի ժամ աղօթելոյն ասա-
ցէ բերան այս հարկ հատուածի։

Քարոզէ Սարկաւագն,

Վասն քաւութեան և թողութեան մեղաց հոգւոյ հանգու-
ցելոյս, զՏէր աղաչեսցուք։ Վասն առաջնորդելոյ սմա ընդ-
նեղ դուռն անձկացեալ ճանապարհին, զՏէր աղաչեսցուք։
Վասն ընդունելոյ զհոգի սորա 'ի խորանս սրբոց, զՏէր։
Վասն առաջնորդելոյ սմա ընդ առաջ փրկչին, զՏէր։
Վասն դասելոյ սմա յաջակողման դասուն յանբաւ ու-
րախութեան, զՏէր։ Վասն արժանի լինելոյ սմա ան-
թառամ պսակացն, զՏէր։ Վասն պարգևելոյ սմա հան-
գիստ յերկնից արքայութեան, զՏէր։ Վասն վերադա-
սելոյ սմա 'ի տեղի անկելոց հրեշտակացն, զՏէր աղաչեսցուք։
Վասն հոգւոյն։ Ապա ևս։ Զանձինս։ Ողորմեա։

Ապա ասէ զԱղօթս։

Տէր փրկիչ մեր, որ յաւիտենական արա-
րիչ և իշխան հրեշտակաց և մարդկան. դա-
տաւոր կենդանեաց և մեռելոց։ օրհնեմք զքո
մար

՚Ի ժամ ողջունին՝ առաջի Բեթղն :

մարդասիրութեանդ՝ որ մեծ բազում ողորմութեամբ քո՝ ոչ կարացեր անտես առնել զստեղծուածս ձեռաց քոց , զվիրաւորեալս ՚ի բանսարկուէ թշնամւոյն . այլ կամաւ հօր և հաճութեամբ սրբոյ հոգւոյն , խոնարհեցար յարգանդ սրբուհւոյ կուսին . և հրաշափառ ծննդեամբ քով ցանկալին լուծեր զդատակնիքն : Ամենամեծդ Տր՝ որ վասն մեր աղքատացար , փառաւորեմք զքո անճառ թագաւորութիւնդ : զի զկերպարանս ծառայի առեր . և բևեռեցար ՚ի մէջ խաչին . և մեզ և պատուական արեամբ քով զգերեալսն ՚ի ծառայութենէ թշնամւոյն ազատեցեր ՚ի կեանս : Երկրպագութիւն և փառս մատուցանեմք քեզ՝ հովիւ բանաւոր հօտի , որ մեր և փրկիչ Յս Քս . որ զցրուեալսն յանկերպեալ և յանմարմին դիւէն ժողովեցեր առ բնակութիւն սրբոց հրեշտակաց . և պարսպեալ մեզ խաչիդ նշանաւն , կարգեցեր տեսուչ և առաջնորդ՝ հովուել իմաստութեամբ զժողովուրդս քո : Ի կ ծառայս քո՝ զոր շնորհեցեր մեզ առաջնորդ ՚ի ձեռն սրբոց առաքելոց քոց , այսօր հրաժարեցաւ ՚ի մէնջ . և դարձաւ ՚ի հող ըստ հրամանի քում : Արդ մեք ժողովուրդք քո և ծառայք քո՝ ՚ի տաճարի փառաց սրբութեան քոյ աղաչեմք և խնդրեմք ՚ի քէն . բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին և ամենայն սրբոց քոց որք յաւիտենից հաճոյ եղեն քեզ՝ ընկալ զբանս ողջունի սորա ՚ի մէջ եկեղեցւոյս առաջի սրբոյ սեղանոյ քոյ . և հանգո՛ զհոգի ծառայիս քո ՚ի խորանս սիրողաց անուան քոյ : Թո՛ղ սմա Տր ողորմած ըզյանցանս և զմտածութիւնս , որք գործովք և խորհրդովք . զի դու ես միայն կարող ես թողուլ զմեղս : Շնորհեա՛ սմա յարդար դատաւորութեան քում ընդ պետրոսեան աթոռակցութեան վերապատուէիլ : Եւ զմեզ զամենե-

սեան

Մ...ձէ ԵԷ-Թ՛Ն ընթերցի։
սեան օրհնեալ հոգևոր օրհնութեամբ քով. զի սրբեալք ի յանցանաց՝ գոհանալով փառաւորեսցուք զհայր և զոր դի և զսբ հոգին. այժմ և միշտ։

Խաղաղութիւն ամենեցուն։ Ա՟յ երկիր պագէսցուք։

Ի մէջ եկեղեցւոյս և առաջի սրբոյ սեղանոյ քո՝ քեզ երկիր պագանեմք և աղաչեմք զանհաս գթութիւն քո, որ ես առ ամենեսեան երկայնամիտ. Տ՟ր Ա՟ծ մեր։ Ա՟ն կալ տր և այժմ բարերարութեամբ քով զխնդրուածս մեր. և հեղ ողորմութեամբ զառատաբուղխ շնորհս հոգւոյդ սրբոյ ի գանձս յայս պատուականս. որ է տառօք նշանաց քոյ սրբոյ։ Զի ի ձեռն օծմանս այսորիկ զոր յանուն քո օծանեմք սբ խորհուրդ այսուհետև, ընկալցին տր նշան խաչքս ոսկերաց սուրբ զօրութիւն բժշկութեանց. և զհալածումն սատանայական գիւտաց. և մեծ պարծանս կենաց. և յոյս մեծագոյն տր խաղաղականութեան, որ ի հայր և յոր դի և ի հոգին սբ։ Որով ընկալեալ սորա զսբ օծումն, և այգք և ճշմարտապէս գոհակալեսցէ, և ընդ այլ ճշմարիտ հովիւն զբարեբանն յաղթութեան ընկալցի ի քէն Տ՟ր. և մեք սրբովք ուրախացեալ փառաւորես ցէ զհայր և զորդի և զսբ հոգին. Այժմ և։

Ապա ... Մաղմոս ... (?)
...

Օրհնեալ ես տր ամենակալ՝ Հայր տն մերոյ յի քի. որ ըստ բազում ողորմութե քում առեր զմեզ ի հեթանոսաց՝ և անուանեցեր զմեզ ա նուամբ միածնի որդւոյ քո։ Որ մարմնացաւ ի մէջ մեր ընա թենէս. և մահուամբ եբարձ ի միջոյ զմեզ անխծ արքն...

և մահածինս յարութեամբ իւրով. ծնաւ զմեզ ՚ի յոյսն կենդանի յանեղծ և յանարատ ժառանգութիւն և յանթառամ պսակացն ուրախութեան որ պահեալ է մեզ յերկինս: Որոց առհաւատչեայ շնորհեցեր մեզ զՀոգիդ քո մեր՝ որով ընկալաք զշնորհս որդեգրութեան քոյ. որով և դեր յեկեղեցւոջս առաքեալս և մարգարէս և աւետարանիչս՝ հովիւս և վարդապետս. ՚ի հաստատութիւն հաւատոյ, ՚ի գործ պաշտաման փառաւոր անուանդ քոյ, և ՚ի շինուած մարմնոյ սրբելոյ որդւոյ քոյ՝ որ զ գլուխն մեզ առնու : Յոր պատուէ և զծառայս քո (զայս անուն) արժանաւորեցեր, ամբառնալով քոյին շնորհօք ՚ի բարձրագոյն և ՚ի ծայրագոյնն աստիճան առաքելական և քահանայապետական, և ընտրելով զսա ՚ի բազմաց՝ յառաջացուցեր յառաջնորդական շնորհիւ : Եւ կարգեցեր զսա գլուխ և տեսուչ եկեղեցւոյ քումսրբոյ՝ յանձնելով ՚ի սա զամ խորհուրդս զգործս և զպաշտօնս փրկարարս աւանդեցեալս յորդւոյ քումմէ ՚ի մեր եկեղեցիս քոյ: Որպէս զի յիջանել ամենայնոյ իւրոյ հոգւոյդ սրբոյ, և ՚ի ծագիլ պէսպէս շնորհացդ լուսաւորութեանց ՚ի գլուխ, և անտի ՚ի ստորինս տարածեսցի ըստ մարգարէին. ՚ի յլուծն և ՚ի շինուած ըստ իւրաքանչիւրոցն արժանաւորութեան ՚ի փառս ամենասուրբ անուանդ քոյ. և զօրացուցեալ պահպանեսցես մինչև ցայսօր: Զոր և այժմ ըստ արարչագործիր ահամանագրութեան քոյ կոչեցեր ՚ի հանգիստ յերկնաւոր աշխատութեանց ՚ի տրտմալից կենացաց այսորիկ: Արդ ամենայն աղաչեմք զքեզ Հայր գթած՝ ՚ի յարկս փառաց սրբութեան քոյ՝ ուստի բաշխես զքաղցրութիւն կենդանեաց և մեռելոց. զի ողորմեսցիս ծառայիս քոյ այսմիկ, և անտես արասցես զոր ինչ յան-

ցեալ

Կանոնագրքի է յաղագս՝ առաջի Տեառն .

ցեալ իցէ սորա 'ի մարդկային աղտեղութենէ։ Եւ զհեղ_
գութիւն սորա եթէ իցէ լեալ 'ի սպասաւորութե սեղա_
նոյ քոյ՝ մոռասցիս վն մարդասիրութե քոյ։ Կամ թէ ան_
փոյթ արարեալ զկարգաւորեամբ ուրուք, կամ թէ ծու_
լացեալ իցէ քարոզել զպատուիրանս քո 'ի խրատել ըզ
ժողովուրդս քո, զնմ թողցես սմա անոխակալ գթու_
թեամբդ քո. քանզի լեզու բովանդակ սխալանաց սորա
քաղցր և քաղցրաբար շնորհօք քո։ Եւ զմեղս և զանօրէնու_
թիւնս սորա որ վն կարեաց և փառաց մարմնոյ, և կամ վն
սիրոյ և ամօթոյ և երկիւղին մարդկան, մի ես յիշես_
ցես. այլ յոյժ փրկեա զհոգի ծառայիս քոյ. և արժանա_
ւորեա համարձակապէս մտանել առաջի քոյ դէմ յան_
դիման. և ուրախութե կալ յանդիման փառաւոր ա_
թոռոյ քոյ. արդարութե երեւել երեսաց քոյ. յագել
յերեւման մեծի և վայելուչ փառաց քոց. և ցնծալի
բերկրանօք զերկրպագութե ամենասուրբ երրորդութեդ
մատուցանել յօթեվան հանգստեան 'ի տեղւոջ բնա_
կութեան ամց արդարոց. և ընդ նոսին զուարճանալ
ուրախարար յոյսով։ Ընդ որոց և սմա շնորհեսցես ժա_
ռանգութե զարքայութե քն 'ի մերոյ։ Ընդ որում քեզ
հօր բարերարի և հոգւոյդ սբյ վայելէ փառք"։

Խաղաղական ննջեցելոյ։ Մեռելոց պաշտօնէայս .

Տէր թագաւորի անմահի և մարդասիրի, ամենե_
քեան միաբան ամենայորդոր փութով երկրպագութիւն
վերառաքեմք 'ի վր ծառայիս քոյ այսորիկ զոր ընտրե_
ցեր 'ի վիճակ առաքելական. զսեղ ինքնին ընկալեալ
սորա բաժին և ժառանգութիւն կալ առաջի մեծու_
թեան քոյ և աղօթս մատուցանել յանուն քո աշաւոր՝

և

Կանոնաւորեսցէ յաւուրս , աւուրբ իւրովք ·
և պաշտել զսեղանս քո փառաւոր · և 'ի հովուել զհօտ
քո բանաւոր · և ծնանիլ վերստին զմարդիկ աւազա_
նաւն յորդեգրութե քեզ · և զպատրաստեալ բարիսն
միածնիդ քո վայելել և վայելեցուցանել զբազումս ·
ունել իշխանութի 'ի կապել և յարձակել յերկինս և
յերկրի · և տալ թողութի մեղաց կենդանեաց և մեռելոց ։
Այլ այժմ հրամայեսցես գալ առ քեզ · և հանգչել 'ի հո
գոց իւրոց , և ազատանել 'ի տառապանաց կենցաղոյս ,
և առնուլ զկեանսդ՝ յորում մերժեալ են ցաւք և տրտ_
մութիւնք և հեծութիւնք ։ Այլ արդ՝ մր ողորմած և
մարդասէր · հաւատարիմ լիցի ամ գործ սորա հովուոր՝
որ 'ի մք եկեղեցիս և 'ի ժողովուրդս քո ։ Ներշեալք և
ընդունելիք եղիցին առաջի քո մր՝ աղօթք , պատա_
րագք և նուէրք կենդանեաց և մեռելոց՝ մատուցեալք
'ի ձեռն սորա յանուն քո , 'ի շարժել զգութ ողորմու_
թեան քո յայնոսիկ՝ յորոց ընծայեցան · որպէս զի և սա
անդատապարտ գտանիցի 'ի նոյին պատուոյ՝ առնլով
զմեծ ողորմութի յամենառատ վարձատուէդ ։ Այլ թէ
պակասումն լեալ իցէ սորա 'ի հեղգութենէ , լիապէս
կատարումն պարգևեսցես · և ներեսցես սմա զոր սխա_
լեաց երբե զմարդ ։ քանզի քեզ արարչիդ յայտնի է տը
կարութիւն մեր · և դու մր հրեշտակաց ներես բազում
անգամ · զի ոչ ոքէ առանց մեղաց · բայց միայն մք երրոր
դութիւնդ՝ որ ամենեցուն քաւիչ ես ։ որ և պարգև
եսցես զքաւութի ծառայիս քոյ այսմիկ՝ և ամենեցուն որք
յուսացան 'ի ձեռն սորա քաւութե հասանիլ ։ Այլ զամե
նեսեան զլուսաւորեալս՝ և զօրհնեալս՝ և զխրա_
տեալս բանիւ վարդապետութե սորա՝ խնամեսցես ·
և պահեսցես հաստատուն առանց գայթակղութե 'ի

 պար

Կանոնաւորեալ վր ընծայեցելոյն ժամուն:

պարծանս սորա յաւուրն ահեղին: Աղաչեմք զքեզ տէր ած արարիչ հոգւոց և մարմնոց տէր կենդանեաց ըստեղծուածոց. մի երբեք ընդ վայր հարցես զհօտս մր և զհաւատացեալս քո հօտ՝ թողլով անհովիւ. այլ ստացես այր 'ի վր ժողովրդեան քո՝ զոր և լցուսցես հոգւովդ քով սրբով. լինել նոցա հովիւ ըստ սրտի քում, հովուել զնս իմաստութբ: Այս մխիթարեա զհոգի մր զոր աւանդեաց 'ի քեզ. և հանգուսցես 'ի դասս պաշտօնէից քոց արժանաւորաց՝ որք յտմ սրտէ իւրեանց ծառայեցին քեզ և պահեցին զպատուիրանս քո յտմ 'ի կեանս իւրեանց. և ընդ նոսին շնորհեսցես զուրախարար կեանսն 'ի մէջ սբց հրեշտակաց: Այս յաւուրն վերջնում, յորժամ առաքես զորդիդ քո սիրելի առնուլ համարս 'ի ծառայից քոց և հատուցանել ըստ իւրաքանչիւր վաստակոց, արա և զսա կերպարանս կից մարմնոյ փառաց միածնի որդւոյ քո, լինել արժանի և հաղորդ նորին արքայութե՝ ժառանգաւոր կենացն յաւիտենից: Զի թէպէտ և մեք որք հայցեմք՝ անարժան եմք, գու տէր ոգեսէր՝ բարեխօսութբ և հեղմամբ արեան սբյն Ստեփաննոսի առաջին պաշտօնէի սբյ եկեղեցւոյ քո՝ և աղաչանօք սբց Առաքելոց քոց և սբյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ (որոց յաջորդ կարգեցեր զսա,) և տմ հաճոյական ծառայից քոց՝ տուր սմա զտմ հայցուածս նուաստութե մերոյ: Այս զմեզ օրհնեա տմ հոգևոր օրհնութբ. և մխիթարեա շնորհօք քո հոգւոյդ.
որով զօրացեալք՝ արժանի լիցուք
փառաւորել զհայր և
զորդի և զսբ զհս
այժմ և:

Քահանայութեանն օծման կարգն է։

Եւ բարձրանան քահանայքն, եւ հանեն ի բեմն առաջի սրբոյ սեղանոյն։ Եւ ասէ Սարկաւագն Ելք, ի միտ. Տր հովուեսցէ զիս։ (մինչեւ ցվերջն սաղմոսին։) Կցորդ ողբայսն։

Վերստին առ քահանայն ... ի մի սեղանոյ ... (Եւ ասեն կրկնելով զսաղմոսն եւ զկցորդս։) Պաշտօնեայ Սարկաւագն ի Ելք, Տր հովուեսցէ զիս։ (մինչեւ ցվերջն սաղմոսին։) Կցորդ ողբայսն։

Օծեալ ... (Եւ ասեն կրկնելով զնոյն զսաղմոսն եւ զկցորդս։) Տարական ... առ ... ։

Եւ ապա փոխադրին քահանայքն։ Եւ առեալ զմեր ձեռն, օծցէ ձախ զձախոյն, եւ ապա զաջոյ ձեռան։ (Եւ ասեն զեր- կնաւոր ... եւ ... զսեղանոյն։ Եւ այն փոխանորդս կարգեալ մինչեւ զկողմանս զոր ասեն ... կարգ ... եւ կարգեալ ... տեղաւորեալս ...։ զի ...) Եւ համբուրեն զմեր ... սեղանն ... փոխանակ ... եւ զկուրծն, եւ զամ որբոց ... Եւ զմեր աշակերտսն ... ի գիրկս եւ համբուրեն։ Եւ ասէ Սարկաւագն,

Ուրախ եղէ ես որք ասէին։

Ողջոյն քեզ զսուրբ եկեղեցի։ Ողջոյն քեզ զսեղան սրբութեան։ Ողջոյն ձեզ զամենայն քահանայութեան. Եւ ... ։

Եւ ասեն զսա ... մինչեւ ի ծայր սաղմոսին։
Եւ համբուրեն զբոլոր եկեղեցին, եւ դառնան եկեալ առաջի սրբոյ սեղանոյն։

(Օ)րհնեալ սաղմոսս եւ զողջոյնս ասելով ... յետ ... եկեղեցին ... ի ...

հոր

Մինչ ելանիցեն ՚ի բեմն զինի օծմանն ։

չորս անկիւնսն. որ նշանակէ՝ զհամբարձումն նորին զարեգակնն և զերկրորդ եկեղեցին և զարքայութիւնն այս, և զհրաշափառական ողջոյնն տալն ։) Եւ համբուրեն զխաչն սրահանայքն. և երկրպագեն վարդապետացն. և համբուրեն զխաչն և զաւետարանն և զալ... ։ Եւ ապա ելանիցեն ՚ի բեմն, փոխելով զսաղմոսն և զողջոյնն ։

Սաղմոս ՁԶ, Հիմունք նորա ՚ի լերանց սուրբ նորա"։

Ողջ՛ոյն Տէ՛ր մանկունք եկեղեցւոյ ։ Ողջ՛ոյն Տէր հաւատացեալ եղբարք իմ ՚ի քս ։ Ողջ՛ոյն Տէր համօրէն ժողովրդականք. Եւ ճանապարհորդեցի առ քս յորս անձանեցոյն ։

Սաղմոս ՃԼԷ, Տէր փորձեցեր զիս և ծանեար զիս"։

Ողջ՛ոյն հրաժարեմ ՚ի քէն՝ սբ եկեղեցի ։ Ողջ՛ոյն մնամ ՚ի ձեռն սիրելի եղբարք. ՚ի կոչումն վերահասուցէք զիս քրիստոսի սբ մեր ։

Սաղմոս, Պահեա զիս Տէր ՚ի ձեռաց մեղաւորի. և"։

Եղ՛ ... Թէ արարէք զիս իմ հայրք իմ եղբարք և որդիք. և օրհնեսցէ զձեզ քս փրկիչ մեր. ... տուն ՚ի հաւատս ... մինչև ՚ի սահմանեալ կէտ կեանս ... և խաղաղութեան ... ընդ ձեզ յաւէտ ... յաւիտեանս ամէն ։

Եւ ապա տան զողջոյնն ։ Եւ յետ ողջունին համբուրեն զաջ հանդերձեալ ... և ժողովրդեան. և տանեն ՚ի մէջ ժամատան. և ժամն պատարագն ։

Յետ զինի Պատարագին օծմանն ասել, Խնամածուն սիրոյն"։

Եւ Սարկաւագն Քարոզէ ։

Մ խաղաղութեան աղաչեսցուք զամենակալն Տէր յաղագս հոգւոյ ... ցեալ

'Ի Դշրամարին ընթերցիր։

ցեալ քահանայիս այսորիկ. զՏէր աղաչեսցուք։ Աբրահա-
մէր քահանայք և բազմամբոխ ժողովուրդք, հայցե-
ցէք 'ի քէն զի շնորհեսցէ սմա զթողութիւն մեղաց. զՏէր"։
Զի հանգուսցէ զհոգի սորա յերկնային խորանսն յան-
սպառ ուրախութիւնսն. զՏէր"։ Յաւուր ահեղնումն համա-
րեսցի զսա ընդ ծառայս և ընդ այլ մարգարէիցն. զՏէր"։
Յերկրորդումն համարեսցի զսա ընդ պետրոսի և ընդ
պօղոսի և ընդ այլոց սրբոց առաքելոցն. և զաղաչանս մե-
ղուցելոյս ընկալցի 'ի յերկնաւոր հօրն. Ննջեցելոցն ընդ
սուրբս դասեսցի. զՏէր"։ Ասէ և միաբան"։ Զանձինս"։

Ողորմեա մեզ Տէր Աստուած"։

Ապա քահանայն ասէ զԱղօթսս։

Արարչագործ Աստուած՝ որ 'ի ձեռն Յիսուսի խորհրդոյ
քոյ, զառաջնաստեղծ մարդն կերպարանա-
կից և նմանակից քեզ արարեր. և լուսե-
ղէն փառօք զարդարեցեր. և արարեր զնա հողեղէն
պատկերաւն՝ փառակից հրեղինացն. և ծածկեցեր ըզ
հողեղէն մարմինն լուսեղէն փառօք։ Ընդ որ խանդա-
ցեալ թշնամին, մահաբեր պտղոյն ճաշակմամբ խա-
բեաց զնա և ընկէց 'ի փառացն։ Իսկ նա տեսեալ զինքն
մերկացեալ 'ի լուսեղէն զգեստուցն, սաղարթապատ
լինէր ը տնկոցն 'ի դրախտին։ Այլ գոլով նա լուծեալ 'ի
պատուիրանէն և արտաքսեալ 'ի դրախտէն, ոչ գտանէր
զմխիթարութիւն փշաբերութեն, եթէ ոչ էր առաջին քոյ կե-
նարարիդ՝ եթէ հող էիր և 'ի հող դարձջիր։ Այսպէս այնու-
հետև ցանկալի մահու հասանել, զի մահուամբն ըզ
կենդանութիւն գտցէ։ Իսկ դու Տէր՝ զԹագաւոր յանարատ
ձեռաց քոց ստեղծուածն, ոչ կարացեր տեսանել զկո-

րուստ

Ի ԴՂ տաճարին ընթերցիր ։

բուսոտ նմանակից քոյ պատկերին և նախաստեղծ մարդոյն · խոնարհեցար յերկնից ՚ի հայրական ծոցոյ, և զմարմին ծառայի ՚ի կուսէն ճշմարիտ այդս յանձն առեր · հողաստեղծին հերքարանաւ ծածկեցեր զլուսեղէն Աստուածութիդ · զհողեղէն կերպարանս նմանակից քեզ արարեր · զքոյ ինքնաստեղծ պատկերն՝ զպատկերակն ՚ի պատրողէն , առաջին զգեցմանքն նորոգեցեր · և զմեզ նորոգեցեր ՚ի նախահօրն մերում ադամայ ՚ի մէջ կենդանարար փայտին · և արբուցեր մեզ յանմահարար բաժակէդ ՚ի կողահոս աղբերէդ · զմեռելութին մեր նորոգեցեր անշիջուց քով ՚ի խաչին ։ և իջանելով քոյ ՚ի դերի զմահ՝ և յարութե քով ՚ի մեռելոց , զարդարեալսն ՚ի մ զասեր բանտին ՚ի դանդարմունէն ազատեցեր · և զկամ ծխ կարծեալ իշխանին լուծեր , և զբռնութեան ՚ի նմանէ արժանաւորեցեր անեղաշէն զբախտին կենաց ։ Նաև զմեզ կոչեցեր քահանայս ՚ի տաճարի փառաց որքութե քոյ՝ զոր հիմնեցուցեր ՚ի մէջ առաքելական վիմի խոստմամբ կեփայի, եթէ դու ես վէմ, և ՚ի վր այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ · և դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն ։ Արդ ես և ծառայս քո , զոր արժանաւորեցեր առնուլ զպատիւ քահանայութե և զպաշի պարծանաց · և ընդբերեցեր զաս լինել քեզ սպասաւոր ընդ որդիս որոտման ։ Ա՛ստի՝ նմանեցաւ սա մելքիսեդեկի՝ լցեալ շնորհօք հոգւոյդ սրբ ։ Սա՝ նմանեաւ մովսէսի նախամարգարէին, առաջնորդ լինելով ժողովրդեանն ՚ի մթապատեալ մեղացն եգիպտական · մտածանելով ՚ի տուն տնդ և ՚ի գաւիթս տնդ ։ Սա՝ նմանեալ ահարոնի վարդապետի պատմուճանաւն · և ո՛չ ակամբք երկոտասանիւք ՚ի լուղեալ , այլ երկոտասան առաքելոցն փառաւորութե

՚Ի ԴԸ տաճարին ընթերցիր :

համեմատեալ : և ո՛չ զակունս յանդիմանութե՛ ՚ի վակա_
սին կրելով՝ որով զմահ և զկեանս ժողովրդեանն ճանա_
չէր , այլ զմարմին և զարիւն որդւոյ այ̃ ՚ի վերայ բազ_
կայն կրելով՝ որով զմեղս և զանօրէնութիս ժողովրդեան
քոյ քաւէր : և ո՛չ արեամբ ցլուց և զոհարանաց , այլ
արեամբն քի̃ այ̃ մերոյ մտանէր ՚ի սրբութի̃ սրբութեցն :
Ա՛ն նմանեալ սամուէլի՝ արկեալ զիւրեաւ կրկնոց և
զփառս քահանայութեանն յանշարժ տապանակի , հո_
վուէր զժողովուրդ քոյ : Ա՛ն տաճարի տն̃դ գործող :
Ա՛ն սեղանոյ տն̃դ պաշտօնեայ : Ա՛ն պատարագիչ քն̃դ :
Ա՛ն բաշխող մարմնոյ և արեան տն̃դ : Ա՛ն մկրտիչ ծնե
ցելոցն աւազանին ջրով և հոգւով : Ա՛ն պսակիչ զու_
գակցելոցն յամուսնութի , տնագրութե՛ սր̃ խաչին և
բոլոր պսակաւէն : Ա՛ն մեղաւորաց դարձուցիչ՝ որ կո_
չէր յապաշխարութի քաղցրալուր բարբառովն : Ա՛ն
ընթերցող մարգարէական և առաքելական տառից :
Ա՛ն քարոզող ժողովրդեանն նմանեալ առաքելոցն :
Ա՛ն տօնախմբող մարտիրոսացն · յիշատակող սբ̃ց ճգնա_
ւորացն : Ա՛ն յիշատակող ննջեցելոցն հաշտարար սր̃բ
պատարագաւն : Ա՛ն փառաբանիչ սբ̃յ երրորդութեդ
վերնայնոցն նմանեալ : Իսկ այժմ տր̃ բարերար՝ զսա
առ քե̃զ կոչեցեր · և խափանեցաւ պաշտօն սորա յեկե_
ղեցւոյ քումմէ՝ և ՚ի ժողովրդենէ քումմէ : Վասն որոյ
աղաչեմք զքեզ մարդասէր տր՝ ընկալ զհոգի սորա ընդ
ընտրեալս քո և ընդ կամարարս անուանդ քումդ սբ̃յ՝ և
խառնեա՛ զսա ՚ի թիւ աշակերտաց քոց : Իսկ եթէ յան_
ցեալ ինչ իցէ սորա իբ̃ մարդկային բնութեն , թո՛ղ սմա :
Իսկ յանճառ և յահեղ գալստեան քոյ՝ յորժամ նշան
սրբոյ խաչիդ ճառագայթիւք ընդ ամպս երկնից փայլէ_

կա

·Ընդհանրականաց ասելոյ:

կարապետ գալստեան քո, և զօրութիւնք երկնից շարժին, և զօրք հրեշտակաց առաջի ընթանան. և հրեշտակապետն հնչեցուցանէ զփողն ազդեցութեց՝ ազդ առնելով տիեզերաց և յաւիտենից ննջեցելոցն՝ 'ի զարթուցանել 'ի մահահանգիստ քնոյ. և յառնեն մեռեալք 'ի գերեզմանացն, և հոգիքն զգենուն զիւրաքանչիւր մարմին, և կան առաջի ահեղ ատենիդ, յայնժամ յանուանէ կոչեա զծառայս քո՝ և ընդ աջմէ քոյ կացո. և արա օդաթռիչ թեւօք վերամբառնալ 'ի վերինն եդեմ 'ի մայր մեր ամենեցուն, 'ի լուսեղէն առագաստն՝ 'ի յաւիտենական և յանանցանելի լոյսն: Այլ զաշակերտակիցքս և զուղարկաւորքս սորա և զյարմարող ծառայս քո հանգերձ երկրպագող ժողովրդեամբս՝ արժանաւորեա երանաւէտ կոչմանդ քո 'Քս Ած մեր. զի դու ես Տր կենաց և Ած ողորմութե: Այլ քեզ ը̄ հօր և ը̄ հոգւոյդ սրբոյ վայելէ փառք իշխանութի և պատիւ. այժմ և":

Ապա բառնան զմարմինն, և բերեն 'ի դուրս 'ի տաճարէն 'ի ժամատունն: Իսկ թէ ոչ է ժամատուն՝ դիցեն 'ի յետին դուռն. ասելով Տաղաչափն խաչի, գ̄ ձ. փայտ կենաց որ փոխա": Ողորմեաւ փայտ գիտու է":

Ապա թէ չեղիւ ... իցէ, ... եղեալ ...

... ...:

Ապա անդէն 'ի ժամատանն առաջի խաչին որ 'ի դրան տաճարին է, կամ թէ 'ի յետին դուռն, ասա կանոն կարգի:

Սաղմոս ծԹ, Աստուր երկիւղածաց քոց նշան": փոխ, Ըս մերձեցեր և":

***

փայտ

'Ի դրան եկեղեցւոյն առաջի խաչին՝ կամ 'ի յետին դրան ։

Ընթերցուած Առակաց.

Ծառ կենաց է ամենեցուն՝ որք պատսպարին 'ի նա. և որք յենուն 'ի նա իբրև 'ի Տէր հաստատութեան։ Այ իմաստութեամբ հիմունս եարկ երկրի. պատրաստեաց զերկինս խորհրդով։ Եւ հանճարով իւրով զանդունդս պատառեաց. և ամպք հոսեցին զանձրև։ Որդեակ՝ մի՛ լքանիր, պահեա՛ զիմ խորհուրդս իմ և զիմաստութիւն։ Զի կեցցէ անձն քո. և շնորհք իցեն 'ի վերայ պարանոցի քում։ եղիցի բժշկութիւն մարմնոյ քում, և դարման ոսկերաց քոց։ Զի գնասցես յուսով խաղաղութեան յամ ճանապարհս քո. և ոտն քո մի՛ գայթակղեսցի։ Զի եթէ նստիցիս՝ աներկիւղ իցես. և եթէ ննջիցես՝ քաղցր 'ի քուն լինիցիս։ Եւ ոչ երկիցես 'ի զարհուրանաց 'ի վերայ հասելոց ամբարշտաց. և յարշաւանաց 'ի վերայ եկելոց։ Զի Տէր եղիցի 'ի վերայ ամ ճանապարհաց քոց, և հաստատեսցէ զոտն քո՝ զի մի՛ սասանեսցի։

Ընթերցուած յԵսայեայ Մարգարէէ.

Այսպէս ասէ Տէր. ըստ աւուրց փայտին կենաց եղիցին աւուրք ժողովրդեան իմոյ. զգործս ձեռաց նոցա հնացուսցեն։ Եւ ընտրեալք իմ մի՛ եւս վաստակեսցեն ընդունայն՝ և ոչ ևս ծնանիցին որդիս յանէծս. զի զաւակք օրհնեալք են յԱյ, և ծնունդք նոցա ընդ նոսա։ Եւ եղիցի մինչ չև կարդացեալ
իցէ նոցա՝ ես լուայց նոցա. և մինչ
դեռ խօսեսցին, ասացից
Թէ զինչ խնդրէք։

՚Ի դրան տաճարին առաջի խաչին, կամ ՚ի չէորին դրան։

Պօղոսի առաքելոյն ՚ի կորնթացւոց առաջին թղթոյն"։

Ինձ այսպէս թուի՝ եթէ զմեզ զառաքեալս յետնորդս արար Ած իբրև զմահապարտս. զի տեսիլ եղաք աշխարհի, և հրեշտակաց՝ և մարդկան։ Մեք յիմարք վս՞ քի, և դուք իմաստունք ՚ի քս՞. մեք տկարք՝ և դուք հզօրք. դուք փառաւորեալք՝ և մեք անարգք։ Մինչև ցայսօր ժամանակի, և քաղցեաք՝ և ծարաւեցաք՝ և մերկ գնացաք, և կռփահարեցաք՝ և անհանգիստ եղաք. և աշխատեցաք ձեռօք մերովք։ Նախատէին զմեզ՝ օրհնեմք. հայհոյեին, աղաչեմք։ Հալածեին յանձն առնումք. իբրև աղբ նշաւակի եղաք ամ աշխարհի. ամենեցուն փարելի լինիմ մինչև ցայժմ։ Ո՛չ եթէ յամօթ ինչ առնելով զձեզ գրեմ զայս. այլ իբրև զորդիս սիրելիս խրատեմ։ Թէպէտ և բիւր դաստիարակս ունիցիք ՚ի քս՞ այլ ո՛չ եթէ բազում հարս. զի ՚ի Քս՞ Յս՞ աւետարանաւն ես ծնայ զձեզ։ Աղաչեմ զձեզ, նմանօղք ինձ եղիջիք՝ որպէս և ես քի։

Ալէլուիայ։ "Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց"։

Աւետարան որ ըստ Մատթէոսի։

Վաղվաղակի յետ նեղութե աւուրցն այնոցիկ՝ արեգակն խաւարեսցի. և լուսինն ո՛չ տացէ զլոյս իւր. և աստեղք անկցին յերկնից. և զօրութիք երկնից շարժեսցին։ Եւ ապա երեւեսցի նշան որդւոյ մարդոյ յերկինս. և յայնժամ կոծեսցին ամ ազգք երկրի։ և տեսցեն զորդի մարդոյ եկեալ ՚ի վերայ ամպոց երկնից. զօրութ՞ և փառօք բազմօք։ Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ. և ժողովեսցեն

·Քահանայաթաղ առնելոյ։

զընտրեալս նր̃ 'ի չորից հողմոց, 'ի ծագաց երկնից մինչև 'ի ծագս նց̃։ 'Ի Թզենւոյ անտի ուսարուք զառակն. զի յորժամ նորա ոստքն կակղասցին և տերևն ցըցուիցի, գիտէք թէ մերձ է ամառն։ Նոյնպէս և դուք յոր ժամ տեսանիցէք զայս ամ̃ եղեալ, գիտասջիք թէ մերձ է առ դուրս։ Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս՝ մինչև այս ամ̃ եղիցի։ Երկինք և երկիր անցցեն. և բանք իմ մի' անցցեն։

Ն՟ սարկաւագն Քարոզէ,

Աղաչեսցուք զամենակալն ած̃. զի պահպանեսցէ զմեզ նշանաւ խաչին իւրոյ յերևելի և յաներևոյթ թշնամւոյն. ամենակալ տր̃ ած̃ մեր կե՛"։

Ն՟ քահանայն ասէ զԱղօթս։

առագայ́թ համատարած, և աթո́ռ ածային. պըսակ եկեղեցւոյ, և անբաւբառ բարեխօս, նահահանդխոտ նահապետելոց, ճգնաւորաց ժուժկալութ̃, և հրաժարելոց յուղարկիչ։ 'Ի յահաւոր և 'ի հրաշալի գալստեան երկնաւոր թագաւորին յորժամ ճառագայթեալ փայլես ը̃ ամպս երկնից հիացուցանող զօրութ̃, նոյն ինքն զմարմին սորա 'ի խաւարդաւոր վիշապէն պահեա́. և հոգւոյ սորա լե՛ր առաջնորդ։ Որ բացօղ եղեր դրախտին փակելոյ, բա́ց սմա զդուռն ողորմութ ան̃։ Որ̃ զի արժանի լինելով ար̃ մտից դրախտին բացելոյ 'ի քէն, փառաւորեսցէ զհայր և զորդի և զսբ̃ հոգին. այժմ և՛"։

Խաղաղութ̃ ամենեցուն։ Ած̃յ երկիր պագեսցուք։

Լուսափայլ աթոռ ածային և փառաւոր զօրութ̃. որ 'ի ձեռն մովսէսի հերձեր զծովն կարմիր և զզօրու_

Թիւնդ

'Ի գրան պաշտօնին, կամ թէ 'ի չէփին տուան։

Թիւնդ քո ցուցեր փարաւօնի՝ խորասույզ ընկղմելով զնա զօրօքն իւրովք, և իսրայէլի առաջնորդեցեր։ Որ զվէմն հերձեր և զծարաւի ժողովուրդն արբուցեր։ Որ յեգիպտական սպանող ախտէն ապրեցուցեր զիսրայէլ. և կծոյնս մահաբեր օձին կապեցեր։ Որ և 'ի նորումս առաւել փայլեցար գերազանց հրաշիւք և անճառ զօրութե՝ երևեալ նշան փրկական ամ հաւատացելոց և ախոյեան մշտնջենաւոր, քան 'ի հնումն 'ի ձեռն օրինակացն և նմանութեց՝ որք առժամանակեայք էին և ստուերք ճշմարտութե։ Զանզի արարիչն 'ի վր քոյ մակագրեալ բևեռեցաւ. և կանգնելով քոյ 'ի վր պարտեցելոյն գոգօձան ադամայ, զգլորեալսն կանգնեցեր. զվիրաւորեալսն բժշկեցեր. զախտն որ 'ի պատրողէն եղև, լուծեցեր այնու՝ որ 'ի կողահոս աղբերէն 'ի վերայ քոյ հոսեցաւ։ Դու զխաւարասէր թշնամին ընկղմեցեր յանդունդս. և կապեցեր յանլոյծ կապանս։ Դու ըզնիգս դժոխոցն խորտակեցեր, և զարգելեալսն որ 'ի նմա՝ ազատեցեր։ Դու բացեր զդուռն անկողաշէն դրախտին. և առաջնորդեցեր աւազակին։ Դու հաւատոյ և կնիք ցուցար՝ որք 'ի քս դաւանին։ Դու օգնական հաւատացելոց, և պսակ եկեղեցւոյ։ Դու հզօրացուցիչ հաւատոյ, դարձուցիչ մոլորելոց, և ապաւէն վտանգելոց։ Դու հիւանդաց բժիշկ, և ախտացելոց առողջութի։ Դու հաւատացելոց պարիսպ, և անհաւատից կործանումն։ Դու հրաշալի ճառագայթ, և կարապետ գալստեանն քի։ Դու կենդանեաց հանգուցիչ, և հանգուցելոց առաջնորդ. առաջնորդեա՛ և այժմ հոգւոյ հանգուցելոյս յօթևանս լուսոյ արդարոցն, և լեր վս սորա միջնորդ և բարեխօս առ 'ի քեզ

խաչեցելոյն Քի, զի լուծիցէ աղաչանաց միաբան ժողովե-
լոցս, և բացցէ սմա զդուռն կենաց մտին, և հանգուցա-
ցէ 'ի դասս սրբոց և սիրելեաց իւրոց՝ առնելով նմա հա-
ղորդ և ուրախակից։ Այլ մեք՝ որք մեր ։ ՅՍ ՔՍ. զամե-
նայաղթ նշան սբ խաչի քո բարեխօս ունելով առ քեզ՝
հայցեմք յամենառատ մարդասիրութեդ քումմէ, զի 'ի
ձեռն սորա առաջնորդեսցես հոգւոյ հրաժարելոյ քա-
հանայիս՝ խաղաղութբ հասանել 'ի դրախտն լուսոյ՝
ուր ժողովքն են սրբոց։ Այլ 'ի միւսանգամ գալստեան
քո յորժամ գաս 'ի նորոգել զաշխարհս ձեռաց քոց ստեղ-
ծուածս, և փող ազդեցութն կոչէ, և նորոգին հնա-
ցեալ մարմինք. յորժամ նշան տէրունական խաչիդ փայ-
լի ընդ ամպս երկնից ճառագայթիւք ահեղահրաշ լու-
սով, և դասք սրբոցն սրաթռուիչ թևօք անփոփին 'ի լու-
սոյ ճառագայթիցն յայնժամ բարեխօս և մարդասէր
ած, արա զսա արժանի ընդ սրբս քո թևակարգել 'ի լոյս
ճառագայթից սբ խաչիդ։ Այլ զմեզ արժանաւորեա
փառաւորել զամենասբ զերրորդութիդ. այժմ և"։

Եւ ասեն Շարական, Ճառագայթ փառաց էին"։ Դի-
տուն Այրէ, Հոգւոյս։ Հայր մեր"։

Ապա թէ 'ի ժամատան իցէ, տարցեն յատաղ դէմ 'ի դուռն,
շիրիմն դէմ յարևելս դնելով։ Իսկ թէ 'ի չեղոյն տանէ,
Բողցեն 'ի նոյն տեղւոյն անշարժ։

Եւ ասեն Շարականս, Լուսով տծութե քոյ քս"։
Սաղմոս ՃԽԲ, Ծոյց ինձ ճանապարհ յոր և գնացից"։ Փոխ,
Տր լուր աղօթից իմոց ունկն դիր"։

Ընթեր

Ի յՍրբոյն ... Հայրենեաց, կամ ի յԷփեսին դասն։

Ընթերցուած ի Գործոց Առաքելոց։

Եւ ի Միլիտեայ յղեալ յԵփեսոս՝ կոչեաց զե-
րիցունս եկեղեցւոյն։ Եւ իբրեւ եկին առ
նա՝ ասէ ցնս. դուք ձեզէն գիտէք՝ յօրէ յա-
ռաջնումէ յորմէ եկի յԱսիայ. որպէս ընդ ձեզ զամ ժա-
մանակսն եղէ։ Ծառայել տն ամ խոնարհութբ՝ եւ
բազում արտասուօք եւ փորձութբք, որք դիպեցան ինձ
ի նենգութեց հրէից։ Որպէս ոչինչ զանգիտեցի յօգ-
տակարացն չպատմել ձեզ՝ եւ ուսուցանել զձեզ հրապա-
րակաւ եւ առ տնին։ Տալ զվկայութի հրէից եւ հեթա-
նոսաց զապաշխարութիւնն որ առ ած, եւ զհաւատսն որ
ի տր մեր յս քս։ Եւ արդ ահաւասիկ ես կապեալ հո-
գւով երթամ յերուսաղէմ. եւ որ ինչ անդ ընդ իս անց-
անցանելոց իցէ՝ չգիտեմ։ Բայց զի հոգին սբ ըստ քա-
ղաքաց քաղաքաց վկայէ ինձ եւ ասէ, եթէ կապանք եւ
նեղութիւնք մնան քեզ։ Այլ եւ ոչ ինչ իբր համարիմ զանձն
իմ պատուական՝ որպէս զի կատարեցից զընթացս իմ
ուրախութբ՝ եւ զպաշտօնն զոր առի ի տնէ յէ վկայ-
լինել աւետարանի շնորհացն այ։ Եւ արդ՝ ահաւա-
սիկ գիտեմ ես, եթէ ոչ եւս տեսանէք զերեսս իմ դուք
ամենեքեան՝ յորս շրջեցայ քարոզել զարքայութիւնն։
Վսն որոյ զվկայութի դնեմ ձեզ յաւուր յայսմիկ, զի
սբ եմ յարենէ ամենեցուն։ Քանզի ոչ խորշեցայ ի պատ-
մելոյ ձեզ զամ կամսն այ։ Զգոյշ կացէք անձանց եւ
ամ հօտին. յորում եդ զձեզ հոգին սբ տեսուչս՝ հովու-
ել զեկեղեցին այ, զոր ապրեցոյց արեամբն իւրով։
Քանզի գիտեմ ես՝ եթէ յետ իմոյ ելանելոյ յաշխարհէս՝
գայցեն գայլք յափշտակօղք ի ձեզ, որք ոչ խնայեսցեն

'Գայլք յափշտակողքն գաւառին, կամ 'ի յետոյն պատ.

հօտին: Այժմ 'ի ձէնջ յարիցեն արք՝ որք խօսիցին թիւրս, ձգել զաշակերտսն զկնի իւրեանց: Վասն այնորիկ արթուն կացէք. զի զերիս ամ զցայգ և զցերեկ՝ ոչ դադարեցի արտասուօք խրատել զմի մի իւրաքանչիւր: Այժմ արդ յանձն առնեմ զձեզ Այ և բանի շնորհաց նր. որ կարօղն է շինել՝ և տալ ձեզ ժառանգութի ընդ սբ̃ոց ամ: Արծաթոյ՝ կամ ոսկւոյ՝ կամ հանդերձից՝ ոչ ուրուք 'ի ձէնջ ցանկացայ: Դուք ինքնին գիտէք՝ զի զպէտս իմ, և որոց ընդ իս էին՝ սպասաւորեցին ձեռքս այս: Այժմ զամ ինչ ցուցի ձեզ. զի այսպէս սպառէ վաստակել և դարմանել զհիւանդս. և յիշել զբանն Տն Յի, զոր ինքն իսկ ասաց՝ երանելի է մանաւանդ տալն քան առնուլն: Այժմ զայս իբրև ասաց՝ եդեալ ծունր ամենեքումբք եկաց յաղօթս: Առաջում լալիւն եղև ամենեցուն. և անկեալ զպարանոցաւն պօղոսի համբուրէին զնա: Մորմոքէին մանաւանդ 'ի վր բանին՝ զոր ասէր, թէ ոչ ևս տեսանելոց են զերեսս նր. և յուղարկէին զնա 'ի նաւն անդր:

Պօղոսի առաքելոյն 'ի Կողոսացւոց թղթոյն է գլ:

Եթէ յարեայք ընդ Քի, ապա զվերինն խնդրեցէք. ուր Քսն նստի ընդ աջմէ Այ: Զվերինն խորհեցարուք. մի զայս որ յերկրի աստ է: Քանզի մեռայք՝ և կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քի յԱծ: Իսկ յորժամ Քս յայտնեսցի, կեանքն ձեր. յայնժամ և դուք ընդ նմա յայտնեսջիք փառօք:

Ալէլուիայ: Սաղմոս Ճբ: Օրհնեա անձն իմ զՏր. և ամենայն ոսկերք իմ զանուն սբ նր: Օրհնեա անձն իմ զՏր. և մի մոռանար զամենայն տուրս նորա:

Աւե

Քահանայապետական աղօթքը։

Աւետարանս որ ըստ Յօհաննու։

Զայս խօսեցայ ընդ ձեզ. զի ընդ իս զխաղաղութիւն ունիցիք. յաշխարհի աստ զնեղութի͞ ունիցիք. այլ քաջալերեցարո՛ւք, զի ես յաղթեցի աշխարհի։ Զայս իբրեւ խօսեցաւ Յ͞ս, համբարձ զաչս իւր յերկինս եւ ասէ. Հա՛յր՝ հասեալ է ժամ. փառաւորեա՛ զորդի քո. զի եւ որդի քո փառաւորեսցէ զքեզ։ Որպէս ետուր նմա իշխանութի͞ ա͞մ մարմնոյ. զի ա͞մ, զոր ետուր նմա, տացէ զկեանսն յաւիտենականս։ Այս են յաւիտենական կեանք. զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ ա͞ծ. եւ զոր առաքեցեր զՅ͞ս ք͞ս։ Ես զքեզ փառաւորեցի յերկրի. զգործն կատարեցի, զոր ետուր ցիս՝ զի արարից։ Եւ այժմ փառաւորեա՛ զիս հայր առ ՚ի քէն փառօքն՝ զոր ունէի յառաջ քան զլինել աշխարհի առ ՚ի քէն։ Յայտնեցի զանուն քո մարդկան, զորս ետուր ինձ յաշխարհէ. քո՛ էին, եւ ինձ ետուր զն͞ս. եւ զբանն քո պահեցին։ Արդ գիտացին եթէ զա͞մ ինչ զոր ետուր ինձ՝ առ ՚ի քէն են։ Զի բանն՝ զոր ետուր ինձ՝ ետու ն͞ց. եւ նոքա ընկալան. եւ ծանեան ճշմարտութ͞բ եթէ առ ՚ի քէն ելի. եւ հաւատացին եթէ դու առաքեցեր զիս։ Արդ՝ ես վ͞ս նոցա աղաչեմ, եւ ո՛չ վ͞ս աշխարհի աղաչեմ. այլ վ͞ս ն͞ց՝ զորս ետուրն ինձ՝ զի քո են։ Եւ որ ինչ իմ է՝ ա͞մ քո է. եւ որ ինչ քո է՝ այն իմ է. եւ փառաւորեալ եմ ՚ի ն͞ս։ Եւ ես ո՛չ եւս եմ յաշխարհի՝ եւ նոքա յաշխարհի են. եւ ես առ քեզ գամ. Հա՛յր ս͞բ, պահեա՛ զն͞ս յանուն քո, որով ետուրն ինձ. զի եղիցին մի, որպէս եւ մեք միեմք։ Մինչ էի յաշխարհի ընդ ն͞ս, Ես պահէի զն͞ս յանուն քո՝ որով ետուրն ինձ՝ եւ պահե

ցի. եւ ոչոք 'ի նոցանէ կորեաւ. բայց որդին կորստեան,
զի գիրն լցցի։ Բայց արդ առ քեզ գամ. եւ զայս խօսիմ
յաշխարհի, զի ունիցին զուրախութիւն իմ լի յանձինս
իւրեանց։ Ես ետու նց̃ զբանն քո, եւ աշխարհ ատեաց
զնոսա. զի չեն յաշխարհէ, որպէս եւ ես չեմ յաշխարհէ։
Ոչ զայս աղաչեմ, զի բարձցես զնս̃ յաշխարհէ. այլ զի
պահեսցես զնս̃ 'ի չարէ։ Յաշխարհէ աստի չեն, ոպ̃ եւ
ես չեմ յաշխարհէ։ Սբ̃ արա զնս̃ ճշմարտութբ̃ քով.
զի քո բանդ ճշմարտութիւն է։ Որպէս զիս առաքեցեր
յաշխարհ, եւ ես առաքեցի զնս̃ յաշխարհ։ Եւ 'ի վր̃
նոցա ես սբ̃ առնեմ զանձն իմ. զի եղիցին եւ նոքա սր-
բեալք ճշմարտութբ̃։ Եւ ոչ 'ի վր̃ նոցա միայն աղաչեմ,
այլ եւ 'ի վր̃ ամ̃ հաւատացելոց բանիւն նց̃ յիս։ Զի ա-
մենեքեան մի իցեն. որպէս դու Հայր յիս՝ եւ ես 'ի քեզ.
զի եւ նոքա 'ի մեզ իցեն. զի եւ աշխարհ հաւատասցէ
եթէ դու առաքեցեր զիս։ Եւ ես զփառսն զորս ետուր
ինձ, ետու նց̃. զի իցեն մի, որպէս եւ մեք մի եմք։ Ես
'ի նոսա՝ եւ դու յիս. զի եղիցին կատարեալք 'ի մի. եւ
գիտասցէ աշխարհ եթէ դու առաքեցեր զիս. եւ սիրե-
ցի զնոսա՝ որպէս դու սիրեցեր։ Հայր՝ զորս ետուրն
ինձ, կամիմ, զի ուր եմ ես, եւ նոքա իցեն ընդ իս. զի
տեսանիցեն զփառսն իմ, զորս ետուրն ցիս. զի սիրե-
ցեր զիս յառաջ քան զլինել աշխարհի։ Հայր՝ արդար
աշխարհ զքեզ ոչ ծանեաւ. այլ ես զքեզ ծանեայ. եւ
նոքա ծանեան եթէ դու առաքեցեր զիս։ Եւ ծանու-
ցի զանուն քո՝ եւ ծանուցից. զի սէրն, զոր սիրեցեր զիս,
'ի նոսա իցէ՝ եւ ես 'ի նոսա։ Զայս իբրեւ ասաց Յս̃, ել
աշակերտօքն հանդերձ յայնկոյս ձորոյն Կեդրոնի. ուր
էր պարտէզ, յոր եմուտ ինքն եւ աշակերտքն իւր։

Եւ

Քահանայութեան առնելոյ։

Եւ սարկաւագն Քարոզէ, Սը՟ 'ի վերուստ խաղաղ"։

Եւ ասէ զԱղօթս։

Ծնկեալեմք երկիր պագանել առաջի մեծ փառաց աթոռոյդ 'ի խորանս սրբութե քո. և արտա_սուալից հառաչանօք հայցեմք 'ի քէն տէր բարե_գութ, զի ընկալցիս զպաղատանս մեր՝ զոր մա_տուցանեմք առաջի քո գթութեդ։ Քանզի ծառայս քո զոր կոչեցեր յառաջնորդութի ժողովրդեան քում և 'ի սպասաւորութի սրբոյ եկեղեցւոյ՝ հովուել զժողո_վուրդս քո, ահա ըստ հրամանի քո կատարեալ զժամս նախս իւր եկին առ քեզ։ Արդ՝ քաղցր և բարերար տէր. զպատարագս և զնուէրս վս մեղաց զոր մատուցեալէ ա_ռաջի քո, և զայնչափս նուիրեցելոց զոր 'ի վր սեղանոյդ սրբոյ անուանդ քում կատարեալէ, ընկալ 'ի հաճոյս քեզ. և ողորմեա ըստ մեծի ողորմութե քում. և հոգւոյ սորա առաջնորդեա 'ի յերկիր ուղիղ` որ տանի 'ի կեանսն յաւիտենից՝ 'ի Քս Յս 'ի տր մեր։ որում վայելէ"։

Խաղաղութիւն ամենեցուն։ Ա՟յ երկիր պագէք"։

Յոյս արարածոց և փրկիչ աշխարհի. որ վս մեղաւորաց խոնարհեցար յանճառ փառաց և մարմնացար յանարատ կուսէն. եկեր կամաւ 'ի չարչարանս խաչի. եդար 'ի գե_րեզմանի, մտեր 'ի մէջ դժոխոց, և զթշնամին կապեցեր յանլոյծ կապանս. յարեար 'ի մեռելոց` և մեզ նորոգու_թիւն խոստացար 'ի միւսանգամ գալստեանդ։ Յիշեա զծառայս քո զայս` որ 'ի սնոտի կենցաղոյս փոխեցաւ. և զքահանայութիւն զոր կատարեաց յաշխարհի, ընկալ քեզ 'ի հաճոյս. և տուր սմա բաժին ընդ արժանաւորս և ընդ սիրելիս անուանդ քում, որք սրբութբ պաշտե_ցին

ցին

Ընծահանայութեան տանելոյ։

ցին զքեզ։ Այլ զոր ինչ յանցեալ իցէ բանիւք՝ կամ գոր-ծովք՝ կամ մտածութք, թո՛ղ սմա. քանզի դու ես ողոր-մած և անոխակալ տր։ և քեզ վայելէ փառք՝ իշխա՛"։

Տարական, Ձայր կապանաց մարդկան"։ Դկ փոխ Այրէ։

Հոգւոյդ". Ա~ հանգու"։ Բն որդի"։

Այլ փոխադրեն զդին ամ քահանայքն, և ապա ասեն Հայր մեր"։

Այլ տանին յԵրուսաղէմ նոյն, ասելով Տարական ամէ, Որ զանարատ բազմուկս քո". Այլ դարձուցեն զերեսն դէպ յա-րևմտոս։ Այս ասեն Սաղմոս ողբաձայն, Ծիբ։

Օգնութիւնէ մեզ յանուանէ տեառն. ա՛յն որ ար-արր զերկին նա և զերկիր։ ևոխ, Այթէ ոչ տրէր առ մեզ"։

Աւետարանս որ ըստ Մատթէոսի։

Յայնժամ արդարքն ծագեսցին իբրև զարեգակն յարքայութեան երկնից. որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ։ Դարձեալ նմանէ արքայութիւն երկնից գան-ձի ծածկելոյ յագարակի. զոր գտեալ մարդոյ թաքոյց՝ և 'ի խնդութենէ անտի երթայ վաճառէ զամ ինչ զոր ունի, և գնէ զագարակն զայն։ Դարձեալ նման է արքայութիւն երկնից առն վաճառականի՝ որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս։ Այլ գտեալ մի պատուական մարգարիտ՝ երթեալ վաճառեաց զամ զոր ինչ ունէր, և գնեաց զայն մարգարիտ։ Դարձեալ նման է արքայութիւն երկնից՝ ուռ-կանի արկելոյ 'ի ծով՝ և յամ ազգաց ժողովելոյ։ Որ իբ-րև լցաւ, հանեալ 'ի ցամաք՝ և նստեալ ժողովեցին զբարի բարին յամանս՝ և զխոտանն 'ի բաց ընկեցին. Այնպէս եղիցի 'ի կատարածի աշխարհիս. ելցեն հրեշ-

տակք՝

՚ի գաւթին, նաև ՚ի յետին դրան, յԵրուսաղէմ կոչի ։
տանէք՝ և մեկնեսցեն զչարս ՚ի միջոյ արդարոց ։ Եւ արկ
ցեն զնս՟ ՚ի հնոց հրոյ՝ անդ եղիցի լալ և կրճել ատամանց ։
Ասէ ցնոսա յս՟՝ իմացայք զայս ամ՟, ասեն ցնա այո՝ տր՟ ։
Եւ նա ասէ ցնս՟՝ վս՟ այսորիկ ամ՟ դպիր աշակերտեալ
արքայութե՟ երկնից՝ նման է առն տանուտեառն, որ հա_
նէ ՚ի գանձէ իւրմէ զնոր և զհին ։

Եւ ապրիլամսեան ․Քարոզէ, Կ՟Ը՟ ՚ի վերուստ ։

Եւ ջահանայն ասէ զՂազարոս ։

հոգւոց և ստեղծիչ մարմնոց ․ տր՟ ես կենդա_
նեաց և յարութե՟ մեռելոց ։ Դու՝ ՚ի քէն ար_
ձակին հոգիք, և քո հրամանաւդ կառավարին մարմինք ։
Հաստատեցեր զմարդն շնորհօք, և ստեղծեր զնա ողոր
մութեամբ ։ Բանդ քո կարգեաց զարարածս, և կազ
մեաց զաշխարհս ։ Զամ՟ ինչ արարեր վս՟ մարդոյ ․ և զբզ
մարդն ՚ի փառս այդ ։ Գեղեցիկ կերպարանօք նկարե_
ցեր զմարդն առաջին ․ զոր հաստատեցեր և արարեր կեն
դանի և անմահ, և կացուցեր տր՟ ամի ։ Դարանակալ
եղև թշնամին արդարութե՟ ․ խաբեալ ընկեց ՚ի փառացն
և ՚ի կենացն, և էհան ՚ի դրախտէն փափկութե՟ ․ Եկն
միածին որդիդ քո սիրելի ․ և զգեցաւ զմարմին պարտա
ւոր ․ և նորոգեաց զնա ՚ի կեանս, զկործանեալն կանգ
նեաց, և զմահկանացուն անմահ արար ․ զթշուառա_
ցեալն փառաւորեաց, և նստոյց ընդ աջմէ հօրդ իւրոյ ։
․Քանզի ընդ ունկն լսելեացն եմուտ մահ, և ը՟ ունկն
լսելեացն ծագեաց կեանք ։ ընդ ունկն եւայի բարբառ
մահու, և ընդ ունկն մարիամու աւետիք կենաց ։ Թա
գաւորեաց մահ յանցանօք, թագաւորեսցին կեանք շնոր
հօք ։

՚Ի գաճբին, կամ ՚ի յեզրին փառք, յԱրարչէն հողոյ :
հօր : յանհնազանդութիւն եմուտ մահ, և ՚ի հնազանդութենէ գալուստ կենաց : Ժպրհեցաւ և յանցեաւ ադամ, զի եղև ցանկացօղ աստուածութեան · աստուածութիւն ոչ եհաս, և յիւրոցն ևս անկաւ : ՚Ի մեղս մեր մեռանիմք, և ողորմութեամբ քով յառնեմք · ՚ի յանցանս մեր եղծանիմք, և ՚ի կամս քո նորոգիմք : Ձուեալ դադարին ամ մարմինք · իջանեն ՚ի հող և ապականին · սերմանին ՚ի հող՝ նմանութեամբ սերմանեաց երկրի · և սպասեն անձրևին մեծի, զի եկեսցեն բերել զբոյս յերկրէ : Մեռանան սէրքն յերկրէ ՚ի բարձունս, և մնան մեղաւորքն յերկրի · արդարքն վայելեն ՚ի փառս՝ և ՚ի կեանս, և մեղաւորքն հալին և մաշին ՚ի տանջանս : Արդ՝ յորժամ այս ամ լինի, դու՝ բարերար Տէր, տուր ծառայիս քո (այս անուն) հանգուցեալ քահանայիս, զի յարիցէ աջակողմութեան երևսաց · և կացցէ ընդ աջմէ քումմէ և ժառանգեսցէ զարքայութիւնդ · ՚ի վայելել զանսպառ ուրախութիւնդ ընդ սուրբս քո՝ և ընդ նոսին փառաւորել զամենասուրբ Երրորդութիւնդ · այժմ և միշտ և յաւիտեանս յա՛՛ :

Շարական, Տարածեալ ձեռք ՟Է ձն՛՛ : Ձկ փառն Սրբ :
Հոգւոց՛՛ · Մ՟ն հանգ՛՛ · Քրս՟ն որդի՛՛ :
Ապա դիակիրքն վերցին ամ քահանայքն, և ապա ասեն՝ Հայր մեր՛՛ :

Ապա տանին ՚ի կողմն Հիւսիսոյ՝ առեալ Շարական խաչին, ասէ : Խաչ քո եղիցի մեզ ապաւէն՛՛ : Ապա դարձուցեալ դէպ ՚ի հարաւ : Ապա ասեն Սաղմոս ողորմեայ, ծնի : Ասացեալ մեծ քարոզ որոյ տէր ամ յա՛կոբայ օգնական՛ն է նմա · և յոյս՛՛ : Բոլոր, Օրհնեա անձն իմ զՏէր · օրհնեցից զՏէր՛՛ :

Ապէ

՚Ի կատարածին կամ ՚ի յետին դատն, ՚ի Հայ-սաղմոսողին:

Աւետարանս որ ըստ Մարկոսի:

ԱՅԼ վասն աւուրն այնորիկ եւ ժամու՝ ոչ ոք գիտէ. ոչ հրեշտակք յերկինս, եւ ոչ Որդի. բայց միայն Հայր: Զգոյշ եղերուք. հսկեցէք՝ եւ կացէք յաղօթս՝ զի ոչ գիտէք երբ ժամանակն իցէ. Որպէս այր մի գնացեալ ՚ի տար աշխարհ, թողուցու զտունն իւր. եւ տացէ ծառայից իւրոց իշխանութիւն. եւ իւրաքանչիւր զգործս իւր. եւ դռնապանին պատուէր տայցէ զի արթուն լինիցի: Արդ՝ արթուն կացէք. զի ոչ գիտէք երբ Տէր տանն գայցէ, յերեկորեայ՝ եթէ ՚ի մէջ գիշերի՝ եթէ ՚ի հաւախօսի՝ եթէ ընդ առաւօտս: Գուցէ եկեալ յանկարծակի գտանիցէ զձեզ ՚ի քուն: Բայց զոր ձեզ ասեմ, ամենեցուն ասեմ. արթուն կացէք:

Սուրբ-Հայրն ՝Բարսղէ՝ Կ ժամն ՚ի գիշերի Ե.

Նախահանայն առէ զՄիջօրս:

Օրհնեալ ես արդարադատ եւ ողորմած Աստուած. միայն անոխակալ եւ բարեգութ. որ յակնարկելդ քո՝ հաստատեցան հիմունք երկրի: Քո ձեռամբ բըդ արարեր զմարդն. եւ քո նախախնամութեամբդ իշխան եւ տէր կացուցեր զնա ՚ի դրախտին փափկութեան: Սակայն չարին մախացեալ ընդ փառս պատուոյն զոր ՚ի քէն ընկալաւ, էհեղ ՚ի նա զթոյնս դառնութեան. եւ խաբմամբ օձաջան պատրանօքն ետ նմա ճաշակել ՚ի ծառոյն գիտութեան. որով մերկացեալ ՚ի լուսեղէն փառացն՝ պանծից եւ զցաւոց ժառանգեաց զկեանս: Իսկ դու յառաջատես եղեալ՝ հրամայեցեր մահու փոխել զնա ՚ի զազրալից կենցաղոյս. որպէս զի մի անմահ լիցի չարութեանն

թեանն

Բանահայեցող ասելոյ:

Թիւնն որ 'ի մեզ սերմանեցաւ։ Սատանայնոյ օրինակի և ապաստանոր սէր սեղանոյ քոյ փոխեցաւ աչա առ քեզ՝ ըստ կեանս սահմանադրութե քոյ։ Այժմ աղաչեմք զքեզ տէր մեր, կցորդ լեր և մխիթարիչ ծառայիս քոյ (այս անուն) հանգուցելոյ քահանայիս. զի դու ես կեանք և յարութի։ զի եթէ մինչ ողջն էր՝ արարեր, զի մեռ. եղծանես զպատկեր կերպարանաց քոց։ Աղաչեմք զքեզ տէր, նորոգեա զծառայս քո. զի վայելէ իսկ թագաւորին նորոգել զպատկերն իւր հնացեալ։ նորոգեա տէր զպատկեր քո որ հնացեալ է 'ի մեղս. զի մեծ են այս երախտիքս՝ քան զառաջին պարգևսն քո. զի անդ հաստատեալ հաստատեցեր, և աստ զհնացեալս նորոգես։ Որպէս զի գտեալ սորա զմեծ զողորմութի 'ի քէն, հանցէ զօրհնութիւն և զփառս հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ":

Շարական, 'Նորոգող տիեզերաց": [illegible] Այբ։ Հո_ գւոյ": Ա՜ հանգ": Բա՜ որդի":

Այլ [illegible] զերին [illegible], և ապա ասեն Հայր մեր":

* *

Այլ [illegible] 'ի [illegible] ասելով Շարական խաչի, Ձ: Այսօր խնդրի պատուական փայտ խաչ":

Այլ [illegible] 'ի [illegible]։ Այլ ասեն Սաղմոս [illegible], ՃԼԸ:

Ո՞վ [illegible] պատրաստեաց [illegible] [illegible] և [illegible] յաւիտենից. [illegible], [illegible] կամ զի վայելուչ":

Աւետարան որ ըստ Ղուկասու։

Եղև հակառակութի 'ի մէջ նոցա, թէ ով 'ի նոցանէ համարիցի մեծ։ Եւ նա ասէ ցնս. թա_

գա

'Ի Ղուկասէն, կամ 'ի չէրորդ տան, 'ի Հարաւակողմն :
գաւառք ազգաց տիրեն նոցա · և որք իշխեն նոցա, բարե րարք կոչին : Այլ դուք ո՛չ այնպէս · այլ որ մեծն է 'ի ձեզ՝ եղիցի իբրև զկրտսերն · և առաջնորդն իբրև զպաշ տօնօրն · Ո՞վ է մեծ՝ բազմեա՞լն եթէ սպասաւորն · ո՞չ ապաքէն բազմեալն · բայց ես եմ 'ի միջի ձերում իբրև սպասաւոր : Այլ դուք էք՝ որք յանդ կայիք ընդ իս 'ի փոր- ձութիւնս իմ : Այլ ես ուխտեմ ձեզ՝ որպէս և հայր իմ ուխտեաց ինձ զարքայութիւն : Զի ուտիցէք, և ըմպի- ցէք 'ի սեղանն իմ յարքայութեան իմում, և նստիջիք յեր- կոտասան աթոռ՝ դատել զերկոտասան ազգն իՂի :

Ասէ Սարկաւագն · Քարոզէ, Մ՞ ուղղելոյ :

Ասէ քահանայն առ զԱղօթս :

Օրհնեալ ես տ՛ր այ ամենակալ արարիչ ամ ա- րարածոց, դատաւոր կենդանեաց և մեռե- լոց · որ իշխանդ ես հոգւոց և մարմնոց : Որ մարդասիրապէս գթացար 'ի տկարութիւնս, և յայց ելեր մեզ կորուսելոցս · վերստին կանգնեցեր զմեզ 'ի գլոր- մանէ մեղաց մերոց · եդեր զթշնամին 'ի ներքոյ ոտից մե- րոց : Խաչեալ 'ի վր փայտին կենաց, և խաչակցեալ ընդ ջնութիւնս մեր առ 'ի հերքումն ամենաչար պատրողին, իջեր 'ի գերեզման · աւերեցեր զդժոխս · եղեր առաջին պտուղ ննջեցելոց քոյով մծահրաշ յարութեամբդ · և վերա- ծեր զստուերականս տեալքս 'ի խաւարի · զմահկանա- ցուս անմահացուցեր յուսով 'ի ձեռն կենսաբեր յարու- թեանդ քո : Ընկալ և այժմ զհոգի ծառայիս քո (այս ա- նուն) քահանայիս 'ի բարի · և դասաւորեա ընդ սուրբս քո : Ողորմեա տ՛ր ողորմած զյանցանս սորա զկամայ և զակամայ · զի դու ես քաւիչ մեղաց մերոց և կատարիչ

խընդ

·Քահանայական աղաւթքս ·

խնդրուածաց · և ապաւէն յուսացելոց քոց ։ Տո՛ւր մեզ տէր՝ և ընկա՛լ զհոգի հանգուցելոյս մերոյ քոյով գթութեամբ · և գրեա՛ զյիշատակ սո՛ր անմոռաց յիշմամբ առաջի ա՛ռ փառաց աթոռոյ քոյ ։ զի սրբեալ ՚ի մեղաց՝ ա՛ռ սրտիւ և անկեղծ հաւատով՝ արդարութե՛ և անբծութեամբ , արժանի եղիցի երկնաւոր պարգևացդ ք՛ ա՛ծ մե՛ր քո · և ընդ նոսին գոհանալով փառաւորեսցէ զքեզ ընդ հօր և ը՛ սր՛բ հոգւոյդ · այժմ ։

Շարական , Նստուն ընկալ քեզ զհոգի ։ Դկ տուն Նշէ ։
Հոգւոյս ։ Վասն հանգ ։ Քե՛ որդի ։
Նա փոխադրեն [illegible] , և ապա ասեն Հայր մեր ։

Առաքելոյն ՚ի թղթոյն Կորնթացւոց՝ ասելով Շարական խաչի, Եկ ։ Խաչն կենարար ։ Առ [illegible] Թեսաղոնիկեցւոց ·
Ալէլուն Սաղմոս ողբայոյն , Ճլէ ·

Օրհնեսցէ զմեզ տէր ՚ի սիոնէ այն որ բնակեալ է յերուսաղէմ ։ փոխ , Ահա օրհնեցէք զտր ծառայք ։

Աւետարան որ ըստ Յոհաննու ·

Ասէ ցնոսա յս̃ · ես եմ հացն կենաց ։ որ գայ առ իս , ո՛չ քաղցիցի · և որ հաւատայ յիս , ո՛չ երբէք ծարաւեսցի ։ Այլ ասացի ձեզ՝ թէ տեսանէք զիս , և ո՛չ հաւատայք ։ Զա՛մ , զոր տայ ինձ հայր , առ իս եկեսցէ · և որ գայ առ իս , ո՛չ հանից արտաքս ։ Զի իջի ես յերկնից՝ ո՛չ զի զկամս իմ արարից , այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս ։ Այս են կամք հօր իմոյ , որ առաքեացն զիս · զի զա՛մ , զոր ետ ցիս հայր՝ ո՛չ կորուսից ՚ի նմանէ · այլ յարուցից զնա յաւուրն

յետ

'ի գաւիթին կամ 'ի շէմին դրան, յԱրեւմտակողմն ։
յետնում ։ Այս են կամք Հօր իմոյ․ զի ամ՟, որ տեսա-
նէ զՈրդի՛ եւ հաւատայ 'ի նա, ընկալցի զկեանսն յաւի-
տենականս․ եւ ես յարուցից զնա յաւուրն յետնում ։

Ա՜ Սարկաւագն Պռօրոքէ, Ա՟ գտանելոյ ։

Ա՜ քահանայն ասէ զԱղօթս ։

Յիսուս կենաց եւ ընդունող աղօթից տէր ած՟ մեր՝
կարդամք եւ պաղատիմք առաջի քո բարերա-
րութեդ․ որ վս՟ յանցանաց մերոց խոնարհե-
ցար 'ի փառաց քոց՝ զմերոյս զգեցար մարմին, զի զմեզ
ազատեսցես 'ի յանցանաց մեղաց մերոց ։ Որ եկիր 'ի խն-
դիր մոլորեալ ոչխարին՝ բառնալով 'ի վր՟ փառաւոր ու-
սոյդ, զի զառողջութի՟ շնորհեսցես փրկաւորելոյն ։ Ա՜
որ կարծեալ իշխանն էր աշխարհի, խաչիւ եւ մահուամբ
բարձեր 'ի միջոյ․ եւ արարեր խաղաղութի՟ յերկինս եւ յերկ-
րի․ 'ի քո անարատ 'ի կողդ ընկալար զխոցումն գեղար-
դեանն․ որ անպարտաւորելիդ էիր, պարտաւորեցար․ զի
զմեզս կողածնեն չարչարանօք քո բարձցես, եւ նոյն կե-
նացն հուպ արասցես ։ Ննջեցեր ընդ մեռեալս․ անմա-
հերդ անշնչացար՝ որ մեռելոց յոյսդ ես՝ եւ կենք անլու-
ծանելի մինչեւ յօր կրկնակի գալստեան քոյ․ 'ի գերեզմա-
նի եղար ընդ մեռեալսն կնքեալ վիմաւ, զի 'ի հողոյ
'ի նորոգութի՟ կենաց եկեսցեն ։ Որ խոստացար զարա-
րածս միանգամայն նորոգել եւ կեցուցանել․ զապակա-
նեալն 'ի հողոյ առնել անապական, զոր ածայինն բա-
նիւդ ասացեր զյարութի՟ շնորհել մեռելոց ։ Ա՜ զսիրե-
լիս քո՝ որք հաւատացին գալստեան քոյ առանց եր-
կուանալոյ, եւ պահեցին զպատուիրանս քո, եւ հաղորդ-
եղեն քեզ 'ի չարչարանս եւ 'ի մահ, հրաւիրեսցես 'ի մա-

Ի քահանայանալն աղօթելոյ։

Հանեալ ՚ի կեանս ։ ՚ի խաւարէ յանբաւ և յանճառ լոյսդ, ՚ի վայելել զվառս արքայութեան քո ։ որպէս և առասցեր, թէ ուր եմ ես, անդ և պաշտօնեայն իմ եղիցի ։ Արդ՝ յիշեա զհոգի ծառայիս քո՝ որ ըստ մեծի հրամանաց քո, յայսմ կենցաղոյս առ քեզ փոխեցաւ ։ և ե՛լից զժամանակս կենաց աշխարհիս, դառնալ ՚ի նոյն հող ուստի ստեղծաւ ։ և եդաւ ՚ի հող մահու՝ որ է մայր մեր ամենեցուն և առագաստ մարմնոց մերոց։ Եւ ՚ի միւսանգամ գալստեանն քո յորժամ երևիս փառօք և թագաւորութեամբ քով՝ և ՚ի նոյն հողոյ ստեղծանես անապական զհողացեալ մարմինս, արժանի արա զսա լսել զձայն աւետաւոր յարութեան է սէրն և առաքինեաց՝ որք իցեն ընդ աջմէ մեծութեան փառաց քոց։ Աղաչեմք զքեզ և խնդրեմք ՚ի քէն ։ մի՛ յանարժանութիւն մեր հայելով, արդելցես զշնորհս մարդասիրութեան քո ։ այլ արասցես ըստ մեծի ողորմութեան քում ։ Ջնջեա՛ զձեռագիր յանցանաց հրաժարեալ (այս անուն) քահանայիս ։ և թող զմեղս սորա՝ զկամայ և զակամայ, զգիտութեան և զանգիտութեան ։ Բարեխօսութեամբ որ ամենայնիւ անարատ կուսին և մօր քոյ՝ և ամենայն սրբոց քոց, յիշեա՛ զհրաժարեալ հոգիս որ առ քեզ փոխեցաւ ։ Տէր և դատաւոր, լո՛ւր պաղատանաց պաշտօնէից ժողովրդեանս ։ և դատաւորեա՛ զհոգի սորա ՚ի դասս ընտրելոց քոց ։ Այլ և ստեղծիչ ամենայնի, արա՛ զսա արժանի լսել զձայն ամենայն փողոյ յարութեան ։ Վերանորոգեա՛ վայելչապէս ՚ի հողոյ ծնանել զնոյն մարմին, նորոգել ՚ի փառս քո ։ զխնամս մահու զոր թշնամին ասականեաց՝ քա՛րձ ՚ի սմանէ քո անոխակալ մարդասիրելոյս, որ ՚ի մէնջ հրաժարեաց առ քեզ գալով ։ և թող զմեղս սո՛ր ։ և թեթևացո՛ զծանրութիւն բեռին մեղաց սորա ։ Եւ թո

ղու

՚Ի գաւառին կամ ՚ի յերկրին տան, յԱրևմտակողմն :

զութեան շնորհեա Տէր Ժողովրդեանս, զի օրհնեալքս ՚ի սմանէ և մկրտեալքս՝ արժանաւորք լիցին արքայութեդ երկնից : Զմեղսաքաւիչ պատարագն մատուցեալ ՚ի սմանէ յաղագս հոգւոյ ննջեցելոցն, ընկալցիս՝ և Թողութեան շնորհեսցես ամենեցուն առ հասարակ : Ա՛յլ Տէր Տէր՝ Տէր և արարիչ բոլորից, տուր մխիԹարութիւն և ըսփոփանս Ժողովրդեանս քահանայիս . որք լալով և արտասուօք մորմոքին վասն հրաժարման սորա : Այլ զմեզ զհաւատացեալքս ՚ի քեզ օրհնեա . զի ամենասուրբ երրորդութեանդ տացուք ամենեքեան զփառս և զգոհանութիւն և զպատիւ . այժմ և միշտ և յա" :

Խաղաղութիւն ամենեցուն : Աստուծոյ երկիր պագեսցուք :

Օրհնեալ ես Տէր Աստուած արարիչ ամենայն արարածոց . որ արարեր զերկինս և զերկիր և զամենայն որ ՚ի նոսա, և դարձեալ աւեր զհողն յերկիր . և ստեղծեր զմարդն կենդանի և խօսուն . և եդեր զնա ՚ի դրախտին փափկութեան գործել զնա և պահել : Այլ յանցանել նորա զպատուիրանաւ քո՝ մահու տիրացուցեր զնա, ՚ի դառնալ յերկիր ուստի առաւ : Այլ իջանելով քո ՚ի հող մահու՝ վերակոչեցեր զմեռեալ բնութիւս ՚ի կեանս և յանապականութիւն : Այլ այժմ ըստ նոյնոյ Աստուածային անդարձ վճռոյ՝ կոչեցեր զծառայս քո դառնալ ՚ի հող յորմէ ստեղծաւ . զի ՚ի միւսանգամ գալստեան քո ՚ի հնչել տիեզերալուր բարբառոյ փողոյն ազդեցութեամբ՝ նորոգեսցի անմահութեամբ ՚ի վերանալ ՚ի կեանս անապական : Վասն որոյ աղաչեմք ըզքեզ մարդասէր Տէր, արա այցելութիւն ծառայիս քո այսորիկ ՚ի յայնմ աւուրն մեծի՝ ներելով ամենից սխալանաց սորին, և բանալով սմա զմուտ յաւիտենական կենացդ :

՝Քահանայականաց առնելոյ:

Նայեաց: Տէ՛ր մխիթարեա՛ զժողովուրդս քո՝ որք եկեալ են յուղարկել զսա զհետ ա͞ծ ննջեցելոց մերոյ: Տէ՛ր այժմ մա՛րդասէր տէր, տո՛ւր համբերութիւն սրտի, և մխիթարեա՛ զսոսա ողորմութեա͞մբ քով: և զհոգիս ծառայիս քո հանգո՛ ը͞նդ սուրբս քո: Ո՞վ յաւիտենական՝ որ արժանի արարեր ըզ ծառայս քո դառնալ 'ի հող ուստի ստեղծեր, հանգո՛ զհոգի սորա: և պահեա՛ անարատ իբրև զգանձս պատուա-կանս ա͞ծութեա͞նդ քո: զի ծառայ քո է՝ և հաւատա-ցեալ է 'ի տէր մեր յի͞ս ք͞ս: յիշեա՛ զքեզ տէր 'ի մեր հան-գուցեալ քահանայիս այսօրիկ: Յիշեա՛ տէր զհոգի սորա: և խառնեա՛ 'ի դասս հրեշտակաց քոց, և 'ի գունդս այն-ցիկ՝ որք սիրեցին զօր երևելոյ գալստեան քո: Տէ՛ր 'ի կոչել ա͞ձայնից փողոյ երևմամբ ն͞շ խաչին, 'ի լուսոյն պայծառասցի: ստեանելով սա զանանց լոյսն և զանա-պական զեղ կերպարանին: և զուարթերես կացցէ ընդ աջմէ ահաւոր բեմիդ: և առանց ամօթոյ տեսցէ զթա-գաւորդ երկնաւոր: և լուիցէ զձայնդ աւետաւոր թէ՝ եկայք օրհնեալք հօր իմոյ՝ ժառանգեցէք զյաւիտե-նական ուրախութիւն: և գոհանալով փառաւորեսցէ զքեզ ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ: այժմ և:

Յորժամ վախճանեսցի Աստուածորդ իցէ նուէր վ͞կանի, ասա Աշխարհս ևս կարգա: 'Ի վերայ Կաթողիկոսի ևս կարգա:

Ա բազում ողորմ, ա͞ծ արարիչ մշտնջենա-ւոր: որ պատուեցեր զմարդն փառօք: և պսակեցեր շնորհօք և իմաստութեա͞մբ: ընտրեցեր հոգւովդ քով սրբով զմարգարէսն՝ և օծեր իւղով սրբութեա͞ն զքահանայս: կոչեցեր զառաքեալսն 'ի

Աստուածորդւոյդ է յարուցն՝ որ զկենդանեաց տէր լինիս:
'ի քարոզութիւն աւետարանի փառաց քոց, և յօրինեցեր ըզ
վեցամսա տեսուչս ժողովրդեան քոյ՝ զոր փրկեցեր արեամբ
միածնին քո: Դու տէր՝ ընտրեցեր (զայս անուն) քահա-
նայ, որ այցելու է հովուեաց զժողովուրդս քո. և ը̅ հրա
մանի տեսչութե կոչեցեր 'ի հանգիստ քո՝ փոխխմամբ ժա
մանակեայ մահու՝ որով առ քեզ գայ ամ մեղի: Արդ՝ ա-
հա այժմ հրաժարիմք և հրաժարեցուցանեմք արտասու-
օք. և աղաչեմք 'ի մէջ եկեղեցւոյ քոյ սրբոյ. ով տէր
զսա մեզ 'ի սփոփանս և 'ի վայելչութի հոգւոյ մերոյ, ով
պահեցեր զմեզ աղօթիւք սո 'ի փորձութեց յերևելեաց և
յաներևութից, տուր մեզ և յաջորդ այրին աթոռոյս
ընտրեալ հովիւ՝ և պաշտօնեայ անբիծ և ուղղափառ.
և մի թողուր զկենդանի հօտս քոյ 'ի նմանախնամող վերակա
ցութե հոգւոյդ սրբոյ: Այլ զհոգիս սո բնակեցո 'ի պատրաս-
տեալ օթևանս կամարարոյ քոյ. և զմարդկօրէն սխալանս
սորա անտես արա: Զի դու ես քաւիչ մեղաց. որ միայն
ունիս զիշխանութի արձակել զկապանեալս 'ի բանսար-
կուէն: Պայծառացո զյիշատակ սո 'ի մէջ եկեղեցւոյ
քոյ և ժողովրդեանս. և առաջնորդեա սմա հոգւովդ
քով սրբով 'ի յերկիր ուղիղ՝ որ հանգուցանես զարժա-
նաւորս 'ի մարմնի: Զի դու ես յարութի և կեանք ամենե-
ցուն. և քեզ վայելէ փառք իշխանութի և պա":

Շարական, Նահատակելով զչարն էշին": Ձէ տուն Արք.
Հոգւոյ": Հայր մեր":

Յետ այսորիկ սկսանին առնել զերեքսրբեանն մինչև յիշխանաց հանդերձեցին: Այլ քահանայն տանին 'ի հանգըս տեան վերն. առնելով Շարական ԵՃ,

Այսր

Ի գերեզմանն տանիլոյ նորա՝ ի ճանապարհին ։
Նայսօր ժողովեալսեցն ի միասին ։ խաղ ասորձն ասեն ․ եւ ընե
՚ւ Բաւականանայի, ղ՚անգամեան ՟ը՟ յայն նա ասեն, որչան
ղինայէ ։ Յորժամ հարկանի փող գալ՛՛ ։ (եւ այլն որ ղնի ։)
Եւ ՚ի ճանապարհին ՚ի Չորս տեղիս Հանգիստ ասեն, եւ
չորս տուն Աւետարան կարդան ։

Հանգիստ Առաջին ։ Արթնւ

Աւետարանս որ ըստ Մատթէոսի ։

Յայնմ ժամանակի պատասխանի ետ յի՛՝ եւ ասէ ։ Գոհանամ զքեն հայր՝ տէր երկնի եւ երկրի ․ զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ՚ի գիտնոց՝ եւ յայտնեցեր տղայոց ։ Այո՛ հայր՝ զի այսպէս հաճոյ եղեւ առաջի քո ։ Ամենայն ինչ տուեալ է ինձ ՚ի հօրէ իմմէ ։ եւ ո՛չ ոք ճանաչէ զորդի՝ եթէ ոչ հայր ։ եւ ո՛չ զհայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ որդի ։ եւ ում որդին կամիցի յայտնել ։ Եկա՛յք առ իս ամ վաստակեալք եւ բեռնաւորք՝ եւ ես հանգուցից զձեզ ։ Առէք զլուծ իմ ՚ի ձեզ ։ եւ ուսարուք յինէն՝ զի հեզ եմ ․ եւ խոնարհ սրտիւ ։ եւ գտջիք հանգիստ անձանց ձերոց ։ Զի լուծ իմ քաղցր է ։ եւ բեռն իմ փոքրոգի ։

Ո՟ հնի ասեն Հոգւոյ՝ եւ Հայր մեր՛՛ ։

Հանգիստ Երկրորդ ։ Արթնւ

Աւետարանս որ ըստ Մարկոսի ։

Եւ ասէր՝ այսպէս է արքայութիւն այ ․ որպէս զի այր մի արկանիցէ զսերմանիս յերկիր ։ Եւ ննջիցէ եւ յառնիցէ զցայգ եւ զցերեկ ․ եւ սեր_
մն

Ի Գերեզմանն տանելոյ կարգն է :

մանիքն բուսանիցին եւ աճիցին : եւ նա ոչ գիտէ, թէ
երկիրն ինքնին բերէ զպտուղն · նախ զխոտն՝ եւ ապա
զհասկն՝ ապա ցորեան ատոք ի հասկին : Եւ յորժամ
տայցէ զպտուղն, վաղվաղակի առաքէ մանգաղ՝ զի հա-
սեալ են հունձք : Եւ ասէր · Ո՞ւմ նմանեցուսցուք զար-
քայութ̃ին ա̃յ · կամ որո՞վ առակաւ առակեսցուք զնա :
Որպէս հատն մանանխոյ՝ որ յորժամ սերմանիցի յերկրի՝
փոքրագոյն է քան զա̃մ սերմանիս՝ որք են յերկրի : Եւ
յորժամ սերմանիցի, բուսանի, եւ լինի մեծ քան զա̃մ
բանջար · եւ արձակէ ոստս մեծամեծս մինչեւ բաւական
լինել ընդ հովանեաւ նորա թռչնոց երկնից բնակել :
Եւ այնպիսի առակօք խօսէր ը̃ նս̃ զբանն, ո̃ր կարող
լինէին լսել : Եւ առանց առակի ոչինչ խօսէր ը̃ նս̃ ·
բայց առանձինն աշակերտացն իւրոց մեկնէր զա̃մ :

Հոգւոց : Հայր մեր :

Զանգիտ Նորոգ : Մրթին :

Աւետարան որ ըստ Ղուկասու :

Պատասխանի ետ նոցա յ̃ս եւ ասէ · Որդիք աշխար-
հիս այսորիկ կանայս առնեն, եւ արանց լինին :
Իսկ որք արժանի լինիցին այնմ աշխարհի հասա-
նել՝ եւ յարութեանն որ ի մեռելոց, ոչ կանայս առնեն · եւ
ոչ արանց լինին : Զի եւ ոչ մեռանել եւս կարեն ·
զի հաւասար հրեշտակաց են՝ եւ որդիք ա̃յ · քանզի յա-
րութեան որդիք են : Այլ զի յառնեն մեռեալք, եւ
Մովսէս գուշակեաց ի մորենւոջն, որպէս ասէ զՏ̃ր ա̃յ
Աբրահամու · եւ զա̃յ Իսահակայ · եւ զա̃յ Յակոբայ : Եւ

 ա̃ծ

•Ըահանայական տանելոյ•

ա͞ծ չէ մեռելոց՝ այլ կենդանեաց · զի ամենեքին նմա կենդանիք են։ Պատասխանի ետուն ոմանք 'ի դպրացն և ասեն · վարդապետ, բարւոք ասացեր։ Եւ ո՛չ ևս ոք իշխէր հարցանել զնա՝ և ոչինչ·

Հոգւոյ"։ Հայր մեր"։

Հանգիստ Չորրորդ։ Ութն։

Աւետարանս որ ըստ Յոհաննու։

Պատասխանի ետ յի͞ս և ասէ ցն͞ս։ ամէն ամէն ասեմ ձեզ· ո՛չ կարէ որդի մարդոյ առնել յանձնէ, և ոչինչ, եթէ ոչ տեսանիցէ զհայրն զի առնէ· զի զոր նայն առնէ, զնոյն և որդին նմին նման գործէ։ Զի հայր սիրէ զորդի, և զամ͞ե ինչ ցուցանէ նմա՝ զոր ինքն առնէ։ և մեծամեծս ևս քան զսոյնս ցուցանէ նմա ըզ գործս, ընդ որս դուք զարմանայք։ Զի որպէս հայր յարուցանէ զմեռեալս և կենդանի առնէ՝ նոյնպէս և որդի՝ զորս կամի կենդանի առնէ։ Եւ ո՛չ եթէ հայր դատէ զոք՝ այլ զամ͞ե դատաստան ետ որդւոյ իւրոյ։ Զի ամենեքեան պատուեսցեն զորդին՝ որպէս պատուեն զհայրն· որ ոչ պատուէ զորդին, ո՛չ պատուէ զհայր զառաքիչն նորա։

Հոգւոյ"։ Հայր մեր"։

[illegible], 'ի հանգիստ
քո՛ տէր ո՛ւր ամենայն սրբո՛ք քո հա՛նգչին"։
Ըստ յորժամ [illegible] ասեն, [illegible]
[illegible]"։
Ըստ [illegible],
[illegible] կանոնագլուխ [illegible],

Ի վերայ գերեզմանին ասա ։

Աշխարհք հաւատացեալն զքեզ երգեն · ալէլուիայ ·
ալէլուիայ ։ Այլ ի բանից քոց երգեաւ սիրտ իմ ·
ալէ ։ Ջանացայ ես ի բանս քո · որպէս այն որ գտանէ
աւարս բազում · ալէ ։ Զմեղս ատեցի և անարգեցի · և զօ
րէնս քո սիրեցի · ալէ ։ Եօթն անգամ յաւուր օրհ_
նեցից զքեզ · վս իրաւանց և արդարութեն քո · ալէ ։
Խաղաղութի բազում է այնոցիկ ոյք սիրեն զօրէնս
քո · և ոչ գոյ ի նոսա գայթակղութիւն · ալէ ։ Ակնա_
ցի փրկութեն քում տր · և զպատուիրանս քո սիրե_
ցի · ալէ ։ Պահեաց անձն իմ զվկայութիւնս քո և
սիրեաց զնոսա յոյժ · ալէ ։ Պահեցից զպատուիրանս և
զվկայութիս քո · զի ամ ճանապարհք իմ առաջի քո են · ալէ ։
Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո տր · ըստ բա_
նի քում իմաստուն արա զիս · ալէլուիայ · ալէլու_
իայ · ալէլուիայ ։ Մտցեն աղօթք իմ առաջի քո տր ·
և բանիւ քով փրկեա զիս · ալէ ։ Բղխեսցեն շրթ_
թունք իմ զօրհնութիւնս քո · յորժամ ուսուսցես ինձ
զարդարութի զբա քո · ալէ ։ Խօսեսցի լեզու իմ զբա_
նս քո · զի ամ պատուիրանք քո արդարութի են · ալէ ։
Եղիցի ձեռն քո ի կեցուցանել զիս · զի զպատուի_
րանս քո ընտրեցի · ալէ ։ Ցանկացայ փրկութեան
քում տր · և օրէնք քո խորհուրդ իմ են · ալէ ։ Կեցցէ անձն
իմ օրհնեսցէ զքեզ · և իրաւունք քո օգնեսցեն ինձ ·
ալէ ։ Մոլորեցայ ես որպէս ոչխար կորուսեալ · խնդրեա
զծառայս քո · զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ ·
ալէլու ։ փառք հօր և ։ Այժմ և միշտ ։ ալէլու ։

Քահանայական ասելոյ։

Սարկաւագն ժարողէ, Եւ ևս խաղաղութե զՏր աղաչես"։
Եւ քահանայն ասէ՝ Օրհնութի և փառք Հօր և որդւոյ և"։
Եւ ասեն երգս Շարական Սհաւ օրհնութիւ, ձի.
'Ի վերնական յինէն անուրց իմոց տր"։ Ամենասբբ երրոր_ դութեանդ երկրպագեմ"։ Սարգաւէն 'ի փորոյ կնոջ"։

Քարոզէ սարկաւագն.

Վասն ցողելոյ 'ի մեզ զցօղն ողորմութե. և փրկելոյ զմեզ 'ի հրոյն յաւիտենից. զՏր աղաչեսցուք։
Վասն երևելոյ մեզ ճառագայթից սբ խաչին որ փայլէ յարևելից 'ի միւսանգամ գալստեանն տն. զՏր աղա"։
Վասն ահագին գոչման փողոյն աւետաւոր հրեշտա_ կին՝ որ ժողովէ զմարդիկ 'ի կենանան յաւիտենից. զՏր"։
Վս ընկերոյ սմա զձայն երանաւէտ փողոյն որ ասէ՝ եկայք օրհնեալք հօր իմոյ՝ ժառանգեցէք զարքայութին. զՏր"։
Վս հոգւոյն։ Եւ ևս միա"։ Զանձինս մեր"։ Ողորմեայ"։

Եւ քահանայն ասէ զԱղօթս։

Տէր մեր և յոյս՝ որ նստիս յաթոռս քերովբէա_ կանս, և օրհնիս 'ի դասուց հրեշտակաց և փառաւորիս 'ի մարդկանէ. և ծանուցեալ է անուն քո ընդ ամ ազգս, և ընդունիս զթու զա_ ռաջանս մարդկան։ Եւ այժմ մարդասիրութբ քով թո՛ղ զյանցանս սորա զծածուկ և զյայտնի։ զի ոչոք է առանց մեղաց 'ի վր երկրի. այլ դու որ մեղաց սրբիչ ես և քաւ_ իչ, թո՛ղ զմեղս և քաւեա՛ զանօրէնութիս սորա։ Եւ մի զի՝ կացուցեր զսա քահանայ և հովիւ ժողովրդեան քում, ուստի՝ զորոյ զմեղս 'ի ժողովրդենէ քում մեկ խնդ_ րուածոյ խնդրեալ իցէ սորա 'ի քէն 'ի ձեռն սբ պատա

րա

՚Ի վ̃ր գերեզմանին ընթերցիր ։

բազկին զենման որդւոյ քո ՚ի վ̃ր սբ̃յ սեղանոյն առ ՚ի քա-ւել , հաշտեա՛ տր̃ և թո՛ղ նոցա՝ որ անկարօտ են յամս ։ Նաև զանուն սորա գրեա՛ ՚ի դպրութե̃ կենաց . և զհոգի սորա ընկա՛լ ՚ի խորանս սբ̃ց քոց . զի և մեք գոհանալով փառաւորեսցուք զքեզ ը̃ որդւոյ և ը̃ սբ̃յ հոգւոյդ"։

Խաղաղութիւն ամենեցուն ։ Ա̃յ երկիր պագէս"։

Տէ̃ր Ած̃ լուսաւորիչ հոգւոց և պահապան մարմնոց . որ և զմարմինս արանց արդարոց փառաւորեցեր՝ որք զքեզ բարեպաշտութը̃ փառաւորեցին . ցուցանելով ամենե-ցուն , եթէ ո՛չ միայն յոգիս , այլ և ՚ի մարմինս արդարոց յայտնին զօրութիւնք , առ ՚ի բարեպաշտիլ առ քեզ ։ Նաև այժմ աղաչեմք զքեզ մարդասէր տր̃ և բարերար . ընկա՛լ զաղաչանս ժողովրդեան քոյ . և դասաւորեա՛ ՚ի դասս սրբոց քոց առաքելոց՝ մարգարէից և նահատակաց ։ Նաև զմեզ զամենեսեան զհաւատացեալքս ՚ի քեզ արժանա-ւորեա փառաւորել զհայր և զորդի և զսբ̃ հոգիդ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւէի"։

Յետ այսորիկ ասասցեն առաւել Սաղմոս ողբոցն , ՃԺԳ ։

Դա՛րձ ա՛նձն իմ ՚ի հանգիստ քո . զի տէ՛ր կո՛չեաց ը̃զ քե՛զ ։ Սի՛րեցի զի լուիցէ տէր ըզձա՛յն աղօթից իմո՛ց . զի խոնարհեցո՛յց զունկն"։ (ո՛վէց ... ՚ի ...ան ... ։)

Ընթերցուած ՚ի Չորրորդ Թագաւորութենէ ։

Եղիսէէ հիւանդացաւ հիւանդութիւն որով և մեռաւ իսկ ։ և էջ առ նա յովաս արքայ իս-րայէլի . և եղաց ՚ի վ̃ր երեսաց նորա՝ և ասէ , հա՛յր՝

Վերահանոյաթաղ ատեկլոյ։

հա՛յր՝ հա՛յր․ կառքդ իսրայէլի և հեծեալք նորա։ Եւ ոչ ևս ետես զնա եղիսէէ․ ա՛ռ դու զաղեղն քո՝ և զնետս քո։ և էառ զաղեղնն և զնետս․ Եւ ասէ ցարքայն իսրայէլի․ մուտ ընդ աղեղն ձեռօք քովք։ և եմուտ ընդ աղեղնն ձեռօք իւրովք։ և եդ եղիսէէ զձեռն իւր ի վերայ ձեռաց ար_քային։ Եւ ասէ․ բա՛ց զպատուհանդ՝ որ է ընդ արևելս։ և եբաց։ և ասէ եղիսէէ․ ձգեա՛․ և ձգեաց։ և ասէ՝ նետ փրկութեան տեառն․ և նետ փրկութեան ընդդէմ ասորւոց․ և հարցես զասորիս յափէկ մինչև իսպառ։ Եւ ասէ ցնա եղիսէէ․ ա՛ռ դու քեզ նետս․ և էառ․ և ասէ ցարքայն իսրայէլի․ ձգեա՛՝ և հա՛ր զգետինդ։ և էհար արքայ ե_րիցս՝ և եկաց։ Եւ տրտմեցաւ ի վերայ նորա այրն աստուծոյ․ և ասէ՝ եթէ հարեալ էիր հնգիցս կամ վեցիցս, յայնժամ հարկանէիր զասորիս մինչև իսպառ։ և արդ երիցս հարցես զասորիս։ Եւ մեռաւ եղիսէէ՝ և թաղեցին զնա։ և մենամարտիկքն մովաբու եկին յերկիրն ի գալ տարւոյն։ Եւ եղև ի թաղել նոցա զայր մի․ և ահա տեսին զմենամարտիկն՝ և ընկեցին զայրն ի գերեզմանն եղիսէի․ և գնաց՝ և մերձեցաւ յոսկերսն եղիսէի․ և կենդանացաւ՝ և կանգնեցաւ ի վերայ ոտից իւրոց։

Ընթերցուած յԱռաքելոյ։

Զի Աստուած հաստատեաց զմարդն յանեղծութիւն։ և ի պատկեր իւրոյ բարերարութեան արար զնա։ Իսկ նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ։ և փոր_ձեն զնա՝ որք նորա վիճակին սակի են։ Բայց ոգիք ար_դարոց ի ձեռն աստուծոյ են․ և ոչ մերձեսցի ի նոսա մահ։ Երևե_ցան յաչս անզգամաց թէ մեռան․ և համարեցան չարչա_րանք ելք նոցա․ և գնալն ի մէնջ բեկումն․ բայց նոքա են ի

Ի վերայ գերեզմանին նորդա·

Ի խաղաղութե։ Զի թէպէտ յաչս մարդկան տանջեցան, այլ յոյս նոցա լի է անմահութե։ Սակաւիկ ինչ խրա-տեալք գտցեն զմեծ բարութիւն· զի ա՟ծ փորձեաց զն՟ս և եգիտ իւր արժանիս։ Իբրև ոսկի ՚ի բովս քննեաց զնոսա· և որպէս զողջակէզս զոհի ընկալաւ զն՟ս· և ՚ի ժամանակի այցելութե իւրեանց պայծառասցին։

Ընթերցուած յԵսայեայ Մարգարէէ·

Այսպէս ասէ տ՟ր· և կատարեսցին աւուրք սգոյ քոյ։ Եւ ժողովուրդ քո ամենևին արդար· և յաւի-տեանս ժառանգեսցեն զերկիր· պահել զնորատունկս գործոյ ձեռաց իւրեանց ՚ի փառս։ Սակաւաւորն հա-զարաւոր եղիցի՝ և կրտսերն յազգ մծ· զի ես տ՟ր ընդ ժամանակս ժամանակս ժողովեցից զն՟ս։ Հոգի տ՟ն ՚ի վ՟ր իմ· վ՟ն որոյ և էօծ իսկ զիս։ աւետարանել աղքատաց առաքեաց զիս· բժշկել զբեկեալս սրտիւք· քարոզել գերեաց զթողութի՝ և կուրաց տեսանել։ Կոչել ամ տ՟ն ընդունելի· և օր հատուցման ա՟յ մերոյ։ մխիթարել զա՟մ սգաւորս։ Տալ սգաւորաց սիոնի փառս։ փոխա-նակ մոխրոյն օծումն ուրախութե· և սգաւորացն հան-դերձ փառաց՝ փոխանակ ոգւոյն վհատութե։ և կոչես-ցին նոքա ազգք արդարութե՝ տունկ տ՟ն ՚ի փառս։ Եւ շինեսցեն զաւերակս յաւիտենից· և զյառաջագոյն ա-ւերեալսն կանգնեսցեն· և նորոգեսցեն զքաղաքս աւե-րեալս յազգաց մինչև յազգս։ Եւ եկեսցեն օտարածինք հովիւք խաշանց քոց· և այլազգիք մաճկալք և այգե-գործք քո։ Եւ դուք քահանայք տ՟ն կոչիցիք՝ և պաշ-տօնեայք ա՟յ մերոյ անուանիցիք· զզօրութիւն ազգաց կե-րիջիք· և մեծութե նոցա սքանչելի լինիջիք։ փոխանակ ա-
մօ

՝Քահանայապետաց տանելոյ։

մօթոյն ձերոյ կրկին ուրախութի. և փոխանակ անարգա֊
նաց ձերոց ընծայութի. և այսպէս զերկիրն յերկրորդում
ժառանգեսցեն. և ուրախութի յաւիտենից ՚ի վերայ
գլխոց նոցա։

Ընթերցուած յԵրեմիայ Մարգարէէ.

Յիշեցի յաղքատութէ իմմէ. և՛ի հալածանաց իմոց՝
դառնութի և բարկութ։ Յուշ եղեն մտօնգամայն.
հանճարեսցէ լիս անձն իմ։ Զայս ինչ կարգեցի ՚ի սրտի
իմում. վս այնորիկ և համբերեցից նմա։ Ողորմութիք
տն անպակասք են. և ոչ նուաղին գթութիք նորա։ ՚Ի
նորոգութիւն առաւօտու բազմանայ ճշմարտութի քո տր.
Բաժին անձն իմ, բայ՝ բաժին իմ է նա. վս այնորիկ ակն
կալայց նմա։ Բարերար է տծ ՚ի վր համբերողաց իւրոց.
և անձն՝ որ խնդրէ զնա։ Բարի է՝ որ համբերէ նմա ճըշ֊
մարտութե. և հանգչի նա ՚ի փրկութե տն։ Բարի է
մարդոյ՝ որ առնու զլուծ խոնարհութե ՚ի մանկութէ
իւրմէ։ Նստցի միայն լուռ ՚ի տան իւրում. զի ան֊
ձամբ իւրով էառ յանձն զլուծն քո. Տացէ հողոյ զբե֊
րան իւր. վս զի կայ յոյս։ Կարդացի զանուն քո տր ՚ի
գբոյ ստորակայից. և դու լուար ձայնի իմում։ Մի
թաքուցաներ զունկն քո ՚ի խնդրուածոց իմոց. այլ տ
արձակեա ինձ, փրկեա զիս։ Դու յօգնել ինձ մերձե֊
ցար. և ասացեր, բամ՝ յորում աղօթս կարդացի առ քեզ՝
մի երկիցես։ Դատեցեր տր զդատաստան անձին իմոյ
փրկեցեր տր զկեանս իմ։ Տեսեր տր զխռովութիւնս իմ.
դատեցեր տր զդատաստանս իմ։ Տեսեր զամ վրէժս
իմ. հայեցար յամենայն խորհուրդս իմ։

***

՚Ի վերայ գերեզմանին ընթերցիլ.

Պօղոսի առաքելոյն ՚ի Կորնթացւոց առաջին թղթոյն.

Սրբ՝ զխորհուրդ մի ասեմ ձեզ. ամենեքեան ննջեսցուք, այլ ո՛չ ամենեքեան նորոգեսցուք. յանկարծակի յական թօթափել ՚ի փող յետին. քանզի փող հարկանի. եւ մեռեալք յարիցեն առանց ապականութեան. եւ մեք նորոգեսցուք: Զի պարտ է ապականութեանս այսմիկ զգենուլ զանապականութիւն. եւ մահկանացուիս այսմիկ զգենուլ զանմահութիւն: Այլ յորժամ մահկանացուս այս՝ զգեցցի զանմահութիւն, եւ ապականացուս զանապականութիւն, յայնժամ եղիցի բանն՝ որ գրեալ է. եթէ ընկլաւ մահ ՚ի յաղթութիւն: Ո՞ւր է մահ յաղթութիւն քո. ո՞ւր դժոխք խայթոց քո: Խայթոց մահու մեղք են, եւ զօրութիւն մեղաց օրէնք: Այլ շնորհք այ՝ որ ետ մեզ զյաղթութիւն ՚ի ձեռն տն մերոյ յի քի. որում փառք յաւիտեանս ամէն.

Ալէլուիայ: Սաղմոս 70. ՚Ի քեզ տր յուսացայ մի՛ ամա":

Աւետարանն որ ըստ Մատթէոսի.

Յայնժամ պատասխանի ետ պետրոս եւ ասէ ցնա. ահաւասիկ մեք թողաք զամ եւ եկաք զկնի քո. արդ զի՞նչ լինիցի մեզ: Եւ ասէ ցնոսա յս, ամէն ասեմ ձեզ. զի դուք՝ որք եկիք զկնի իմ, ՚ի միւսանգամ գալստեան՝ յորժամ նստցի որդի մարդոյ յաթոռ փառաց իւրոյ, նստջիք եւ դուք յերկոտասան աթոռ դատել զերկոտասան ազգս իսրայէլի: Եւ ամ որ եթող զտուն, կամ զեղբարս՝ կամ զքորս՝ կամ զհայր՝ կամ զմայր՝ կամ զկին՝ կամ զորդիս՝ կամ զագարակս վն անուան իմոյ, հարիւրապատիկ առցէ՝ եւ զկեանսն յաւիտենիցն ժառանգեսցէ:

Եւ

Քահանայաբար ասելոյ։

Բազումք եղիցին առաջինք յետինք՝ և յետինք առաջինք։

Քարոզէ՛, Վասն գտանելոյ մեզ"։

Ս՟ ասէ զԱ՟ղօթս։

ռ քեզ Թագաւոր յաւիտենական Տէր՝ և ա-
րարող բոլորից գոյութեանց, հայր Տն մերոյ յի քի։
քեզ խոնարհեցուցանեմք զծունր սրտից մերոց
ամ միաբան հաւատացեալքս․ և աղաչեմք զան-
բաւ ողորմութիւն քո։ Զանգի՛ զհոգի ծառայիս քո յարքայ-
ութեան քում, ՚ի թիւ այնոցիկ որք կարգեցան յաջա-
կողմեան միածնին քո․ յորժամ կոչեսցէ զսա յերկնից ՚ի
պատրաստ բնակութիւն քումն ՚ի դատաստան յաւուրն
յետնում, ուր դեռ հրեշտակք և հեղեղք բոցեղէնք
յորդեալանց բարկութբ զամ երկիր հրդեհեալ կիզուն։
Յայնժամ աւուր բարեգութ Տր՝ գթա՛ ՚ի գիրս արեան
միածնի քո Տն մերոյ և փրկչին յի քի, որ նորոգեաց ըզ-
տիեզերս կամաւոր խոնարհութբ իւրով։ Ընդ որում
և որով գոհութիւն և օրհնութիւն վերընծայի քեզ հօր և կեն-
դանատու սբ հոգւոյդ․ այժմ և միշտ"։

Խաղաղութիւն ամենեցուն։ Ա՟ծ երկիր պագէսց"։

Ա՟ծ ճշմարտութեան և Տր ողորմութեան, հայեա՛ց ՚ի պատ-
րաստ բնակութիւն քումն ՚ի պարզատանս ժողովրդեան
քո՝ զոր մատուցանեմք հաւատով վասն ծառայիս քո
(այս անուն) քահանայի։ Զի դու կացուցեր զմարդիկ
հոգեղէն սպասաւոր անտեսանելի փառաց էութեան քո։
Դու կոչեցեր զնախամարգարէն մովսէս ՚ի մորենւոյն
ձայնիւդ քով, և առաքեցեր զնա փրկել ժողովրդեան
քո։ Դու ընտրեցեր զահարոն և զորդիս նորա ՚ի պաշ-

տօն սրբութե , և փառաւորեցեր զնա մեծարելով օծ_
մամբ և վակասակաւ պսակօք • քոյին տեսչութե հրամայ
եցեր նմա ելանել 'ի լեառն , և առանձնեցեր զհոգի նորա
առ քեզ • և ընդ ամպածածուկ աջովդ քով ամփոփեցեր
զմարմին նր : Նաև ահա այժմ ծառայս քո և առաջնորդ
հօտի քոյ զոր ընտրեցեր 'ի գլուխ ժողովրդեան` կատա_
րեալ զասպարէզ նախաշաւիղ օրինադրութե քոյ • և ձե_
պեալ հոգի ոչ ըստ հրամանի կոչման քոյ` հանգուցեալ
'ի տաժանմանց մարմնական աշխատից • Արդ աղաչեմք
զգթութե քո տր , ընկալ զսա յանպատում ուրախու_
թիւնս • և զուարճացո զհոգի սորա յանանց խոստմանց
քոց վայելս • Ջնջեա տր զուխտ և զժառանգութիւն
քո , զոր փրկեցեր արեամբ քով : Օրհնեա տր և զընտա_
նութիւն սորա և զսուկերս , և պահպանական աջովդ
վերակացու լեր հոգւոյ և մարմնոյ սորա • զի դու ես վե_
րակացու և ժողովրդեան քոյոց կամարարաց` և չարեմարան
անկողոպտելի , որ անփոփես նախադահութե զվառ_
տակաւորս քո • և հանգուցանես 'ի գրկանս մշտնջենա_
ւոր փափկութեդ` որ կայ և պահի յուսացելոց 'ի
քս յս 'ի տր մեր : Նաև զմեզ արժանաւորս արա գնալ
'ի ճանապարհս քո , և 'ի դէպ ժամանակի ը̅ գլս̅ քո հա_
սանել 'ի խոստացեալ հանգիստն , և ընդ նոսին գոհացո_
ղական երգով փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սբյ
հոգւոյդ • այժմ և միշտ և յաւիտեանս":

Շարական, Աղերսանացն անապականութե": Դէ՛ հոգ. Նորէ,
Հոգւոյ": Հայր մեր":

Ապա ասէն Սաղմոս ՃԱ, Աւուրք իմ որպ հովանի անցին • և

·Քահանայաթող աւանէլոյ:

Ես որպէս խոտ ցամաքեցայ: փոխ, Տէր լուր աղօթից իմոց աղաղակ իմ առ քեզ եկեսցէ. մի դարձուցա:

Ընթերցուած յՈվսէայ Մարգարէէ:

Այսպէս ասէ Տր: Սերմանեցէք ձեզ յարդարութեան. և ժողովեցէք զպտուղ կենաց, լուսաւորեցէք ձեզ զլոյս գիտութե. խնդրեցէք զՏր` մինչև եկեսցէ առ ձեզ արդիւն արդարութեան:

Մահ Ովսէայ Մարգարէի:

Ովսէէ էր ի Բեթլամովթայ. ի ցեղէն Իսաքարայ. և շատ մարգարէացաւ ի վր Իսրայէլի: Մեռաւ խաղաղութե և թաղեցաւ յերկրի իւրում փառաւորապէս: Սա ետ նշան` թէ եկեսցէ Տր յերկիր` և ընդ մարդկան շրջեսցի. և կաղնին որ ի Սելով` բաժանեսցի յերկոտասան մասն. և եղիցի երկոտասան կաղնի: և զՏեառն երթիցեն և ճանաչեսցին երևելոյն Տյ. և նոյնա կեցցէ ամ մարդ:

Ընթերցուած յԱմովսայ Մարգարէէ:

Այսպէս ասէ Տր: Ատեցին ի դրունս զյանդիմանիչս. և զբանս սրբս պիղծս արարին: Վասն այնորիկ որ իմաստունն է` ի ժամանակին յայնմիկ լռեսցէ` զի ժամանակն չար է: Խնդրեցէք զբարի և մի զչար` զի կեցջիք` և եղիցի ընդ ձեզ Տր ամենակալ:

Մահ Ամովսայ Մարգարէի:

Ամովս էր ի Թեկուեայ. և Ամասիա արքայ բազում անգամ կոչկոճէր զնա: Իսկ յետոյ սպան զնա որդի նորա, բակեալ ջախջախեալ զծամիլիսն: Որ ոգեւոր եկն յերկիր իւր

ի վր գերեզմանին ։
իւր · և յետ սակաւ ժամուց մեռաւ և թաղեցաւ անդ ։

Ընթերցուած ի Միքիայ Մարգարէէ ։

Բայց ես Տն անկ կալայց · սպասեցից Այ փրկչի իմոյ · և լուիցէ ինձ Տր Ած իմ ։ Մի՛ ուան հար լինիր ինձ թշնամի իմ՝ զի գլորեցայ · միւսանգամ կանգնեցայց · զի եթէ նստայց ի խաւարի՝ Տր է իմ լոյս ։ Ըզբարկութն Տն համբերեցից՝ զի մեղայ նմա · մինչև արդարացուսցէ զդատաստան իմ · և արասցէ ինձ իրաւունս · և հանցէ զիս ի լոյս · և տեսից զարդարութն նորա ։

Սահ Միքիայ Մարգարէի ։

Միքիաս էր ի Մասորովթայ, ի գեղջէն եփրեմի ։ Նա բա-զում ինչ արարեալ նորա ընդ աքաաբայ · և յետոյ սպա-նեալ ի յովրամայ որդւոյ նր, ընկեցին եղեալ ի վախէ · վս զի յանդիմանեալ էր զնա ի վր ամբարշտութն հօր իւրոյ ։ և թաղեցաւ յերկիրն իւրում, մօտ ի շիրիմս յե-նակիմայ ։

Ընթերցուած Յովելեայ Մարգարէէ ։

Այսպէս ասէ Տր Ած ձեր · դարձարուք առ իս յամ սրտէ ձերմէ · պահօք՝ և լալով՝ և կոծով ։ Պատառ-եցէ՛ք զսիրտս ձեր՝ և մի՛ զհանդերձս · և դարձարուք առ Տր Ած ձեր · զի ողորմած՝ և գթած է, երկայնամիտ՝ և բազումողորմ · որ զղջանայ ի վր չարեաց ։

Սահ Յովէլեայ Մարգարէի ։

Յովէլ էր յազգէն ռուբէնի · յագարակէն բեթաքու-րայ ։ Մարգարէացաւ վս ուղու՝ և նուաղումն զոհից · և վս չարչարանաց մարգարէին արդարոյ · և թէ նուաճ նո-

րո

բոցին մեր արարածք ՚ի փրկութի ։ Մեռաւ խաղաղու-թեամբ, և թաղեցաւ յագարակի իւրում փառաւորապս ։

Ընթերցուած յԱբդիու Մարգարէ է ։

Այսպ ասէ տր ։ Եթէ ելցեն ապրեալք ՚ի լեռնէն սիո-նի՝ առնուլ զվրէժ ՚ի լեռնէն եսաւայ․ և եղիցի տն արքայութիւն ։

Մահ Աբդիու Մարգարէի ։

Աբդիու էր յերկրէն սիկիմայ, յագարակէն բեթքարի-մայ ։ Սա էր աշակերտ եղիայի, բազում վիշտս կրեաց վն նր զի ապրեցուսցէ զնա ։ Սա էր երրորդ յիսնապետն՝ յոր խնայեաց եղիա, և էջ առ ոքոզիա ։ Եւ յետոյ թո-ղեալ զպաշտաւնութի արքային՝ մարգարէանայր ։ Մե-ռաւ խաղաղութբ և թաղեցաւ առ հարս իւր ։

Ընթերցուած և Մահ Յովնանու Մարգարէի ։

Յովնան էր յերկրէն կարիաթարիմայ, որ է մերձ յա-զովտոս՝ ՚ի քաղաքն այլազգեաց ՚ի ծովեզերին ։ Եւ ընկեցեալ եղեալ ՚ի կիտէն արտաքս՝ չոգաւ ՚ի նինուէ ։ Եւ անտի դարձեալ՝ ոչ մնաց յերկրի իւրում․ այլ առեալ զմայր իւր՝ չոգաւ պանդխտեցաւ ՚ի սուր, ՚ի գաւառին այլազգեաց ընդ հեթանոսս ։ Բանզի ասէր՝ թէ այսպ բարձից զնախատինս իմ․ զի ստեցի ՚ի մարգարէանալն իմում վն նինուէի մեծի քաղաքին ։ Յայնժամ յանդիմա-նէր եղիա զաքայաբ՝ և զկին նր զեզաբէլ․ և կոչեաց սով ՚ի վր երկրի ։ Սա յետ փախուցեալ եկն ՚ի սարեփթա և եգիտ անդ զայրին հանդերձ որդւովն, և բնակեցաւ անդ եղիա․ քանզի ոչ կամէր լինել ընդ անթլփատս ։ Եւ օրհնեաց զնա վն ստորընկալութեն․ քանզի յառաջա-գոյն

'Ի վերայ գերեզմանին ։

գոյն ճանաչէր զնոսա 'ի վաղուց հետէ ։ Այլ իբրեւ մե-
ռաւ յովնան, յարոյց զնա տէր 'ի ձեռն եղիայի ։ եւ եցոյց
նմա, թէ ոչըք կարէ փախչել յայ ։ Այլ իբրեւ յարեաւ
յոնան յետ սովոյն, եկն յերկիրն յուդայ ։ եւ մեռաւ
մայր նորա 'ի ճանապարհին, եւ թաղեաց զնա մօտ 'ի
կաղնին դեբօրայ ։ Այլ բնակեցաւ յոնան յերկրին սարա-
բայ, եւ մեռաւ անդ՝ եւ թաղեցաւ յերկրին կենադրայ դա-
տաւորին, յաւուրս անիշխանութեան ։ Այլ եւ նշան երու-
սաղէմի, զի յորժամ տեսցեն զքար զի գոչեսցէ, եւ զբո-
տոտ զի 'ի փայտէ աղաղակեսցէ, մերձ լինել փրկութե ։
Յայնժամ տեսցեն զերուսաղէմ տապալեալ 'ի հիմանց ։
եւ մտցեն 'ի նա հեթանոսք յերկրպագութի տն ։ եւ առեալ
զքարինս նր դիցեն 'ի կողմն արեւելից ։ եւ անդ եղիցի եր-
կրպագութի օծելոյն, որ պղծելոյն երուսաղէմի եւ
աւերածոյն 'ի գազանաց՝ եւ յոմն փարչելոց ։ եւ յայնժամ
եկեսցէ կատարած ամ երկրի ։

Ընթերցուած 'ի Նաւումայ Մարգարէէ ։

Քաղցր է տր՝ որոց սպասեն նմա յաւուր նեղութե ։ եւ
ճանաչէ զերկիւղածս իւր ։ Այլ հեղեղաւ ճանա-
պարհաց արասցէ վախճան յարուցելոց 'ի վր ։ եւ զթշնա-
միս նր խաւար հալածեսցէ ։ Զի՞նչ խորհիք զտնէ ։
կատարած ինքն արասցէ ։ եւ ոչ խնդրեսցէ կրկին զնոյն
վրէժխնդրութի 'ի նեղութե ։

Մահ Նաւումայ Մարգարէի ։

Նաւում էր յեղկասայ՝ որ է յայնկոյս յորդանանու 'ի
բեթաբրայ, 'ի ցեղէն շմաւոնի ։ Սա հանդերձ յոնանու
եւ նշան նինուէի ։ եթէ 'ի քաղցր ջրոյ, եւ 'ի հրոյ գետ-

նա

Քահանայականաց առանելոյ ։

Նախանձէ կորիցէ · որպէս եղեւ խոկ ։ Զի ծովակն որ շուրջ զնովաւն էր՝ հեղեղեաց եւ կորոյս զնա · եւ հուր յանապատէ եկեալ՝ զբարձրաւանդակս նոցա այրեաց ։ Մեռաւ խաղաղութ եւ թաղեցաւ յագարակի իւրում փառաւորապէս ։

Ընթերցուած յԱմբակումայ Մարգարէէ ։

Մինչեւ յե՞րբ Տէր աղաղակիցեմ, եւ ոչ լուիցես · գոչիցեմ առ քեզ զրկեալ՝ եւ ոչ փրկիցես ։ Ընդէ՞ր ցուցեր ինձ աշխատութիւս եւ վաստակս · տեսանել զթշուառութիւն եւ զամբարշտութիւն ։

Մահ Ամբակումայ Մարգարէի ։

Ամբակում էր յազգէն Շմաւոնի, յագարակէն Բեթզոքարայ ։ Սա եւտես յառաջագոյն զգերութիւն, եւ վասն աւերածոյն Երուսաղէմի սգացաւ յոյժ ։ Եւ յորժամ եկն Նաբուգոդոնոսոր յԵրուսաղէմ, փախեաւ յՈստրակինայ՝ եւ եղեւ պանդուխտ յերկիրն Իսմայելի ։ Եւ իբրեւ դարձան Քաղդէացիքն 'ի տեղիս իւրեանց, եւ մնացորդք հրէիցն որք էին յԵրուսաղէմ, իջին յԵգիպտոս, յայնժամ դարձեալ Ամբակումն եկն յերկիր իւր՝ եւ սպասաւորէր զհնձօղս ագարակի իւրոյ ։ Իբրեւ եառ զկերակուրն՝ մարգարէացաւ ընտանեաց իւրոց եւ ասաց, երթամ ես յերկիր հեռաւոր, եւ վաղվաղակի դառնամ եկամ · եւ եթէ յամեցից՝ դուք տարէք ճաշ հնձողացն ։ Եւ երթեալ նորա 'ի Բաբելոն 'ի ձեռն հրեշտակին որ առաջնորդեաց նմա, տարաւ զճաշն Դանիէլի ։ Դարձեալ չոգաւ առ հնձօղսն՝ եւ տարաւ նոցա այլ խորտիկս · ոչ յամեալ ինչ զսովորական ժամն ։ Եւ իմացաւ թէ վաղվաղակի դարձցի ժողովուրդն

'ի

՚ի բաբիլոնէ · և յետ երկուց ամաց դարձան ։ Այլ եւ ետ ամբակում նշան որոց ՚ի Հրէաստանի, եթէ ՚ի կատարածի մարգարէիցն որգի տղ յարիցէ՝ և ուսուսցէ ՚ի տաճարին · և որք հաւատան ՚ի նա՝ տեսցեն զլոյս · և որք ո՛չ լսեն նմա՝ եղիցին ՚ի խաւարի ։ Այլ վս վախճանի տաճարին յառաջագոյն ասաց՝ թէ յարևմտից ազգաց աւերեսցի ։ Յայնժամ վարագոյր տաճարին ասէ ՚ի մանր ծուէնս պատառեսցի · և ելեալ հոգւոյն սբյ ՚ի տաճարէն, և աղխաւներղագեսք երկուց սեանցն բարձցին և գիցին յանապատն, ուր ՚ի սկզբանէ ցուցաւ խորանն վկայութեան ։ Այլ նորօք ծանիցի տր, և լուսաւորեսցէ զհա խուցեալսն յօձէն · և պատսպարեսցէ զնս յարդարութե̃ յաւիտենից ։ Մեռաւ խաղաղութբ և թաղեցաւ յագարակի իւրում փառաւորապէս ։

Ընթերցուած ՚ի Սոփոնիայ Մարգարէէ ։

Երկերուք յերեսաց տն այ · զի մերձ է օր տն · զի պատրաստեաց տր զզոհ իւր · և հրաւիրեաց զկոչնականս իւր ։ Այլ եղիցի յաւուր զոհի տն՝ խնդրեցից զվրէժ յիշխանաց՝ և ՚ի տանէ թագաւորին · և յամէ որք զգեցեալք են զհանդերձս օտարս ։ ասէ տր ամենակալ ։

Վարք Սոփոնիայ Մարգարէի ։

Սոփոնիաս էր ՚ի ցեղէն շմաւոնի, յագարակէն մարաթայ ։ Սա մարգարէացաւ վս քաղաքին եէմի · և վս փրր կուլթն մտին հեթանոսաց · և վս ամօթոյ ամբարշտաց, և դատաւորին ամ շնչոյ՝ որդւոյն այ ։ Մեռաւ խաղաղութբ և թաղեցաւ յագարակի իւրում փառաւորապէս ։

***

Քահանայաբար տօնելոյ։

Ընթերցուած Անգեայ Մարգարէէ։

Այսպէս ասէ տր ամենակալ. և 'ի տեղւոջ այդմիկ տաց խաղաղութի՝ ասէ տր ամենակալ. և խաղաղութեան ոգւոյ 'ի փրկութի ամի՝ որ գործիցէ յարուցանել զտաճարդ զայդ։

Մահ Անգեայ Մարգարէի։

Անգէոս մարգարէ էր 'ի ցեղէն ղևեայ 'ի քահանայից անտի. և ծնաւ 'ի բաբիլոն։ Նա մինչդեռ մանուկն էր՝ եկն 'ի բաբիլոնէ յերմ. և յայտնապէս մարգարէացաւ վս դարձի ժողովրդեանն. և ետես զշինուածս տաճարին։ Մեռաւ խաղաղութբ և թաղեցաւ յերմ 'ի գերեզմանս քահանայիցն փառաւորապէս. քանզի և նա էր յազգէ քահանայիցն։

Ընթերցուած 'ի Զաքարիայ Մարգարէէ։

Այսպէս ասէ տր ամենակալ. դատաստան արդար դատեցարուք. և ողորմութի և գթութի արարէք իւրաքանչիւր եղբօր իւրոյ։ Զայրին՝ և զորբն՝ և զպանդուխտն՝ և զտնանկն մի՛ յաղթահարէք. և ոխս չարեաց ընկերի իւր մի՛ ոք կալցի 'ի սիրտս իւր. ասէ տր ամենակալ։

Մահ Զաքարիայ Մարգարէի։

Զաքարիաս էր յազգէն ղևեայ. և ծնաւ 'ի կարգդի յերկրին քաղդէացւոց։ Նա մարգարէացաւ վս ժողովրդեանն. և ետ նշան 'ի հաստատութի բանիցն։ Նա ասաց զյովսեդեկեայ՝ թէ ծնցի որդի, և յերմ քահանայացի անարատութբ՝ յորինակ ճշմարիտ քահանայապետին։ Նա և զսաղաթիէլ օրհնեաց, և անուանեաց զորաբաբէլ։

Նա

Ի նմին գերեզմանին ։

Սա առ կիւրոսիւ ետ նշան 'ի յաղթութի . եւ վս սպա-սաւորութե նորա յառաջագոյն ասաց՝ զոր առնելոց էր յետ՛մ . եւ օրհնեաց զնա յոյժ ։ Սա զհանդերձեալսն յետ՛մ մարգարէացաւ , վս կատարածի նորին . եւ սկզբան հե-թանոսաց . եւ վս դատարկութե քահանայից՝ եւ մարգա-րէից եւ շաբաթուց ։ Սա վս կրկին դատաստանին նշանա-կեաց ։ Մեռաւ խաղաղութբ 'ի բարուոք ծերութեն . եւ թաղեցաւ մերձ յանգէ ։

Ընթերցուած 'ի Մաղաքեայ Մարգարէէ ։

Այսպէս ասէ Տր ամենակալ ։ Որդի փառաւոր առ-նէ զհայր՝ եւ ծառայ երկնչի 'ի տնէ իւրմէ . իսկ արդ եթէ հայր եմ , ուր են փառքն իմ . եւ եթէ Տր եմ , ուր է պատիւն իմ , ասէ Տր ամենակալ ։

Մահ Մաղաքեայ Մարգարէի ։

Մաղաքիաս յետ դարձի գերութեն ծնաւ 'ի սափիրայ՝ յազգէն ղեւեայ ։ Սա մինչդեռ մանուկն էր՝ բարի վարս եցոյց յանձին . եւ Տմ ժողովուրդն պատուէր զնա իբրեւ զանարատ եւ զհեզ ։ եւ կոչեցին զնա Մաղաքիաս՝ որ թարգ-մանի հրեշտակ . քանզի էր գեղեցիկ տեսլեամբ ։ Սա զոր ինչն ասաց 'ի մարգարէանալն իւրում , 'ի նմին աւուր երեւեալ հրեշտակ Տն՝ երկրորդէր զբանս նորա ։ Սա զհրեշտակն ոչոք տեսանէր յանարժանիցն , այլ զձայնն միայն լսէին . որ եղեւ յաւուրս անիշխանութեն . որպ եւ գրեալ է 'ի սփրափոռին , այսինքն է 'ի դատաւորայն ։ Սա մինչդեռ մանուկն էր՝ յաւելաւ առ հարս իւր , եւ թաղեցաւ յագարակի իւրում ։

***

·Ի Հանգստեան ննջեցելոց·

Պօղոսի առաքելոյն 'ի Կորնթացւոց առաջին թղթոյն։

Ապա եթէ ք՟ս քարոզի եթէ 'ի մեռելոց յարուցեալ է, զիա՞րդ ասեն ոմանք 'ի ձէնջ՝ եթէ յարութիւն մեռելոց չիք։ Եթէ յարութիւն մեռելոց չիք, ապա և ք՟ս չէ յարուցեալ։ Ապա եթէ ք՟ս չիցէ յարուցեալ, ընդունայն է քարոզութիւն մեր. ընդունայն են և հաւատքն ձեր։ Ապա գտանիցիմք սուտ վկայք ա՟յ. զի վկայեցաք զա՟յ թէ յարոյց զք՟ս։ զոր ոչն արդեօք յարոյց՝ եթէ մեռեալք ոչ յառնեն։ Իսկ եթէ մեռեալք ոչ յառնեն՝ ապա և ք՟ս չէ յարուցեալ։ Ապա եթէ ք՟ս չիցէ յարուցեալ. ընդունայն են հաւատքն ձեր. և տակաւին 'ի մեղս ձեր կայցէք։ Իսկ արդ՝ որք ննջեցինն 'ի ք՟ս, կորեա՞ն արդեօք։ Եթէ այսու կենօքս միայն յուսացեալ եմք 'ի ք՟ս, ողորմելիք եմք քան զամ՟ մարդիկ։ Այլ արդ՝ ք՟ս յարուցեալ է 'ի մեռելոց՝ առաջին պտուղ ննջեցելոց։ Զանզի մարդով եղև մահ, և մարդով յարութիւն մեռելոց։ Որպէս Ադամաւ ամենեքեան մեռանին. նոյնպէս և ք՟իւ ամենեքեան կենդանասցին։ Իւրաքանչիւր յիւրում կարգի. նախ ք՟ս, և ապա ք՟սեանք 'ի գալստեան նո՟ր. և ապա կատարած։

Ալէլուիա։ Քահանայք քո զգեցցին զարդարութ՟։

Աւետարան որ ըստ Յոհաննու։

Ամէն ամէն ասեմ ձեզ. զի որ զբանն իմ լսէ՝ և հաւատայ այնմ, որ առաքեացն զիս՝ ընդունի զկեանսն յաւիտենականս. և 'ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ 'ի մահուանէ 'ի կեանս։ Ամէն ամէն ասեմ ձեզ. զի գայ ժամանակ՝ և արդ է՛ն իսկ է. յորժամ մեռեալք լուիցեն ձայնի որդւոյն ա՟յ. և որք

'Ի վերայ գերեզմանին ։

լսիցեն, կեցցեն ։ Զի որպէս հայր ունի կեանս յանձին իւրում. նոյնպէս ետ և որդւոյ ունիլ կեանս յանձին իւրում. և իշխանութիւն ետ նմա դատաստան առնել ։ Այլ զի որդի մարդոյ է, ընդ այն մի զարմանայք ։ զի եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքին որք 'ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի նորա ։ և ելցեն արտաքս ։ Որոց բարիս գործեալ իցէ՝ 'ի յարութիւն կենաց. և որոց չար արարեալ՝ 'ի յարութիւն դատաստանաց ։ Ոչ կարեմ ես յանձնէ առնել և ոչինչ. այլ որպէս լսեմ, դատիմ. և դատաստան իմ արդար է ։ զի ոչ խնդրեմ զկամս իմ,

այլ զկամս այնորիկ՝ որ առաքեաց զիս ։

Նա՛ Սարկաւագն Քարոզէ,

Վասն հրաժարելոյ անձանց ննջեցելոց 'ի քս. զՏր աղա"։ Վասն որք լցին զապաշխարութեան կենցաղս և հեռաւեցան 'ի վիճակս արդարոց. զՏր աղաչես"։ Վասն առաջնորդելոյ սմա յանսասանելի օթևանս զոր պատրաստեաց 'ի տան հօր իւրոյ որդին միածին. զՏր աղա"։ Վասն արժանի լինելոյ սմա լսել զձայն կենդանարար փողոյն և յափշտակիլ ամպովք ընդ առաջ Տն յօդս. զՏր աղաչեսցուք ։ Վասն դասելոյ սմա յաջակողմեան դասուն 'ի դասս առաքելոց և մարգարէից. զՏր աղա"։ Վասն հոգւոյն"։

Այլ ևս միաբան"։ Զանձինս մեր"։ Զմիմեանց մեզ"։

Նա՛ Քահանայն ասէ զՄղթս ։

Տ երկնի և երկրի, որ զմեզ արարածս յոչընչէ արարեր. առեր հող յամենայնութենէ ձեռս քո, արարեր զմարդն՝ և անուանեցեր զանուն նր ադամ. ըստ պատկերի քում և ըստ նմանութեան արա-

րեր

րեր զնա։ Այլ մն յանցանաց նորա՝ հանել զնա ՚ի դրախ
տէն փափկութե, ասելով՝ հողէիր և ՚ի հող դարձցիս։
Այլ մրդ՝ ահաւասիկ ծառայս քո դարձաւ ՚ի հող ըստ
հրամանի քում. Ա՜ ողորմ աղաչեմք զքեզ մր բարերար,
առաքեա զհոգիդ քո մր ՚ի հողս այս և ՚ի ոստայսն. և որհ
նեա զսա ՚ի բնակութի ծառայիս քոյ. զի մտանելով ՚ի
սա ոսկերաց սորա, ընկալցի զբարեաց հանգիստն յա_
ւիտ բարերարութե՛դ քումմէ։ Այլ հանգո զհոգի սր
յօթեանս սբյ քոց առաքելոց և մարգարէից։ Այլ թող
սմա զյանցանս իւր զոր մեղաւ առաջի քոյ գիտութ և ան_
գիտութե, զգործոց, զբանից և զմտածութեց։ զի հա_
ւատաց յամենասուրբ երրորդութիդ, ՚ի ձեռն միածնի
որդւոյ քոյ տն մերոյ և փրկչին յս քի։ Ընդ որում քեզ
հօր և հոգւոյդ սբյ վայելէ փառք՝ իշխանութի և պա"։

Քարոզն, Զհանգուցելն բնութե բա"։ Դպ ասեն Այրք,
Հոգւոյ". Կ ն հանգ". Պն որդի"։
Այս փոխարէն զերին. և ասեն, Հայր մեր որ յերկինս ես՝ մը"։

Յորժամ ասեն Քարոզն հանգստեան՝ Ա՛Ճ։ Որ կոչեցեր առ_
քեզ մր զանթեզերս ամէ"։ Եբէ՞ չասեն։
Այս պէս ասել Պահանջային երկրս անգամ չհող ՚ի յափն,
✠ Խաչակնքէ ասելով
Օրհնեալ մր ողորմութ քոյ զհոգւս ծառայիս քոյ. և յի_
շեա զսա, զի հողէր՝ և տր հրամանի քում ՚ի հող դարձաւ։
Երկնային զհող ՚ի գերեզմանն խաչանման։ Այսպէս իջուցանեն
զննջեցեալն ՚ի գերեզմանն։ Այս ասեն Սաղմոս,
Տր հովուեսցէ զիս. և ինձ ինչ ոչ պակասեսցի։ մինչև ցայս
տանն Լէ՝ Աշխարհութե յոյժ առաջնորդեսցես զննջեցեալս իմ"։

 Այս

Յետ դնելոյն ՚ի գերեզմանն ։

Լուսաւոր աւուրն Մաղթանք, Տէր ողորմեա՛ հոգւոյս մեր"։ Իսկ ՙՔարոզն և ի ՙՄեռելոցն աւուրն, և այլ՝ Հայր մեր"։

Յետ այսորիկ աւուրն,

Սերովբէականք անձինքն եմ ի հողոյ յորդմամբ սուրբ մեծի. քանզի պատուիրանաւն մեղայ. Աղաչեմ զքեզ ընդդիմանութեան մարմնոյ. տուր յոյս իմ ողորմեա ինձ ։

Սաղմոս, Կցեցաւ անձն իմ ՚ի հող. որ կեցո զիս ըստ բանի"։
Զճանապարհս իմ պատմեցի քեզ և լուար ինձ. ուսո ինձ զիրաւունս"։
՚ի ճանապարհս արդարութեան քոյ իմաստուն արա զիս. և խորհեցայ"։
Տխրեցաւ անձն իմ ՚ի ձանձրանալ. հաստատեա զիս ՚ի"։

Զճանապարհս քո Տէր ոչ պահեցի. քանզի ոչ ժամանեցի ապաշխարել. այլ հեղգացայ մեղօք. այլ դու Տէր միայն պարգեւող հայր երկնաւոր. տուր յոյս իմ ող"։

Սաղմոս, Զճանապարհս մեղաց ՚ի բաց արա յինէն. և զօրէնս քո"։
Զճանապարհս ճշմարտութեան քոյ ընտրեցի. և զիրաւունս քո ոչ մոռ"։
Մերձեցայ ես ՚ի վկայութիւնս քո Տէր. մի յամօթ առներ զիս ։
՚ի ճանապարհս պատուիրանաց քոց ընթացայ. զի անդորր"։

Օրհնեցէք զնա զի ... քեզ Տէր ՚ի ձեռն ... քանզի խոնարհեցաք զսուրբ ... ՚ի յորդամ սուրբ մեծի. այլ դու Տէր միայն պարգեւող. հայր երկնաւոր. տուր յոյս իմ ողորմեա ինձ ։

Սաղմոս, Օրէնսդիր արա զիս Տէր ՚ի ճանապարհս իրաւանց"։
Իմաստուն արա զիս Տէր և քննեցից զօրէնս քո. և պահեցից զնա"։
Առաջնորդեա ինձ ՚ի շաւիղս պատուիրանաց քոց Տէր. զի ընդ նա"։
Խոնարհեցո զսիրտ իմ ՚ի վկայութիւնս քո Տէր. և մի յագահութիւն ։

Դարձ

·Ի հոգեհանգստեան ննջեցելոց :

Սաղ խոհէն ղեկերեցմանն, տարածանելով ՚ի վերայ ղշուր_
քաւա : Եւ ասեն Սաղմոս ողբալեայն :

Եդին զիս ՚ի գուբ ներքնումն · ի խաւարի և ի ստուե_
րս մահու : Տէր ած փրկութեան իմոյ · ի տուէ կարդա_
ցի և ՚ի գիշերի առաջի քո : (՚ի չնձն ասա :)

Ընթերցուած ։ Յոբայ :

Ո՞ պատմեսցէ յանդիման նորա զճանապարհս նորա՝ և
զոր ինչ ինքն գործեաց՝ ո՞ հատուսցէ նմա : Եւ
ինքն ՚ի գերեզմանս գնաց · և ՚ի տապանի արթնեցաւ :
Քաղցրացան նմա խիճք հեղեղատի · և զհետ նորա ամ
մարդ գնասցէ · և յառաջ քան զնա անթիւք :

Պօղոսի առաքելոյն ՚ի Տիմոթէոսի երկրորդ Թղթոյն է ըն՛ :

Վկայեմ առաջի այ՛ և յի քի, որ դատե_
լոց է զկենդանիս և զմեռեալս, ՚ի յայտնութեան
իւրում և յարքայութե : Եւ դու քարոզեա զբանն ·
հաստ ՚ի դէպ ժամու և տարաժամու : յանդիմանեա, սաս_
տեա, մխիթարեա ամ երկայնմտութբ և վարդապե_
տութեամբ : Զանզի եկեսցէ ժամանակ, զի ողջմտու_
թեան վարդապետութեն ոչ անսասցեն · այլ ըստ իւրա_
քանչիւրոց ցանկութեց կուտեսցեն իւրեանց վարդա_
պետս՝ քոր մարմաջելոյ լսելեաց իւրեանց : Եւ ՚ի ճշմար
տութէ անտի դարձուցանիցեն զլսելիս՝ և յառասպելս
խոտորեսցին : Այլ դու զուարթ կաց · յամի չարչարեաց՝
զգործս աւետարանչի գործեա · զպաշտօն քո հաստա_
տեա կալ : Զի ես այսուհետև նուիրեալ եմ · և ժամա_
նակ գնալոյ իմոյ հասեալ է : Զբարի պատերազմն
պատերազմեցայ · զընթացսն կատարեցի · զհաւատսն պա

՚Ի ԺԷ Գերեզմանին:

հեղք: Այսուհետև կայ և մնայ ինձ արդարութեան պսակն, զոր հատուսցէ ինձ տէր յաւուր յայնմիկ արդարն դա-տաւոր: և ո՛չ միայն ինձ, այլև ամենեցուն, որք սիրե-ցին զյայտնութիւն նորա:

Ալէլուիայ: Տէր հան ՚ի բանտէ զանձն իմ գոհա՛:

Աւետարան որ ըստ Մատթէոսի:

Եւ յորժամ եկեսցէ որդի մարդոյ փառօք իւրովք և ամ̃ հրեշտակք ընդ նմա, յայնժամ նստցի յա-թոռ փառաց իւրոց: Եւ ժողովեսցին առաջի նր̃ ամ̃ ազգք. և մե կնեսցէ զնս̃ ՚ի միմեանց՝ որպ̃ հովիւ զի մեկ նեսցէ զոչխարս յայծեաց: Եւ կացուսցէ զոչխարսն ը̃ աջմէ իւրմէ՝ և զայծիսն ՚ի ձախմէ իւրմէ: Յայնժամ ասասցէ թագաւորն ցայնոսիկ՝ որք ընդ աջմէն իցեն, եկա՛յք օրհ նեալք հօր իմոյ՝ ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ ար քայութիւնն ՚ի սկզբանէ աշխարհի: Զի քաղցեայ՝ և ետուք ինձ ուտել. ծարաւեցայ՝ և արբուցէք ինձ. օտար էի՝ և ժողովեցէք զիս: Մերկ էի՝ և զգեցուցէք զիս. հիւանդ էի՝ և տեսէք զիս՝ ՚ի բանտի էի՝ և եկիք առ իս: Յայնժամ պատասխանի տայցեն նմա արդարքն և ասաս ցեն. տէ՛ր՝ ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ՝ և կերակրեցաք. կամ ծարաւի, և արբուցաք: Ե՞րբ տեսաք զքեզ օտար՝ և ժողովեցաք. կամ մերկ, և զգեցուցաք: Ե՞րբ տեսաք զքեզ հիւանդ կամ ՚ի բանտի՝ և եկաք առ քեզ: Պա տասխանի տացէ թագաւորն՝ և ասասցէ ցն̃ս. ամէն ա սեմ ձեզ՝ որովհետև արարէք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարէք: Յայնժամ ասասցէ և ցայնո սիկ՝ որք ընդ ահեկէն իցեն. երթայք յինէն անիծեալք ՚ի հուրն յաւիտենական. որ պատրաստեալ է սատանայի

և

և հրեշտակաց նր(ո)ց: Զի քաղցեայ, և ոչ ետուք ինձ ուտել. ծարաւեցայ, և ոչ արբուցէք զիս: Օտար էի, և ոչ ժողովեցէք զիս. մերկ էի, և ոչ զգեցուցէք զիս: Հիւանդ էի և ի բանտի, և ոչ տեսէք զիս: Յայնժամ պատասխանի տացեն նոքա՝ և ասասցեն. տէր, երբ տեսաք զքեզ քաղցեալ՝ կամ ծարաւի՝ կամ օտար՝ կամ մերկ՝ կամ հիւանդ՝ կամ ի բանտի՝ և ոչ պաշտեցաք զքեզ: Յայնժամ պատասխանի տացէ նոցա և ասասցէ. ամէն ասեմ ձեզ՝ որովհետև ոչ արարէք միում ի փոքրկանցս յայսցանէ՝ և ոչ ինձ արարէք: Եւ երթիցեն նք ի տանջանսն յաւիտենականս. և արդարքն ի կեանսն յաւիտենականս:

Շարական սրբոցն. Որ յանստուէր ի լուսոյն:

Մի աւր ի Գէլխամօրացն ընկեցանն ի վերայ Գերեզմանին:

Հանգիստ Նորանէլոյն Յոհաննու Սոսաթելոյն եւ Սնէդարանչին:

Որ ընդ եղբարս երանելին Յոհաննէս մեծաւ ուրախութն ի տէր: Եւ յաւուր միում կերակէր, ընդ ժողովիլ եղբարցն առ նա՝ սկսաւ խօսիլ ընդ նոսա այսպէս: Եղբարք իմ և ծառայակիցք և ժառանգակիցք և հաղորդք տն արքայութեանն. գիտէք եթէ որքան զօրութիւն ի ձեռն իմ ետ ձեզ ած: Բանիւ նշանս. բանիւ արուեստս. որչափ շնորհս. որպիսի վարդապետութիւն. վերակացութիւն. համոզխստս. սպասաւորութիւն. փառս. հաւատս. միաբանութիւն. ձիրս. պարգևս: Որչափ, և բանիւքս տեսիք աչօք ձերովք զտուեալսն ձեզ՝ որք ոչ երևին աչացս

այսոցիկ . և ոչ ականջացս այսոցիկ լսելի լինին : Արդ՝ հաստատեցարուք ի նմա , յիշելով զնա յամ գործս ձեր . գիտացէք զխորհուրդս մտաւորութեանն որ եղև առ մարդիկ , թէ ո՞յր աղագաւ արար մր : Աղաչէ զձեզ ինքնին որ ի ձեռս իմ . և մաղթէ կալ միալ ձեզ , առանց թշնամանաց , առանց նենգութե , առանց անառակութեան : Վասնզի գիտէ զթշնամանսն որ ի ձէնջ . գիտէ և զանօրէնութիւն , գիտէ և զնենգութիւն , գիտէ և զանառակութիւն , ի խոստունգանելն ձեր ի բաց պատուիրանաց նորա : Արդ՝ մի՛ տրտմեսցի ի ձէնջ բարերարն մեծ . գըթածն . ողորմածն . սուրբն . յստակն . անարատն . անհիւթըն . միայնն . մինն . անփոփոխն . ստո՛յգն . աննենգն . անպատումն . որ ի վերոյ է քան զամ ասելի և իմանալի անուն մեծն իմ յա : Ուրախ լիցի ի բարեւոք կրօնաւորութե ձերում . խնդասցէ ի վերայ կենաց ձեր . հանգիցէ ի պարկեշտ վարս ձեր . անհոգ լիցի ի ժուժկալութե ձերում . հաճեսցի ի միաբանութե ձերում . ժպտեսցի ի զգաստութե ձերում . քերկրեսցի ի սիրելն ձեր զնա : Զայս այժմ խօսիմ ընդ ձեզ եղբարք , փութասջիք յառաջիկայ գործն ձեր , արդէն ևս կատարել ի մտ : Վասնզի զի՞նչ այլ ինչ ունիցիմ ասել ձեզ . ունիք զօն մերոյ զգուշականն . ունիք զբարերարութեան նորա զշուրս . ունիք զանհրաժեշտ զաւուրսն նր : Զի թէ ոչ ևս մեղիցէք , զոր յանցաւորութեն գործեցիք՝ թողցի ձեզ . ապա թէ գիտացեալ զնա՝ և ի նմանէ զողորմութի գտեալ՝ նոյնպէս վարիցէք , և զառաջինն ևս համարեսցի ձեզ . և ոչ ընկալջիք զողորմութիւն ի նմանէ : Եւ զայս ասացեալ առ նոսա , յաղօթս եկաց այսպէս : Որ զպսակս զայս հիւսեցեր քոյին հիւսմամբդ յա : Որ զբազում ծաղիկս

Յետ ՚ի ներբողեանն Տէրունին ընթեռնու և,

զայս յանթառամելի ծաղիկդ յօդեցի · Ո՛ր սերմանե-ցեր զկենարար բանս քո զայսոսիկ · Ո՛ր միայնդ ես խնա-մակալ քոյոց ծառայից, և բժիշկ որ ձրի բժշկես · Ո՛ր միայնդ ես բարերար և անամբարտաւան · Ո՛ր միայնդ ես ողորմած և մարդասէր · Ո՛ր միայնդ ես փրկիչ և արդար · Ո՛ր միշտ ես և յաւիտենական, և յորժամ ուրեք մերձ ես ած իմ յմ · դու քոյով պարգևօքդ ծածկեա զա-մենեսեան որք ՚ի քեզ յուսան · զի դու գիտես զչարա-խօսին մերոյ յորժամ ուրեք զմեքենայս և զբռնութիւն · Արդ ապա խնդրեմ հայց՝ և գոհացայց այսպէս · Զո՞ր օրհնութիւն, կամ զո՞ր պատարագ, կամ զո՞ր գոհութիւն ՚ի բերկանել հայցս մատուսցուք քեզ · այլ միայն զքեզ տր յոյժ անուանեսցուք · Փառաւորեմք տր՝ զքո ասա-ցեալդ հօր զանուն · փառաւորեմք զմուտ դրանն քոյ · փառաւորեմք զյարութիւն քո՝ որ քև ցուցաւ մեզ · փա-ռաւորեմք զճանապարհն քո · փառաւորեմք զսերմին քո · զբանն · զչարչարսն · զհամն · զանձն · զանխոս մարգարէին · զգանձն · զարօրն · զուռ կայնն · զմեծութիւնն · զխո-նարհութիւն՝ որ վն մեր կոչեցար որդի մարդոյ · զճշմարտու-թիւնն · զհանդիսան · զգիտութիւնն · զզօրութիւնն · զպատուէրան · զհամբերողութիւնն · զաղքատութիւն · զառ ՚ի քեզ փախուստն · Զի դու ես տր արմատ անմա-հութե և աղբիւր անապականութե, և հիմն յաւիտե-նից · անուանեալ այսու տնօրէնն վն մեր՝ տր զի մեր կոչե-ցեալ զքեզ աստուածք՝ գիտասցուք զմեծութիւն քո, որ է անտես ՚ի մեզ ՚ի ժամանակիս յայսմիկ · և սրբոց միայն տեսանելի՝ ՚ի քեզ կերպարանս ցելոյն · Արդ բերկեալ ըն-հայցն կարկառեաց նոցա, ՚ի վն խոստովանչիսացն աղօթս առնելով՝ արժանի լինիլ շնորհացն ան և սէրս գոհուէն ·

 Ձա

Մինչ փեսայն ծածկեցաւ հողով։

ճաշակեալ և ինքն նոյնպէս, և ասացեալ՝ թէ և ինձ մասն ընդ ձեզ լիցի սիրելիք իմ, և խաղաղութիւն Տեառն ընդ ձեզ։ Այլ ասէ ցբժիշկս՝ առ դու ընդ քեզ երկուս յեղբարցդ՝ հանդերձ երկու ողթուլք և փոխատուաւք, և եկ գտէր իմ։ Այլ բժիշկս առանց յապաղելոյ արար զոր հրամայեաց նմա ծառայն Տեառն Յովհաննէս։ Այլ եկեալ երանելին Յովհաննէս գնայր առաջի դրացն, հրամայեաց բազմութեան մեկուսանալ յինքենէ։ Այլ հասեալ 'ի շիրիմ ինչ եղբօր ուրումն, ասաց դպաստանին, բրեցէք սրգեակք · և նոքա բրեցին։ Իսկ նա առնէր զնոյն և ասէր, խորագոյն լիցի բրածդ։ Այլ 'ի բրելն նոցա՝ խօսէր ընդ նոսա զբանս կենաց, և յորդորէր զեկեղեցին ընդ նմա 'ի տանէն · շինելով և հաստատելով զնոսա 'ի մեծութիւն Տեառն · և աղօթս առնելով 'ի վեր իբր բարձանցին բուր ուր ամենեցուն։ Իսկ մեք ոչինչ իմանայաք ամենեքին։ Այլ իբրև կատարեցին զբրածն սպատանիքն շուրջանակայ որպէս և նա կամէր, մերկանայր երանելին զհանդերձն իւր զոր զգեցեալ էր, և տարածանէր իբրև զանկողին ինչ 'ի նորութն բրածին։ Այլ միայն նափորտածն կացեալ 'ի խորափոսն, համբարձ ըզձեռս իւր 'ի վեր · և յաղօթս եկաց այսպէս։ Ո՛ր ընտրեցեր զմեզ յառաջ քան թիւն հեթանոսաց · Ո՛ր առաքեցեր զմեզ յաշխարհ հաւ։ Ո՛ր ցուցեր զքեզ 'ի ձեռն մարգարէից քոց։ Ո՛ր ոչ դադարես երբեք 'ի խնամոց, այլ միշտ կեցուցանես զկորուսեալսն։ Ո՛ր 'ի ձեռն տն բնութեան զքեզ ծանուցեր։ Ո՛ր և անասնոց անգամ բարբառեցար։ Ո՛ր զանասնայսն և զվայրենի հոգին, զդօն և հանդարտ արարեր։ Ո՛ր ծարաւելոյն բոյսով բանիւդ զքեզ իսկ ետուր։ Ո՛ր մեռելոյն արագ յայտնեցար։ Ո՛ր ընկղմելոյն յանօրէնութիւն, արագօրէն ցուցար։

Ո՛

·Ի Հաւհանայանաղ առնելոյ·

Ո՛ր հերքելոյն բնաւէին 'ի սատանայէ, ծանուցար փրկիչ։ Ո՛ր յաղթեցեր հակառակորդին, տալով զօգնութիւն 'ի քեզ ապաւինելոյն։ Ո՛ր եւտուր նմա զքո ձեռնդ՝ և յարուցեր զնա 'ի դժոխական բրաց։ Ո՛ր ոչ թողեր զնա 'ի մարմնի կրանաւորիլ։ Ո՛ր ցուցեր նմա զթշնամին իւր։ Ո՛ր զգիտութիւն քո մե՛զ ցուցեր սիրելեաց քոց։ Ո՛ր հայրդ ես՝ որոյ 'ի վեր քան զերկինս. և ՟Ծ երկ_նաւորաց։ Ո՛ր օրէնքդ ես եթերականաց. և ընթացք օդականաց. պահապան երկնաւորաց. և երկիւղ սան_դարամետականաց։ Ի՛նկա՛լ զհօգի ծառայիս քոյ յօհան_նու՝ թերևս արժանի եղելոյ 'ի քէն։ Ո՛ր զիս պահե_ցեր մինչև 'ի ժամանակս յայս անփորձ 'ի խառնակութե_նէ կանանց։ Ո՛ր և զհայրն իմ 'ի կին մարդ, ծանր դրեցեր։ Ո՛ր յառժամանակեայ պատրանացս փրկեցեր զիս, և 'ի մշտնջենական կեանս առաջնորդեցեր։ Ո՛ր 'ի մարմնաւոր աղտեղութէ որոշեցեր զիս։ Ո՛ր 'ի դառն մահուանէ զերծուցեր զիս, և 'ի քեզ միայն հաստատե_ցեր։ Ո՛ր զծածուկ ախտ հոգւոյ իմոյ սանձեցեր. և զյայտնի գործս սորա խափանեցեր։ Ո՛ր նեղեցեր և հալածեցեր զխառովարարն որ յիս։ Ո՛ր անբիծ պճնա_նարհս իմ որ առ քեզ հաստատեցեր։ Ո՛ր առանց սայ_թաքելոյ պահեցեր զշաւիղս իմ որ առ քեզ։ Ո՛ր աներկ_միտ եւտուր զհաւատս իմ որ առ քեզ։ Ո՛ր զքո՛ գիտու_թիւնն որ 'ի քեզ՝ սահմանեցեր ինձ։ Ո՛ր իւրաքան_չիւր գործոց արժանաւոր վարձս հատուցանես։ Ո՛ր եդեր յոգւոջ իմում մի՛ ինչ ստացուած պատուական համարիլ քան զքեզ։ Ա՛րդ՝ տէ՛ր իմ, ի՛մ քո՛, զմատակա_րարութին զոր ընկալայ 'ի քէն՝ կատարեցի. արժանի արա զիս քում հանգստեանդ. զքո ողորմութիւնդ շնորհելով ինձ,

Յետ դնելոյն ՚ի գերեզմանն ․

ինձ, որ է անփախուստ և անձառ փրկութիւն ։ Այլ ՚ի գալս իմում առ քեզ, ընկրկեսցին հուրքն ․ վանեսցին խաւարքն ․ տկարասցին վիշտք ․ խամրասցին հիւղքն ․ շիջցին գեհեանն ․ ամաչեսցեն հրեշտակք չարին ․ երկիցեն դևք ․ զլմրեսցին իշխանքն ․ ընկճեսցին զօրութիւնք ․ աջակողմեանքն կացցեն ․ ձախակողմեանքն մի՛ մնասցեն ․ բանսարկուն պապանձեսցի ․ սատանայ զարհուրեսցի ․ սրտմտութիւնք նր տոչորեսցի ․ մոլորութիւնք նր սուզեսցի ․ տանջանարանք նր խափանեսցին ․ յարձակմունք նր տկարասցին ․ մանկունք նր չարչարեսցին ․ և ամ արմատք նորա տարակուսեսցին ։ Այլ տո՛ւր ինձ զճանապարհս իմ առ քեզ անքասիր և անքուննադամ վճարել ․ առնուլ զայն զոր խոստացար այնոցիկ՝ որք սիրում են զքեզ, և պարկեշտութեամբ սիրեցին զքեզ տր ։ Այլ ապա կնքեալ զինքն՝ ասաց, դու լեր ընդ իս տր իմ յս քս ։ և կողմնեցաւ ՚ի խորափոխին՝ ուր զհանգ երձան նարամեց ։ Այլ ասաց ցմեզ, խաղաղութի ը ձեզ եղբարք իմ ։ Այլ մինչդեռ ուրախ էաք և լայաք, աւանդեաց զհոգին իւր երանելին յոհաննէս ՚ի ձեռն տն մերոյ յի քի ․ որում փառք յաւիտեանս ։ ամէն ։

Այս պարզեւաւ հող օրհնէ ժամանայն երեք անգամ, ծարզեանէ խաչաձև ՚ի վերայ մարմնոյն՝ ասելով,

Օրհնութիւն Տն այսն իջցէ ՚ի հող մահու սորին, և բուսուսցէ յօրն վերջին․ անուամբ հօր և որդւոյ և հոգւոյն սբյ ։

Ապա ծածկեն լիապէս զգերեզմանն՝ ասելով զայս իմ ։

Ողորմեա՛ տր՛ քաւեա՛ զանօրէնութիւնս իմ ։

Հաւատով ընդունելո՛վ հո՛գի խաղաղութե ․ Ո՛րթ առ արարի՛չն հայցելո՛վ ․ տ՛ր իմ հա՛նգո՛

Ա՛ս

Ի ծածկելն հողոշկերպեանն, առեն պաշտօնեայքն ։

Նա՛ և ասացի՛ ի շարականացն խմուն թէ՝ Տէ՛մ մարգ․ սուրբ է ։

Հաւատ ունելով հոգի՛ խաղաղութե՛․ երթ առ արա
րի՛չըն հայցելով․ տ՛ծ իմ հա՛նգո ։

Ի՛ դժանապարհս իմ ուղիղ արա ինձ ըստ բանի՛ քում․
և մի՛ տիրեսցեն ինձ ամենայն մեղք ։

Հաւատ ունելով հոգի՛ խաղաղութե՛․ երթ առ արա
րիչըն հայցելով․ տ՛ծ իմ հա՛նգո ։ Մ՛ր երբեք հոգի
յմ՛․ ըղգաս պահես․ զի քո խաչի՛ և յարութեանդ
հաւատամ՛ք՝ թագաւոր երկնաւոր․ հանգո զհոգի սորա․
յիշելով սորա զհաւատս ։ Ի՛ քաղաք ո՛րն զօրութե՛
և ի քաղաքի թագաւորին մեծի․ ուր ժողովք սրբոց
են ի խաղաղութե՛․ զնայս [illegible] յուսով․ և հանգիստ ընդ
հրեշտակաց դասս․ տեսանել ըզլոյսըն յաւիտենից ։
Մերձեցաւ անձն իմ ի հող յորժամ առեղծէր զիս՝ և հո
գւոյս մեկնել յինէ՛ն․ ո՛ր շապաւինեսցես յիշեա՛ ի
քումդ ալրմայ [illegible] ։ Սուրբ ծնունդ էմ անարատ ծնունդ
քո մի՛ անտես առնէր․ այլ խնայեա՛ յիս յահագին ա
ւուրն․ Տ՛ր ։ Յորժամ գաս փառօք հօր դատել ըզտիե
զերս Տ՛մ․ և հատուցանել փո՛խ հրեշտակաց յարութե․ Տ՛ր ։
Փառք հօր ։ Նաև այժմ ։ Ընդ քրիստոսի պահելով
յաւիտենիս լեցուք փրկանօքն․ և ընդ հրեշտակս
երգեսցուք փառք ի բարձունս Տ՛յ ։

Նաև առեն պաշտօն ի եկեղեցին, զի մի թէ արքայն ի
վերջերքն ։

Փառք ի բարձունս Այ և յերկիր խաղաղութի․ ի մարդ ։

Փառք պատիւ երկրպագութի ի եկեղեցին հօր ։

Նոյն զիս ի գերենեցնեն ։ Տ՛ր տծ փրկութե իմոյ ։
Մ՛ր

Յետ ծածկելոյն վերերեւման, ընթեռնուն ։

Աղօթք ։

Ընթերցուածս որ ըստ Ղուկասու ։

Մի երկնչիր հօտ փոքրիկ՝ զի հաճեցաւ հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն ։ Վաճառեցէք զինչս ձեր. եւ տուք ողորմութիւն. եւ արարէք ձեզ քսակս առանց հնանալոյ՝ գանձ անպակաս յերկինս. ուր ոչ գող մերձենայ՝ եւ ոչ ցեց ապականէ ։ Զի ուր գանձն ձեր է՝ անդ եւ սիրտք ձեր եղիցին ։ Եղիցին գօտիք ձեր պնդեալ ի մէջս՝ եւ ճրագունք լուցեալք ։ Եւ դուք նմանողք մարդկան՝ որք ակն ունիցին տն՝ իւրեանց թէ երբ դառնայցէ ի հարսանեաց ։ զի յորժամ գայցէ եւ բախիցէ, վաղվաղակի բանայցեն նմա ։ Երանի իցէ ծառայիցն այնոցիկ՝ զորս եկեալ տէրն գտցէ արթունս. ամէն ասեմ ձեզ՝ զի գօտի ի մէջ ածցէ՝ եւ բազմեցուսցէ զնոսա, եւ անցեալ պաշտեսցէ զնոսա ։ Եւ եթէ յերկրորդ կամ յերրորդ պահու եկեսցէ եւ գտցէ այնպէս, երանելիք են ծառայքն այնոքիկ ։ Զայս գիտասջիք. եթէ գիտէր տանուտէրն յորում ժամու գող գայ՝ հսկէր, եւ ոչ տայր թոյլ ական հատանել տան իւրում ։ Եւ դուք եղերուք պատրաստ, զի յորում ժամու ոչ կարծիցէք, գայ որդի մարդոյ ։

Սարկաւագն ·Քարոզէ,

Վասն ի վերուստ պահպանութեան տն՝ մերոյ անձանց մերոց, եւ հաճոյական աղօթս առնելոյ. զՏր աղաչես"։ Վս ընդունելոյ տն՝ զհոգի հանգուցելոյս ի հանգիստն արդարոց. զՏր աղաչ"։ Վս արժանի լինելոյ սմա խաղաղութեամբ եւ մեծաւ յուսով սպասել տնագալուստ փրկչին. զՏր աղաչես"։ Վս քաղցրաբարբառ լսելոյ սմա զձայն

երա

·Քահանայաբար ասելոյ:

երանաւէտ կոչմանն՝ եթէ արկք առ Հայր քո · զՏր աղա":
Վս՟ համարձակապէս տեսանելոյ սմա զանապական պսակն
և զանսասանէլի լոյսն · զՏր աղա": Վս՟ տալոյ սմա տեղի
Հանգստեան 'ի Հայրական խնամոցն յաջակաց դա-
սուն · զՏր աղա": Վս՟ պարգևելոյ սմա զերկնային
պսակն կենաց և անմահութե · զՏր աղաչես": Վս՟ առաք-
ման շնորհաց մեծի և ամենազօր աջոյն քո 'ի Հոգանիս-
թեայ յարկս յայս · զՏր աղաչես": Վս՟ կնքելոյ զդերեզ-
մանս զայս խաչիւէն իւրով մինչև 'ի գալուստն իւր Տր ·
զՏր աղաչես": Վս՟ առաքելոյ զշնորհս Հոգւոյն սրբոյ 'ի
սիրտս լալողաց Հաւատացելոյ անուան իւրոյ սրբոյ · զՏր":
Վս՟ մխիթարելոյ զվշտագնեալս սրտիւք 'ի ձեռն աղօր-
մութե իւրոյ · զՏր աղաչես": Վս՟ Հոգւոյն": Այլ ևս":
Զանձինս մեր": Ողորմեա մեզ":

Ապա քահանայն ասէ զԱղօթս:

Գոհանամք զքէն Հայր Տն մերոյ Յի Քի · որ յոյց
ելեր՝ և արդարութե քով փրկեցեր զմեզ 'ի մե-
քենայից սանձից · զի նախանձեցաւ և էհան զմեզ
պատրանօք 'ի յաւէտժական կենացն, արտաքս
հանելով զմեզ 'ի կորուստ և յապականութի: Այլ դու
բարերար և մարդասէր Տր · ոչ թողեր զնա դատ[ա]՝ նութի
թանկոյն 'ի մեզ յարակայ: Վս՟ որոյ մահ կոչեցեր և Հե-
ղեր 'ի վր արարածոց քոց, զի մի անմահ մնասցէ չարու-
թիւնն պատահեալ · այլ բառնալով զմեզ 'ի կենսայոյս յայս
ցանէ, և Հաստանելով 'ի մեղաց՝ եղև փրկութի բարերա-
րին պատուհասն: Իսկ 'ի փախճան աւուրցս այսոցիկ
առաքեցեր զորդի քո սիրելի 'ի կերպարանս մահու մե-
ղաց · որ և դատապարտեաց զմեղս մարմնով իւրով · և

կա

Յետ ծածկելոյ ընթերցուածն։

Կամաւոր խաչելութեամբ իւրով խորտակեաց զզօրութիւն դժոխոց. եղև առաջին պտուղ ննջեցելոց. և ամենահրաշ յարութեամբ իւրով հրաւիրեաց զմեզ յիւր անմահութիւն։ Յոր հաւատացեալ ծառայս քո այս՝ մկրտեցաւ ՚ի մահ քո քոյ. և լցեալ զժամանակ կենցաղավարութեան իւրոյ, փոխեցաւ ՚ի կէտ սահմանադրութեան քոյ։ Վասն որոյ աղաչեմք զքեզ հայր մեր, միջնորդութեամբ մարմնոյ և արեան որդւոյ քոյ տն մերոյ յի քի, հայեաց ՚ի խոստովանօղս անուանդ քոյ. և թո՛ղ սմա զամենայն պարտիս՝ զկամաւ և զակամայ՝ զոր վիրաւորեաց անմարմին թշնամին պատրանօք խաբէութեամբ. զի դու միայն ես և բարերար տր ես։ Իբր որպէս յանգոյութենէ ՚ի գոյութիւն ածեր զմեզ, և այժմ զվերաստին բժշկեա՝ և խոստովանութեամբ անցից ՚ի խաւարային իշխանութենէն. զի մի՛ զիւրեանց չարութիւն ՚ի ծառայս քո գտցեն. այլ ջնջեա՛ զձեռագիր նց ներգործութեան զոր ՚ի սմա սերմանեցին. և տո՛ւր սմա ճանապարհ բարի։ Լուսակիր երկնից ՚ի սմանէ հրեշտակն սուրբ՝ որ պահէ ըզ ճանապարհս ծառայիս կենաց, պահպանելով ՚ի փորձական նշանաւ խաչին, որ զկենաց պտուղն մեզ ընծայեցոյց՝ առ հաւատացեալս յաւէժական կենացն և առաջնորդ։ Յոր ապաւինեալ ծառայս քո՝ սովոր հասցէ ՚ի պահեստ՝ ուր սուրբքն ամ հանգեալ՝ սպասեն մեծի հարսանեացն, յորում իւր որդւոյ քոյ և փեսայի մերոյ յի քի ՚ի ձայն փողոյ մեծի։ Որոյ ՚ի յայտնութեան՝ սոսանին տարրեղէն արարածք և զօրութիւնք երկնից, նսեմանան լուսաւորք, թօթափին աստեղք, ցնցանան զօրք հրեղէնք՝ և երկինք բանալ անմահից. սասանի երկիր՝ և բանին կնքեալ գերեզմանք, և շինին հողացեալ մարմինք. և հոգիքն սպասեցեալք իբրև զարծուիս անդր հասանին՝ և զգենուն զա-

նա

՝Ի հանգստեան ննջեցելոց։

նապականն մարմին 'ի վայրկեան ժամանակի, և ժամանեն յիւրաքանչիւր տեղիս ։ Աղաչեմք զքեզ Տէր՝ ժամանեցո՛ զծառայս քո յանսպառ ուրախութիւնդ. և զմեզ զամենեսեան զհաւատացեալս 'ի քեզ խաղաղութեամբ պահեա և մխիթարեա հոգւով և մարմնով ։ զի արժանաւոր լինիցուք փառաւորել զքեզ հ̅ որդւոյ և հ̅ սբյ հոգւոյդ"։

Խաղաղական ննջեցելոցն ։ Այ երկիր պագէ"։

Օրհնեալ ես Տէր ած մեր՝ որ նեղելոց ես անդորրութիւն. և ընդունող ես հոգւոցն հանգուցելոց ։ Ընկալ զհոգի ծառայիս այսորիկ 'ի բազուկս. և փարատեցո՛ զսուգ և ըզտրտմութիւն 'ի սիրելեաց սորա՝ որք հեծեծեցան յուղարկել զսա ընդ երկայնաձիգ ճանապարհն, և մարմնոյքն 'ի վերայ անդառնալի ուղեգնացութեան սորա, և վճ յաւէժ անջատելոյ 'ի սմանէ առժամանակ մի՝ մինչև իւրեանց յուղին անկեալ յայսմ բազմածուփ ծովածուփ կենցաղոյս ։ Այլ զչափաւոր արտասուս սոցա ընկալ քեզ 'ի հաճոյս՝ և մի 'ի զայրացումն. և մխիթարեալ սփոփեա ըզլքեալ սիրտս սոցա՝ գալստեամբ քոյ շնորհիդ. և զօրացուսցես զտարակուսեալ ոգիս սց առաքմամբ հոգւոյդ սրբոյ ։ Այլ կնքեալ պահեա՛ զգերեզմանս փակեալս յանուն քո Տէր՝ նշանաւ ամենայաղթ խաչի քոյ՝ մինչև յօր վերջնում մեծի կրկնակի գալստեան քոյ ։ Զի քո ամենակարող զօրութեդ՝ եղեմնապատ և ձեռնաթափեալ պահպանին ամ արարածք. և սերմանիք թաղեալ յերկիր մեռանին՝ մինչև 'ի ժամանակս գարնանայինն որոտընդոստ յարութեն զուարճացեալ պայծառանան զորս կարգեցեր մեզ 'ի պաշտօն պիտոյից ։ Այսպէս և դու խոնարհեցար 'ի հայրական ծոցոյ պատկերակից մեզ լինելով,

հաստ

Յետ ծածկելոյն զգերեզմանն, ընթեռնու:

Հաւատ անմահութեան զմահ յանձն առեր՝ զի բազում արաս-ցես արդիւնս. իջեր ի գերեզման՝ լուծեր զերկունս մա-հու. զդժոխս աւերեցեր. որ երկրպագիս յերկնաւորաց և յերկրաւորաց և ի սանդարամետականաց. և լի են Տէր երկինք և երկիր փառօք քովք: Արդ՝ պահեա՛ ամենա-զօր Տէր զհոգի սորա առ ամենայն սրբոց և սիրողաց անուանդ քում: Այլ զգերեզման ծառայիս քոյ կնքեալ պահեսցես, որ փակես զխորս և կնքես ամենազօր աջովդ քով: Եր-կինք՝ և երկնից երկինք և երկիր հաստատեալ կան բա-նիւ քով. այսպէս անշարժ եղիցի կնիք տէրութեան քոյ ի վերայ բնակութեան սորա և պահարանի ծառայիս քոյ: Այլ մի իշխեսցէ մերձենալ ի սա պիղծ և անմաքուր դևն՝ որ ի մարմինս և յոգիս հեթանոսաց, որք ոչ ունին զծնունդ սուրբ աւազանին, և զկնիքն ահաւոր և պատուական ի վերայ գերեզմանաց իւրեանց: Քանզի այս ծառայս քո կոչե-ցեալ հրաւիրեցաւ ի քոյոց հրաւիրողացն, և հաւատա-ցեալ ի քեզ ի կենդանութեան իւրում՝ թաղեցաւ ընդ քեզ մկրտութեամբ ի մահ. և սերմանեալ պահեցաւ ի քէն անդ-րէն յերկիր: Այլ Տէր լո՛ւր աղաչանաց մերոց մարդասէր Տէր, և թո՛ղ զամենայն մեղս սորա զոր մեղաւ, և քաւիչ լեր Տէր սխա-լանաց սորա, եթէ կամաւ՝ և եթէ ակամայ, եթէ բա-նիւ՝ և եթէ գործով, եթէ խորհրդով՝ և եթէ մոռացու-թեամբ, զամենայն կամս չարին պատառեա՛. և զձեռագիր մեղացն ջնջեա՛ Տէր, և զպարտս ջնջութեան լուծ. զի անպարտ-կա՛ լիցի ի մեծի [illegible] աւուրն վերջնում ընդ համօ-րէն պահպանեցելոցն ի քէն, ընդ առաջ ելանել քեզ նորա-փեսաւոր արփիափայլ հրաշիւք՝ զարդարեալ ի զարդ ան-կողոպտելի. յորժամ գաս Աստուած ի մէջ աստուածացելոցն՝ ի բա-ժանել և որոշել զպատիւ զանազան սիրելեաց քոց: Այլ

զմեզ զամենեսեան զհաւատացեալս 'ի քեզ արժանի արա զայս ահաւոր և զսոսկալի օրս հանապազ տպաւորել առաջի աչաց մերոց · 'ի յիշմն գգալի և պատրողական կենցաղավարութիս պատրաստեա զմիտս և զզգայարանս մեր: Պատկերացո՛ տր զանհրաժեշտ զալուստ քո առաջի աչաց մերոց · քաղցրութբ քով քաւիչ լեր գործելոց մեղաց մերոց · 'ի հանդերձեալ գեհեննոյն պահեա՛ զմեզ · և ժամանեցո՛ զմեզ զամենեսեան արժանաւորապէս հանդիպել քում գալստեանդ: Ամենազօրութ տր՝ նորոգեա՛ զզմարմինս խոնարհութե մերոյ ըստ անեղծ փառաց քոց քս տծ մեր: Ընդ որում հօր՝ միանգամայն և հոգւոյդ սբյ վայելէ փառք իշխանութի և պատիւ, այժմ և միշտ և

յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Շարական, Տեառն յետ սաղմոսման": Փառաց 'ի փառս":

Երգ, 'Ի դնել բեմին: Հոգւոյ: Հայր մեր:

Օրհնի ան, Աստուած խաղաղութե": Օրհնութիւն և փառք հօր":

Օրհնեսցի և կնքեալ պահեսցի գերեզման և ոսկերք ծառայիս այ, նշանաւ սբ խաչիս և բանիւ սբ աւետարանիս, անուամբ հօր և որդւոյ և հոգւոյն սբյ:

Աստուած խաղաղութե զտր աղա": Օրհնութիւն և փառք հօր":

Օրհնեսցի և կնքեալ պահեսցի գամբարան և ոսկերք ծառայիս այ, նշանաւ սբ խաչիս և բանիւ սբ աւե":

Աստուած խաղաղութե զտր աղա": Օրհնութիւն և փառք հօր":

Օրհնեսցի և կնքեալ պահեսցի շիրիմ և ոսկերք ծառայիս այ, նշանաւ սբ խաչիս և բանիւ սբ աւե":

Կնքեսցէ՛ և աղօթեսցէ՛:

Անշարժ եղիցի կնիք տրութե 'ի վր բնակարանի ծառայիս այ, մինչև եկեալ նորոգողն և ճարտարապետն ամենե-

 ցուն

ՙԻ հանապազօրդ առնելոյ ։

ցուն տ՟րն մեր յ՟ս ք՟ս, նորոգեսցէ հայրական փառօք 'ի փառս ։ Ամէն ։

Ողջոյն տարոյն Մարիամու, Ասէ ես խաղաղութեան զ՟որ" ։

Խնդրեսցուք հաւատով 'ի Հօրէ մ՟ր քաւութիւն մեղաց և թողութիւն յանցանաց · փրկելոյ զմեզ 'ի վշտաց և 'ի նեղութեանց · խնամելոյ 'ի վ՟ր մեր ողորմութիւն և գթութիւն տ՟ն ա՟յ ամենակալին, կեցո և ողորմեա ։

Ա՟ծաճահանայն ասէ զՈղջոյնս ։

Հայր գթութեանց և ա՟ծ ա՟մ մխիթարութեանց, որ մխիթարես զմեզ յա՟մ նեղութիւնս մեր ։ Որ հարկանես ա՟ր՝ և գու խնդրին բժշկես, և ոչ երբէք թողուս 'ի ձեռս անէ քումմէ զստեղծուածս քո ։ Տուր մեզ տ՟ր գթութ՟ե քո՛ հոգի զդաստութ՟ե, հոգի մխիթարութ՟ե · քեւ մխիթարեա ըզ վշտագնեալս սրտիւք, և բժշկեա զմ՟ս ։ Զի հաստատուն քո յուսով առողջացեալք 'ի խաղ՟ս և 'ի սրտմութեանց՝ փառաւորեսցեն զամենայն զերբորդութեանդ · այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։

Հայր մեր որ յերկինս ես, ս՟բ եղիցի անուն՝ ։

Յաւուր յերկրորդում առաւօտուն երրորդ ի հանգստեան : Եւ յերրորդն աւուրն զյիշատակն, զնորին [illegible] է : Ի [illegible] [illegible] [illegible] : Եւ այս աւուրն շաբաթ հանգստեան [illegible] ընդ կարգի սաղմոս : [illegible] ի [illegible], եւ [illegible] ի [illegible] : Եւ [illegible] այս [illegible] [illegible] :

Սաղմոս ԻԹ . Կցորդ . Ընդ երեկոյս հանգիցի լալիւն . ա[illegible]:
[illegible] զքեզ որ՝ զի ընկալար զիս :

Ընթերցուած ի Ծննդոց :

Եւ մնաց յակոբ միայն . եւ մարտնչէր այր մի
ընդ նմա մինչեւ ցառաւօտ : Եւ իբրեւ
ետես թէ ոչ յաղթեաց նմա, բուռն է-
հար զթմբկաձիգէ զստին նորա . եւ ընդարմա-
ցոյց զթմբկաձիգն զստին յակոբայ, ի կռուելն իւրում ընդ
նմա : Եւ ասէ ցնա . արձակեա զիս՝ քանզի այգ եղեւ . եւ
նա ասէ . ոչ արձակեցից զքեզ՝ թէ ոչ օրհնեսցես զիս :
Եւ նա ասէ ցնա՝ զի՞նչ անուն է քո . եւ նա ասէ ցնա՝ յա-
կոբ : Եւ ասէ ցնա . յայսմ հետէ ոչ կոչեսցի անուն քո
յակոբ . այլ իսրայէլ եղիցի անուն քո . զի ժուժկալեցեր

Երկրորդ առաւօտն կանոն։

ը Այ. և ը մարդկան զօրաւոր լինիր։ Եհարց յակոբ և ասէ. պատմեա ինձ զանուն քո. և ասէ՝ զի՞ հարցանես զանուանէ իմմէ։ և օրհնեաց զնա անդ։ Եւ կոչեաց յակոբ զանուն տեղւոյն այնորիկ տեսիլ Այ. զի տեսի զԱծ դէմ յանդիման. և ապրեցաւ անձն իմ։ Եւ ծագեցաւ նմա արև իբրև էանց տեսիլն Այ։

Ընթերցուած յԵսայեայ Մարգարէէ.

Այսպէս ասէ Տր. գամ ժողովել զամ ազգս՝ և զլեզուս. եկեսցեն՝ և տեսցեն զփառս իմ։ Եւ թողից ՚ի վր նոցա նշան. և առ աքեցից ՚ի նոցանէ փրկեալս յազգս. ՚ի Թարսիս. և ՚ի Փուդ. և ՚ի Լուդ. և ՚ի Մոսոք. և ՚ի Թոբէլ. և յԵլլադա. և ՚ի կղզիս հեռաւորս. որոց չլցէ լուեալ զանուն իմ. և ոչ տեսեալ զփառս իմ։ և պատմեսցեն զփառս իմ և զանուն իմ ՚ի մէջ ազգաց։ Եւ ածցեն զեղբարս իւրեանց յամ ազգաց պատարագ Տն. հեծելս կառօք՝ հանդերձ պալարակալ երիվարօք և հովանոցօք ՚ի սբ քաղաքն Եմ, ասէ Տր. որպէս մատուցին որդիքն իսրայէլի զպատարագս իւրեանց ինձ սաղմոսիւք ՚ի տուն Տն։ Եւ ՚ի նոցանէ առից ինձ ՚ի քահանայս՝ և ՚ի ղևտացիս՝ ասէ Տր։ Զոր օրինակ երկինք նոր՝ և երկիր նոր. զոր ես առնեմ կալ առաջի իմ, ասէ Տր. նոյնպէս կացցէ զաւակն ձեր։ Եւ եղիցի ամիս յամսոյ՝ և շաբաթ ՚ի շաբաթէ. եկեսցէ ամ մարմին երկիր պագանել առաջի իմ յԵմ՝ ասէ Տր Ած։ Եւ ելցեն՝ և տեսցեն զոսկերս մարդկան առ իս յանցուցելոց. զի որդն նոցա ո՛չ վախճանեսցի. և հուր նոցա ո՛չ շիջցի. և եղիցին ՚ի տեսիլ ամենայն մսեղեաց։

***

Երկրորդ առաքեալ կանոն։

Պետրոսի առաքելոյն 'ի կաթողիկեայ երկրորդ թղթոյն՝։

Զայս ձեզ սիրելիք երկրորդ թուղթ գրեմ․ որովք զարթուցից 'ի յիշատակ զհաստատուն միտս ձեր։ Յիշել զյառաջագոյն ասացեալ պատգամսն 'ի սրբոց մարգարէից և յառաքելոցն ձերոց, զպատուէրս տն̄ և փրկչին։ Բայց զայս նախ գիտասջիք՝ զի յաւուրս յետինս եկեսցեն արհամարհողք, այպանողք, որք ըս̄տ իւրեանց ցանկութեցն գնասցեն։ Եւ ասիցեն․ ո՞ւր են աւետիք գալստեան նորա․ զի յորմէ հետէ հարքն ննջեցին՝ ամենայն նոյնպէս կայ մնայ 'ի սկզբանէ արարածոց։ Եւ զայն մոռացեալ իցէ նոցա՝ որք զայսն կամին․ եթէ երկինք էին 'ի սկզբանէ՝ և երկիր 'ի ջրոց․ և ջուրբք հաստատեալ բանիւն այ̄։ Ի ձ̄ոց երբեմն աշխարհ ջրհեղեղաւ ապականեալ կորեաւ։ Եւ այժմ երկինք և երկիր նովին բանիւ գանձեալ են․ հրոյ պահեալք յօրն դատաստանի՝ և կորստեան ամբարշտաց մարդկան։ Եւ այս և մի լիցի 'ի ձէնջ ծածկեալ՝ սիրելիք․ զի մի օր՝ առ̄ տն̄ իբրև զհազար ամ է․ և հազար ամ իբրև զմի օր։ Ոչ յամեցուցանէ տր̄ զաւետիսն՝ որպ̄ ոմանք յամր համարին․ այլ երկայնամիտ լինի առ ձեզ։ քանզի ոչ կամի եթէ ոք կորիցէ․ այլ ամենեցուն հասանել յապաշխարութի։ Այլ եկեսցէ օր տն̄ իբրև գող․ յորում երկինք տագնապաւ անցցեն․ և բնութիւնք հրով կիզեալք լուծցին․ և երկիր՝ և որ 'ի նմա գործք գտանիցին։ Եւ 'ի լուծանիլ այսմիկ ամենայնի, որպիսի ինչ պարտ իցէ ձեզ գտանիլ․ այլ սբ̄ և ա̄ծապաշտ կարգաւ ակն ունիլ։ Եւ փութալ հասանիլ գալստեան աւուրն տն̄․ յորում երկինք հրայրեացք լուծանիցին․ և բնութիւնք հրդեհեալք հալիցին։ Նորոց երկնից՝ և նորոյ

Երկրորդ առաւօտն կանոն։

Երկրի ը̅ աւետարանեացն հայեցեալ ապաշխարութեամբ՝ յորս արդարութիւն բնակէ։ Ս̅ ո̅ որոյ սիրելիք՝ այսոցիկ ապասեալք՝ փոյթ անձին ունիջիք՝ անբիծք և անարատք գտանիլ նմա ի խաղաղութեան։ Եւ զտն երկայնմտութիւնն փրկութեան համարիջիք։

Պօղոսի առաքելոյն ի Թեսաղոնիկեցւոց երկրորդ թղ՟։

Գոհանալ պարտիմք զայ յամ ժամ վս ձեր եղբարք՝ որպէս և արժան իսկ է։ Զի յոյժ աճէ հաւատքն ձեր, և յաճախէ սէր իւրաքանչիւր ձեր ամենեցուն առ միմեանս։ Որպէս և մեզ ձեւք պարծել յեկեղեցիսն այ վս համբերութեան ձերոյ և հաւատոյ՝ յամ հալածանս ձեր և ի նեղութիս, որոց դուքն համբերէք։ Յօրինակ արդար դատաստանին այ. արժանի լինել ձեզ արքայութեան այ՝ վս որոյ և չարչարիք։ Եթէ արդար առաջի այ հատուցանել նեղչացն ձերոց նեղութիւն։ Եւ ձեզ նեղելոց զհանգիստ ը̅ մեզ՝ ի յայտնութեան տն մերոյ յի յերկնից, հրեշտակօք զօրութեան իւրոյ։ Ի բոց հրոյ առնուլ զվրէժս յայնցանէ՝ ոյք ոչ ճանաչեն զած, և որք ոչ հնազանդին աւետարանին տն մերոյ յի քի։ Որք տուժեսցեն վրէժս ի սատակումն յաւիտենից՝ յերեսաց տն՝ և ի փառաց զօրութեան նորա։ Յորժամ գայցէ փառաւոր լինել ի մէջ սրբոց իւրոց, և սքանչելի ի մէջ ամ հաւատացելոց։ զի հաւատարիմ եղև վկայութիւն մեր ի վր ձեր յաւուր յայնմիկ։ Յոր և աղօթս առնեմք վս ձեր յամ ժամ, զի զձեզ արժանիս արասցէ կոչմանն ձերում ած մեր՝ մինչև լցցէ զամ զհաճութիւն բարութեան. և զգործս հաւատոյն զօրութեամբ։ Զի փառաւորեսցի անուն տն մերոյ յի քի ի ձեզ՝ և դուք ի նմա. ըստ շնորհացն

Երկրորդ առաւօտուն կանոն։

տոյ մերոյ և տն յի քի։ Աղաչեմք զձեզ եղբարք՝ վս գալստեան տն մերոյ յի քի, և մերոյ ժողովելոյն առ նա։ Մի վաղվաղակի խռովել ձեզ ի մտաց. և մի զարհուրել. մի հոգւով՝ և մի բանիւ, և մի թղթով իբրու թէ ի մէնջ. որպէս թէ եկեալ հասեալ իցէ օրն տն։ Մի ոք զձեզ խաբեսցէ՝ և մի իւիք իրօք։

Ալէլուիա։ Տր լուր աղօթից իմոց. և աղաղակ իմ"։

Աւետարանս որ ըստ Յոհաննու։

Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի. ինքն միայն կայ, ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ։ Որ սիրէ զանձն իւր՝ կորուսանէ զնա. և որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ, ի կեանսն յաւիտենականս պահեսցէ զնա։ Եթէ ոք զիս պաշտեսցէ, զկնի իմ եկեսցէ. և ուր եմ ես, անդ և պաշտօնեայն իմ եղիցի։ Եթէ ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ։ Արդ այժմ անձն իմ խռովեալ է. և զինչ ասացից. եթէ Հայր՝ ապրեցո զիս ի ժամուս յայսմանէ։ այլ վս այնորիկ եկի ես ի ժամս յայս։ Հայր փառաւորեա զանուն քո։ Եկն բարբառ յերկնից՝ և փառաւոր արարի, և դարձեալ փառաւոր արարից։ Եւ ժողովուրդն որ կայր և լսէր, ասէին որոտումն լինել. կէսքն ասէին, հրեշտակ խօսեցաւ ընդ նմա։ Պատասխանի ետ յս և ասէ, ոչ վս իմ ինչ եկն բարբառս այս, այլ վս ձեր։ Արդ այժմիկ դատաստան է աշխարհիս այսորիկ. այժմիկ իշխան աշխարհիս այսորիկ ընկեսցի արտաքս։ Եւ ես յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին ձգեցից առ իս։ Զայս ասէր, նշանակել՝ թէ որով մահու մեռանելոց իցէ։ Պատասխանի ետ նմա ժո-

ղովուրդն, մեք լուեալք յօրինացն եթէ Ք(րիստո)ս ն յաւիտեան կայ. և դու զիարդ ասես եթէ պարտ է բարձրանալ որդւոյ մարդոյ. ո՞վ է այն որդին մարդոյ: Ասէ ցնոսա Յ(իսու)ս. փոքր միւս ևս ժամանակ լոյս ընդ ձեզ է. գնացէք՝ մինչդեռ զլոյսն ունիք. զի մի խաւար զձեզ հասցէ. զի որ գնայ ի խաւարի, ոչ գիտէ յո երթայ: Մինչդեռ զլոյսն է ընդ ձեզ ունիք՝ հաւատացէք ի լոյսն. զի որդիք լուսոյ եղիջիք:

Ի՜ն սարկաւագն. Ըստ որում է, Տ(է)ր ի վերուստ խաղաղ:

Ի՜ն քահանայն առ զՍեղանն:

Տէր յաւիտենական, անսկիզբն և անպատճառ յէից. կատարեալ զօրութիւն, բնութեա գոյ բնութիւն. հայր ամենակալ՝ հանդերձ միածնիւդ քով և կենդանարար հոգւովդ: Միաբան զօրութեամբ առեալ հող յերկրէ՝ արարեր զմարդն և բնակեցուցեր զնա ի բարեկեցութեան և ի յաս զարթագուարն զպատուիրանն փոփոխուն. ուր ոչ գոյր պէտս զերկոց. զի ոչ գտցին խոկ ասաց հեռանդութեանց և ոչ մահ. քանզի մերձեալ էին ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք. վ(ա)ս(ն) զի ամենակեցոյց աչք քո հանապազ ի վ(ե)ր ն(ո)ր(ա) հայէին: Իսկ որս ձախանցեալ առ ամայ՝ մոռացաւ զպատուիրանն դարձեալ զոր եդեր նմա. և հանեալ կնոջն գաւազանու սանն ի բանտարկութեան մարից, որ խորամանկութեամբ իւրով ի պատճառս ծնանելոյ ըկէց զնա ի փառաց վայելչութենէն: Իսկ դու որ ի ծ(ագմանէ) մեր բարեգութ և ողորմած՝ հանեալ եդեր զնա արտաքոյ դրախտին փափկութեան յերկիր ուստի առաւ: Ի՜ն իբրև տիրեալ այնպէս թշնութեան չարին ի բոլոր ազինս՝ որով ամենեքեան ծառայեցին մահու, ապա գթացար հայրախնամ ողորմութեամբ

Երկրորդ աղօթքն նախոնն ։

Թէպէտ քո՛ւ. ընդ հարսն մեր հաճեցար, և կոչեցեր զքեզ ամ՛ արարչահանմու՝ քահանայից և յակոբայ՝ ամ՛ կենդանեաց և մեռելոց. վս՛ զի ամենեքեան քեզ կենդանիքեն ։ Ջան_ զի տեսեալ ամենայն մարդասիրութեդ քո զաշխարհս ամ կործանեալ ՚ի պատրող թշնամւոյն, առաքեցեր զըզ միածին որդեդ քո մարմնանալ ՚ի մերմէ բնութենէս ։ Որոյ ծնեալ էառ զկերպարանս ծառայի ՚ի մէջ և յանձնա_ ռեալ կուսէն մարիամայ. և կրեալ ՚ի մարմնի իւրում զամ պարտիս մեր՝ զոր պարտ էաք վս՛ յանցանաց նախահօրն, ելեալ բևեռեցաւ կամօք իւրովք ՚ի վր՛ խաչափայտին՝ ընդ որում սպան զթշնամութի՛ մեր, և ծրարեաց զխայթոց մե_ ղաց մերոց ։ Իջանելովն ՚ի դժոխս՝ աւերեաց զբռնու_ թիւն մահու հզօր զօրութբ իւրով ։ յարուցեալ յեր_ րորդ աւուր՝ նստաւ ընդ աջմէ քումմէ. և մեզ խոստա_ ցաւ յարութի՝ հաւատացելոցս յամենայն երկրորդութեդ՝ ՚ի միւսանգամ գալստեանն իւրում փառօք հօրդ և հրեշ_ տակօք սրբովք ՚ի յաւուրն յետնում ։ Եւ արդ՝ տր ամ ամենակալ, զթա՛ ՚ի ծառայս քո՝ որ եթող զանցաւոր զկեանս իւր ըստ հրամանի քո. և դարձաւ ՚ի հող ուստի ստեղծաւ ։ Իսկ ժողովեալ ծառայքս քո ՚ի տեղի հանգս տեան սորա՝ աղաչեմք և խնդրեմք ՚ի քէն, առաքեա՛ զըզ հոգիդ քո սբ ՚ի վշտացեալս սրտիւք, և բժշկեա՛ զվէրս հոգւոց և մարմնոց ։ Զի դու ես տր ամ՝ որ հարկանես և բժշկես. և ոչ ոք է որ հանէ զմեզ ՚ի ձեռաց քոց ։ Ողջե_ լեա՛ տր և քաւարարեա՛ ՚ի վր մեր, ծագելով առ մեզ զա_ ռատօսոս զողորմութիս քո՝ դադարեցուցանել զսուգ լալոյ երեկոյին. առ ՚ի խնդութի առաւօտուն մեծի՝ յոր ժամ կոչես զննջեցեալս քո ՚ի մահուանէ ՚ի կեանս յաւէ_ տենից ։ Ընդ որս՝ տր և դասաւորեա՛ զծառայս քո ընդ սրբս

քո,

Երկրորդ աղօթք կանոնին ։

քո, բարեխօսութեամբ սրբուհւոյ աստուածածնին. զի քեզ վայե-
լէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ"։

Խաղաղութիւն ամենեցուն ։ Եւ երկիր պագեսցուք ։

Գոհանամք զքէն տէր աստուած մեր, որ վասն ճշմարտութեան քոյ՝ լուծեր 'ի հող կմախացեալ բնութիս մեր, զպատրեալս 'ի բանսարկու թշնամւոյն. որում ասացեր իսկ աստուածային բանիւ քով, եթէ հող էիր և 'ի հող դարձցիս. վասն որում խոնարհեցան անձինք մեր, և յերկիր կցեցան միջք մեր ։ Այլ զի մեծ սանդուղ կամեցար նորոգել և կեցուցանել զմեզ, դու ինքնին առաքեցար 'ի հայրական ծոցոյ. իջեր 'ի գերեզման՝ և մեռեալս համարեցար, զի զմեզ նմանակիցս արասցես քեզ և հաղորդ աստուածութեան քոյ 'ի փողյեալն, յայնմ գիշերի՝ յորում դաս պսակել զաշխատեալքս քո՝ և հատուցանել արդար դատաստանաւ քով ։ Ձայնիւ առեալ զթամ 'ի հոգի հանգուցելոյս՝ և հանգուցուսցես յարքայութեան քում. Եւ զմեզ արժանի արա փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սուրբ հոգւոյդ այժմ և"։

Ասա աւէն, Աստուած անմահ"։ Եւ ասեն Սուրբ. Հոգւոյ"։ Եւ օրհնեն զերեզմանն, Ողորմեա և կենդանի պահեսցի"։ (ապերեալ կոյ յառաջին աղօթ կարգն 'ի վերն.) Օրհնի աւէն, Հայր մեր որ յերկինս ես"։

Յայսմ Յերրորդ աւուրն։ Յորժամ ՚ի գերեզմանն, և ՚ի գնալն ա-
ռեն զՄԿԻԲԻծան, և զՅօհաննու ՚ի ծեղութենն. (որդ և չէ ... օրն։)
Այս աւուր վհանգստեան շաբաթուն, և զփառս ՚ի Բարձունսն,
և հողն լինելն ՚ի վերայ գերեզմանին։ Նմանապէս այս կանոն կատարի։

Սաղմոս՝ ՃԻԹ։ ՚Ի խորոց կարդացի առ քեզ տէր տէր՝ լուր"։
Եղիցին ականջք քո ՚ի լսել զձայն"։

Ընթերցուած յԵսայեայ Մարգարէէ։

Այսպէս ասէ տէր, մոռասցին նեղութս առաջինս, և ոչ ևս անկցի ՚ի սիրտս նց։ Զի եղիցին երկինք նոր և երկիր նոր. և ոչ ևս յիշեսցեն զառաջինսն, և ոչ ևս անկցի ՚ի սիրտս նոցա։ այլ ուրախութիւն և ցնծութիւն գտցեն ՚ի նմա՝ զոր ես հաստատեցից։ Եւ դադարեսցեն՝ և եկեսցեն ՚ի սիոն ցըն-ծութբ, և ուրախութիւն յաւիտենից ՚ի վերայ գլխոց նց. զի ՚ի վերայ գլխոց նոցա օրհնութիւն և ցնծութիւն, և ուրախութիւն հասցէ նց. մերժեցան ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք։

Պօղոսի առաքելոյն ՚ի Կողոսացւոց Թղթոյն ընթեր"։

Եթէ յարեայք ընդ քս, զվերինսն խնդրեցէք, ուր քս նստի ընդ աջմէ այ։ Զվերինսն խորհեցա-րուք, մի զայս որ յերկրի աստ է։ Զի մեռայք՝ և կեանքն ձեր ծածկեալ են ը քս յայ։ յորժամ քս յայտնեսցի, կեանքն ձեր. յայնժամ և դուք ընդ նմա յայտնեսջիք փառօք։

Ալէլուիայ։ Ձայնիւ իմով ես առ տէր կարդացի"։

Աւե

Ուրբաթ աւուրն կանան։

Աւետարանս որ ըստ Յովհաննու։

Հայր՝ սուրբ արա զնոսա ճշմարտութեամբ քով. զի բանդ ճշմարտութիւն է։ Որպէս զիս առաքեցեր յաշխարհ, և ես առաքեցի զնոսա յաշխարհ, Եւ ի վերայ նոցա ես սրբեմ զանձն իմ. զի եղիցին և նոքա սրբեալք ճշմարտութեամբ։ Ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ և վասն ամենայն հաւատացելոց բանիւն նոցա յիս։ Զի ամենեքեան մի իցեն. որպէս դու հայր յիս՝ և ես ի քեզ. զի և նոքա ի մեզ իցեն. զի և աշխարհ հաւատասցէ, եթէ դու առաքեցեր զիս։ Եւ ես զփառսն զորս ետուր ինձ, ետու նոցա. զի իցեն մի, որպէս և մեք միեմք։ Ես ի նոսա՝ և դու յիս. զի եղիցին կատարեալք ի մի. և գիտասցէ աշխարհ եթէ դու առաքեցեր զիս. և սիրեցի զնոսա՝ որպէս դու զիս սիրեցեր։ Հայր՝ զորս ետուրն ինձ, կամիմ, զի ուր եմն ես, և նոքա իցեն ընդ իս. զի տեսանիցեն զփառսն իմ զորս ետուրն յիս, զի սիրեցեր զիս յառաջ քան զլինել աշխարհի։

Շարական, Միածին ուղղելոյ զգնացս մեր ի ճանա։

Եւ ասէ զԱղօթս։

Ամենակալ տէր՝ որ իշխանդ ես կենաց և մահու. և մարդասիրապէս խոնարհեցար ի մահկանացու բնութիս մեր. մինչև ի դերեզմանն իջանելով զփորձ առ երանապտիան և ամենայն մարմնոյդ զերդոյ բնութեան՝ առանց մեղաց։ Արդ՝ ընկալ զխոստովանող մարմինս որոշեալ ի հող ի դարձի մահկանացու բնութեանս, որ ի քեզէն ընկալաւ զդատապարտութիւն։ Եւ ողորմութեամբ քով շնորհեա՛ ծառայիս քոյ յարդար դա–

տաս

տառապանօք բարեաց պատասխանատուութեամբ կալ առա-ջի ահաւոր բեմբիդ՝ և ընդունել զողորմութիւն ընդ սուրբս քո։ և փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ՝ այժմ։

Խաղաղութիւն ամենեցուն։ Աստուծոյ երկիրպագեսցուք։

Որ աղբիւրդ ես կենաց և պարգև՝ որք ճշմարտապէս ճանաչեն զհոգիդ մեր։ որով կնքեցաւ ծառայս քո (այս անուն) քահանայ ՚ի մէջ աւազանին՝ զգենլով զքո զդրոշմ։ և պաշտելով զհաւատ մեր քրիստոնէութեան՝ արժանի եղև քո առատապարգև շնորհիդ քահանայական կոչմանս այսորիկ։ և ՚ի կատարման իւրում յուղարկեցաք քո յու-սովդ ՚ի հանգերձեալ յաշխարհն։ Աղաչեմք զքեզ բա-րերար և բազումողորմ Աստուած հոգիդ մեր։ մի՛ թողուր զսա ՚ի պահպանողական զօրութենէդ քումմէ արտաքս։ այլ հանգիցէ ՚ի պատրաստ բնակութիւնս՝ ուր զսուրբս քո ժո-ղովես և հանգուցանես, և պահպանես յանդորրութեան։ Եւ յորժամ առաքես ՚ի սրբութենէդ քումմէ ՚ի նորոգել զերեսս երկրի, և տաճարս զքո զընտրեալսն, խառնեա զսա ՚ի դասս ընտրելոց քոց։ անցո զպատուհասէ։ զեր-ծո՛ ՚ի դատապարտութենէ մեղաց։ Որպէս զի՝ քեզ յանձն առնելով զհոգի սորա՝ հաւատացուք լսելի լինել աղօ-թից մերոց։ զի դու ես կենդանարար և նորոգիչ հոգւոց մերոց։ և քեզ վայելէ փառք իշխանութիւն՛՛։

Սահ գործեալ՛՛։ Ձայն։ Հոգւոյ՛՛։ Եւ կնքեն զգերեզմանն, ասեն՝ Հայր մեր որ յերկինս ես՛՛։

Կանոն Չորրորդ աւուրն։ Յիշատակ Դիոնեսիոսեանն, և առէն
ղեւթերեան, և Ռուստիկեան հանդերձեալն, և Փիլաոս ՚ի Եար_
ջոնեան, և հօր նորա Թեոփիլեայ Դերբեղեանին, (որք և յանդիման
աւուրսն։) Երգ այս կանոն կարգի։

Սաղմոսն յորդ, ՃԽԲ․ Հոգի քո բարի առաջնորդ․
Տր լուր աղօթից իմոց․ ունկն դիր։

Ընթերցուած յԵսայեայ Մարգարէէ․

Զարթիր, զարթիր Եէմ և զգեցիր զզօրութի
բազկի քո՝ զարթիր իբրև յաւուրսն՚ի սկզբ
բանէ՝ իբրև յազգացն յաւիտենից․
ոչ դու այն ես՝ որ տաշեցեր զլայնու_
թիւնն, փանտեցեր ըզ վիշապն։ Ո՞չ դու այն ես որ աւե
րեցեր զծովն զբազմութի ջուրցն անդնդոց․ որ արա_
րեր զխորս ծովու ճանապարհ անցից փրկելոցն և ապրե
լոց։ Զի ՚ի ձեռն Տն եղիցի դարձ․ և եկեսցեն ՚ի Սիոն ցնծու_
թեամբ և ուրախութբ յաւիտենից․ զի ՚ի վր գլխոց նց
օրհնութի․ և ուրախութի հասցէ նոցա․ մերժեցան ցաւք
և տրտմութիւնք և հեծութիւնք․

Պօղոսի առաքելոյն ՚ի Փիլիպեցւոց Թղթոյն ընթերց․

Այլ որ ինչ ինձ շահ էր՝ զայն վնս համարիմ վն քի․
Այլ և համարիմ իսկ զամ վնաս վն առաւել գիտու_
թեանն յի քի տն իմոյ։ Վն որոյ զամն զրկեցայ՝ և համա_
րիմ կղկղանս, զի զքս շահեցայց և գտայց ՚ի նմա․ Իբրև

Չորրորդ աւուրն կանոն։

ոչ եթէ զիմ արդարութիւն, որ յօրինաց անտի է ունելով, այլ զհաւատոցն քի յի. որ յայ արդարութիւնն է։ Ճանաչել զնա՝ և զզօրութիւն յարութեան նորա՝ և զհաղորդութիւն չարչարանաց նորա՝ կերպարանակից լինիլ մահու նորա. թէ որպէս հասից ի մեռելոցն յարութեան։ Աստի և փրկչին ակն ունիմք տն յի քի. որ նորոգեսցէ զմարմին խոնարհութեան մերոյ կերպարանակից լինել մարմնոյ փառաց իւրոյ. ըստ զօրութեանն՝ առ ի կարող լինելոյ հնազանդեցուցանել իւր զամ։

Ալէլուիայ։ Սաղմոս ՃԺԵ։ Հաւատացի՝ զոր և խօսեց"։

Աւետարան որ ըստ Յօհաննու։

Ասէ յս. եթէ դուք կայցէք ի բանին իմում, ճշմարիտ աշակերտք իմ էք. և ծանիջիք զճշմարտութիւնն. և ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ։ Պատասխանի ետուն և ասեն. զաւակք աբրահամու եմք, և ոչ ումեք երբէք ծառայեցաք, զիարդ ասես եթէ ազատք լինիջիք։ Պատասխանի ետ նոցա յս։ ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ամ որ առնէ զմեղս, ծառայ է մեղաց։ Եւ ծառայն ոչ յաւիտեան կայ ի տան. իսկ որդին յաւիտեան կայ։ Իսկ արդ՝ եթէ որդին զձեզ ազատեսցէ, ճշմարիտ ազատք լինիջիք։

·Ի ճաշու, Վ ՟Ը գտանելոյ մեզ զշնորհս և զո"։

Յօձաձայն աւէ զԱղօթս։

Տէր մեր, ամ իրօք արդարք փառաւորք ընդ հրեշտակս՝ զու զահաճարարեալ զքեզ օրհնեն, մինչ հեշտացուցանես զնոսա յաւէժ պայծառութեամբ քով. և իւրաքանչիւրոք սպա

 ծա

Չորրորդ աւուրն կանոն ։

Ծառանայ վայելուչ փառօք ծնութե՟ քոյ՝ տեսանելով զինքն ում զլուսաւոր Հրեշտակս ․ այնու Հետեւ փախստական լինին ցաւք և տրտմութիւնք և Հեծութիւնք , պատրաստութե՟ լուսոյ և խնդութե՟ քով տր ։ ․Յանցի և մով սէս ՚ի մխումն վայրկենին տեսող եղեալ փառաց քոց տր ՚ի ճառագոյ երկրի՝ մինչ եր ՚ի մահկանացու մարմնոս մեր , ոչ կարեմք Հայիլ յերեսս նորա ․ իսկ որք արժանի լինիցին Հայիլ յերեսս քո ած , որպիսի արդեօք լինիցին ։ Արդ՝ ուրախութե՟ դոՀանամք զքեն տր , որ արժանի արարեր զմեզ մասին ժառանգութե՟ վիճակի սրբոցն ՚ի լոյս ․ և փրկեցեր զմեզ յիշխանութե՟ խաւարի ․ և փոխեցեր յարքայութի՟ որդւոյ քոյ սիրելւոյ տն մերոյ և փրկչին յի քի ։ Որում վայելէ փառք իշխանութի՟ և պա՛ ։

Խաղաղութե՟ ամենեցուն ։ Այ երկիրպագեսցուք ։

Ծնկանիմք առաջի քոյ մարդասիրութե՟դ , և աղաչեմք զքո զթութի՟դ ․ Հայեա՛ց տր ողորմութե՟ քով ՚ի Հոգի ննջեցելոյս այսորիկ ։ Բազմագութ տր՝ որ յոյսդ ես Հաւատացելոց , Ներեա՛ յանցանաց սր՟ և թող սմա բարեխօսութեամբ ընտրելոց քոց ․ Ներո՛ղ և երկայնամիտ տր , քանզի և բազումողորմ ես , ՚ի գալստեան որդւոյ քոյ՝ որ ճաշակեաց զմահ և էջ ՚ի գերեզման , զի Հանցէ զկապեալսն քաջութե՟ իւրով ։ Դու այժմ տր ած , զթեա՛ ՚ի Հոգի Հանգուցելոյս , և յիշեա՛ զսա յաւուրն յայտնութե՟ ․ և դասաւորեա՛ ը՟ սր՟ս քո ։ Շնորհօք և մարդասիրութե՟ տն մերոյ և փրկչին յի քի ․ որում վայելէ փառք իշխանութի՟ և պա՛ ։

Ճանապարհ մոլորելոց ։ Երգ ։ Հոգւոց ։ [illegible] կէրեզմանն ․ Նաւէն՝ Հայր մեր որ յերկինս ես ։

Կանոն հինգերորդ աւուրն ։ Յորժամ ՚ի գերեզմանն, տա-
նեն զՆնջեցեալն, եւ զՄարմին հանգուցեալն, եւ զփոխ ՚ի
Եարչուան, եւ հող ընդ ՚ի վերայ գերեզմանին, (որ եւ ասի
ցեալ աւուրն ։) Յաղագս կանոնի կարգի ։

Սաղմոս ԻԹ ։ Ընդերեկս հանգիցեն լալիք · առաւօտ"։
Բարձր առնեմ զքեզ Տր · զի ընկալար"։

Ընթերցուած յԵսայեայ Մարգարէէ ·

Այսպէս ասէ Տր, ոչ եւս եղիցի քեզ արեգակն ՚ի լոյս տուընջեան, եւ ոչ ծագումն լուսնի տացէ քեզ զլոյս ՚ի գիշերի · այլ եղիցի քեզ Տր լոյս յաւիտենական՝ եւ փառք քո Ած ։ Ոչ մտցէ քեզ արեգակն · եւ լուսին ՚ի քէն ոչ պակասեսցի · եւ եղիցի քեզ Տր լոյս յաւիտենական ։

Պօղոսի առաքելոյն ՚ի Հռովմայեցւոց Թղթոյն է ընթեր"։

Իսկ եթէ Քս ՚ի ձեզ է՝ ապա մարմինն մեռեալ է վս մեղաց · եւ հոգին կենդանի վասն արդարութեան ։ Իսկ եթէ հոգի այնորիկ՝ որ յարոյց զՅս ՚ի մեռելոց՝ բնակեալ է ՚ի ձեզ · ապա եւ որ յարոյց զՔս ՚ի մեռելոց՝ կենդանացուսցէ եւ զմահկանացու մարմինս ձեր բնակեալ հոգւովն իւրով ՚ի ձեզ ։ Արդ յայսմ հետէ եղբարք՝ պարտապանք եմք ոչ մարմնով ըստ մարմնոյ կեալ ։ Զի եթէ ըստ մարմնոյ կեցջիք, մեռանելոց էք · իսկ եթէ հոգւով զգործս մարմնոյ սպանանիցէք՝ կեցջիք ։ Զի որք հոգւովն Այ վարին, նոքա են որդիք Այ ։

Հինգերորդ աւուրն կանոնն ։

Ալէլուիայ։ Սաղմոս ՃԺԶ։ Օրհնեցէք զՏէր ամենայն ազինք։

Ընթերցուածս որ ըստ Պաւղոսի ։

Զգոյշ լերուք անձանց. գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ եւ արբեցութեամբ եւ հոգովք աշխարհականօք. եւ յանկարծակի հասանիցէ 'ի վերայ ձեր օրն այն։ Զի իբրեւ որոգայթ հասանիցէ 'ի վերայ ամենեցուն, որք բնակեալ են ընդ ամենայն երեսս երկրի։ Արթուն կացէք այսուհետեւ. եւ յամենայն ժամ աղօթս արարէք. զի արժանի լինիջիք զերծանել յայնմ յամենայնէ, որ լինելոց է. եւ կալ առաջի որդւոյ մարդոյ։ Եւ էր 'ի տուէ 'ի տաճարին ուսուցանէր. եւ զգիշերս ելեալ ագանէր 'ի լերինն՝ որ կոչէր Ձիթենեաց։ Եւ ամենայն ժողովուրդն կանխէր ընդ առաւօտս առ նա 'ի տաճարին լսել 'ի նմանէ։

Քարոզ՝ Խնդրեսցուք հաւատով միաբան։

Եւ քահանայն ասէ զԱղօթս ։

Գոհանամք զքեն Ճշմարիտ Աստուած, որ ծանուցեր ազգի մարդկան՝ գթալով 'ի ստեղծուածս անարատ ձեռաց քոց. առաքեցեր զորդին քո սիրելի, որ եկն եւ էջ 'ի գերեզման. զդրունս դժոխոց խորտակեաց կենսաբեր յարութեամբն իւրով. եւ քաղցր ձայնիւն կոչեաց առ ինքն ասելով, եկայք առ իս ամենայն աշխատեալք եւ բեռնաւորք՝ եւ ես հանգուցից զձեզ։ Հանգո՛ Տէր Աստուած զննջեցեալս զայս 'ի ձեռն միածնի քո, զհաւատացեալս 'ի քեզ՝ զոր գնեաց պատուական արեամբն իւրով. եւ արժանաւորեա յաւուր միւսանգամ գալստեանն՝ լսել զձայն երկնաւոր կոչմանն որ ասէ, եկայք

Հինգերորդ աւուրն կանոն ։

օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն ։ Եւ զմեզ զժողովուրդս քո՝ որք եկեալ եմք աղաչել զքեզ, պահեա ամենազօր աջովդ քով մինչև յօր կոչման քոյ ։ Զի զքեզ փառաւորեսցուք ճշմարիտ Աստուած՝ հանդերձ որդւով և ամենասուրբ հոգւովդ ․ այժմ և միշտ և յաւիտեանս ։

Խաղաղութիւն ամենեցուն ։ Տէր երկնից պահեա ։

Յիշեա տէր զհոգի քահանայիս այսորիկ առաջի մեր փառաց քոց ․ և եթէ մարդկօրէն ինչ յանցեալ իցէ սորա, բանիւ, կամ գործով, կամ մտածութեամբ, շնորհեա յանցանաց սորա զթողութիւն ․ որ ոչ յումեքէ արգելուս զթողութիւն քո ։ Ընկալ զհոգի սորա ընդ սուրբս քո ․ և զմեզ արժանի արա փառաւորել զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին ։

Փառաւորեալ ես ։ Երգ ․ Հոգւոյ ։ Եւ կնքեն զերեցկինն, և ասեն՝ Հայր մեր որ յերկինս ես ։

Կանոն Վեցերորդ աւուրն ։ Որպէս ՚ի գերեզմանն, և ասեն զԱռաքինեան, և զՏառապեալ հանգուցեալ, և զԽաչս ՚ի Բարձրացեալ, և հող լնուն ՚ի մէջ գերեզմանին, (որ և յաւելեալ աւուրն ։) Եւ այս կանոն կատարի ։

Սաղմոս ՃԺԶ ․ Սիրեցի զի լուիցէ Տէր ։ Շրջեցան զինև ։

Ընթերցուած Եսայեայ Մարգարէի ․

Եւ ասասցեն յաւուր յայնմիկ ․ ահաւասիկ տէր Աստուած մեր, յոր յուսացեալ էաք ․ և ապրեցուսցէ զմեզ ․ զի այս է տէր ․ և սպասէաք սմա ․ և ցնծասցուք՝ և ուրախ եղիցուք ՚ի փրկութեան մերում ։ Եւ տացէ

մեզ

Վ էջերորդ աւուրն կանոն ։

մեզ զհանգիստ տն ՚ի լերինն սրբութեան իւրոյ . և մուծէ ՚ի նա ժողովուրդ , որ պահէ զարդարութի և առնէ զճշմարտութիւն . մերձակայցն լիցի նոցա , և պահէ ՚ի խաղաղութեան ։ Նոյն արդ մխիթարեցի՛ք զձեզ ասէ տր յամ սրտմտութեանց ձերոց ։

Յակոբու առաքելոյն ՚ի կաթողիկեայց թղթոյն է ըն"։

Երկայնամիտ լերուք եղբարք իմ մինչև ՚ի գալուստ տն . ահա մշակ երկայնամտեալ սպասէ պատուական պտղոյն երկրի , մինչև առցէ զկանուխ և զանագանն ։ Երկայնամտեցէ՛ք և դուք . հաստատեցէ՛ք զսիրտս ձեր՝ զի գալուստ տն մերձեալ է ։ Մի՛ տրտմեցուցանէք զմի-միանս եղբարք՝ զի մի՛ դատիցիք . ահաւասիկ դատաւորն առ դուրս կայ ։ Օրինակ առէք եղբարք չարչարանաց և երկայնմտութե զմարգարէսն՝ որք խօսեցան յանուն տն ։ Ահաւասիկ երանեմք համբերողաց . զհամբերութիւնն յոբայ լուարո՛ւք՝ և զկատարումն տն տեսէ՛ք . զի բազմագութ է տր և ողորմած ։

Ալէլուիայ ։ Սաղմոս ի՟թ . Բարձր առնեմ զքեզ տր զի ընկ"։

Աւետարան որ ըստ Մարկոսի ։

Եւ տեսցեն զորդի մարդոյ եկեալ ՚ի վերայ ամպոց երկնից , զօրութբ և փառօք բազմօք ։ Նա առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ . և ժողովեսցեն զընտրեալս նորա ՚ի չորից հողմոց , ՚ի ծագաց երկնից մինչև ՚ի ծագս նց ։ ՚Ի թզենւոյ անտի ուսարո՛ւք զառակն . զի յորժամ նորա ոստքն կակղասցին և տերևն ցցուեսցի , գիտէք թէ մե՛րձ է ամառն ։ Նոյնպէս և դուք յորժամ տեսանիցէք զայս ամ , գիտասջիք թէ մե՛րձ է ՚ի դուրս ։

Վեցերորդ աւուրն կանոն:

Ամէն ասեմ ձեզ` եթէ ոչ անցցէ ազգս այս` մինչեւ այս ամենայն եղիցի: Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ մի՛ անցցեն:

«Քարոզ, Մ՞ գտանելոյ մեզ զշնորհս»:

Սա՛ ժամահամայն ասէ զՄաղթս:

ուաճորեմք զքեզ փառաց Թագաւոր, յոյս եւ ակնկալութիւն ամ արարածոց. Քեզ յուսով յուսացաք: Որ փոխանակ ապականացու կենցաղոյս, զանապական եւ զանվախճան կեանս շնորհեցեր. եւ փոխանակ սնոտի եւ ախորական կենացս, պարգեւեցեր մեզ զմերքին եդեմ: Եւ վասն որոյ աղաչեմք զքեզ տէր. թող զմեղս` եւ քաւեա զանօրէնութիւնս սորա, եւ արժանաւորեա զսա հանդերձիլ յանտրտում ուրախութիւնսդ, Քրիստոս Յիսուս Տէր մեր. որում վայելէ փառք եւ»:

Խաղաղութիւն ամենեցուն: Աստուծոյ երկիր պագեսցուք:

Աղաչեմք զքեզ ողորմած տէր, գթա՛ ի հոգի ննջեցելոյս (այս անուն) քահանայիս. որ ի ձեռն կոչման քոյ փոխեցաւ յանցաւոր աշխատութենէս` հաւատացեալ ի ճշմարիտդ տէր. եւ ջնջեա՛ զձեռագիր անօրէնութեան սորա զոր յանցեալ իցէ առաջի քոյ. եւ գրեա՛ զանուն սր ի դպրութեան կենաց. զի դու ես կեանք եւ յարութիւն մեռելոց: Եւ զհաւատացեալ ժողովուրդս քո հովանեաւ բազկի քոյ պահեա՛ քս տէր մեր: Եւ քեզ հանգուցեալք զօրհնութիւն եւ զփառս ընդ հօր եւ ընդ սբ հոգւոյդ. այժմ եւ միշտ»:

Ամէն: Տէր. Հոգւոյ»: Ս՛ կեցէն պէտէրեղմանն. եւ ասէն` Հայր մեր որ յերկինս ես»:

***

Կանոն Հինգերորդ աւուրն։ Կիրական ՚ի գերեզմանն. և առեն զ[illegible], և զՇարական հանգստեան, և զ[illegible] ՚ի բարձրանան. և հող լնուն ՚ի վերայ գերեզմանին, (որպէս և այն պէտաւնութեան։) Նախ այս կանոն կատարի։

Սաղմոս, Հոգի քո սբ և բարի առաջնորդեսցէ"։

Ընթերցուած յԵսայեայ Մարգարէէ։

Եւ կատարեսցին աւուրք սգոյ քո. և ժողովուրդ քո ամենեքին արդար. և յաւիտեանս ժառանգեսցեն զերկիր. պահել զնորատունկս գործոց ձեռաց իւրեանց ՚ի փառս։ Սակաւաւորն հազարաւոր եղիցի, և կրտսերն յազգ մեծ. զի ես Տր ի ժամանակս ժամանակս ժողովեցից զնոսա. Հոգի Տն ՚ի վր իմ. վասն որոյ և օծ իսկ զիս։ աւետարանել աղքատաց առաքեաց զիս. բժշկել զբեկեալս սրտիւք՝ քարոզել գերեաց ըզթողութի՝ և կուրաց տեսանել։ Կոչել ամ Տն ընդունելի. և օր հատուցման այ մերոյ. մխիթարել զամ սգաւորս։ Տալ սգաւորաց սիոնի փառս, փոխանակ մոխրոյ օծումն ուրախութե. և սգաւորացն հանդերձ փառաց՝ փոխանակ ոգւոյն վհատութե։ և կոչեսցին նոքա ազգք արդարութե՝ տունկ Տն ՚ի փառս։

Պետրոսի առաքելոյն ՚ի կաթուղիկեայց երկրորդ թղթոյն է"։

Որպէս ամ ինչ մեզ իւրոյ Ածեղէն զօրութեն առ ՚ի կեանս և յածպաշտութի շնորհեալ, ՚ի ձեռն գիտութեանն այնորիկ՝ որ կոչեաց զմեզ յիւր փառսն և վայելչութի։ Որով մեծամեծքն և պատուականք աւետիք

պարգևեալք են մեզ, զի նորիմբք ամենեցուն բնութեանն լինիցիմք հաղորդակիցք․ փախուցեալք ՚ի ցանկութեց աշխարհիս և յապականութեց ։ Եւ սոյն այսմիկ զամ փոյթ ՚ի մէջ առեալ՝ ձերովք հաւատովքն մատակարա_րեսջիք զառաքինութի, առաքինութեն զգիտութի ։ Եւ գիտութեն զժուժկալութի․ և ժուժկալութեն զհամ_բերութի․ և համբերութեն զածպաշտութի ։ Եւ ածպաշ_տութեն զեղբայրսիրութի․ և եղբայրսիրութեն զսէր ։ Զայսոսիկ ձեր յանձին կալեալ և ՚ի սոյն յաճախեալ՝ ոչ դատարկս և անպտուղս զձեզ հաստատիցէն ՚ի տն մերոյ յի քի գիտութիւնն ։

Ալէլուիա ։ Տր լուր աղօթից իմոց․ ունկն դիր խնդ․

Աւետարանս որ ըստ Յոհաննու ։

Ի վաղիւ անդր կայր յոհաննէս և յաշակերտաց անտի նորա երկու ։ Եւ հայեցեալ ընդ յս զի գնայր, ասէ․ ահաւասիկ գառն այ ։ Լուան ՚ի նմանէ երկու աշա_կերտքն զի խօսէր․ և գնացին զհետ յի ։ Իբրև դարձաւ յս և ետես զնս զի երթային զհետ նր, ասէ ցնս․ զի՞նչ խնդրէք․ Նոքա ասեն ցնա, ռաբբի, որ թարգմանեալ կոչի վարդապետ․ ո՞ւր են օթեվանք քո ։ Ասէ ցնոսա՝ եկայք և տեսէք ․ եկին, և տեսին ուր էին օթեվանք նր․ և առ նմա ագան այն օր․ զի ժամէր իբրև տասներորդ ։ Էր անդրէաս եղբայր սիմոնի պետ․, մի յերկուց անտի․ որք լուան ՚ի յոհաննէ՝ և գնացին զկնի նորա ։

Կարող, Մ գտանելոյ մեզ․

**
*

Ամենօրհներորդ տիրուհւոյն կուսին։

Աւետարանացն ասէ ԳԻՂՕՐԻՍ։

բարձագործ տր՝ որ մարդասիրութե՛դ քո խո-
նարհեցար յերկնից. զկերպարանս ծառայի ա-
ռեր. եղեր մարդ անճառ միաւորութե
ամբ մերոյ փրկութե. չարչարեցար՝ բեւեռե
ցար ի խաչին. զմահ ճաշակեցեր. եդար ի գերեզմանի.
և յարուցեալ երեքօրեայ՝ ազատեցեր զազգս մարդկան
ի մահուանէ։ Ծառայս քո զոր ընտրեցեր ի քահանայ
ութիւն, խրատել ի հրահանգս ածպաշտութե զիրեալ
քո ժողովուրդս. որ էառ զկարգ հրեշտակաց. և ծա-
ռայեաց եկեղեցւոյ քում սրբոյ՝ հանապազ զխառատա-
նութի մատուցանելով ամենայն երրորդութեդ. արդ
մն անսուտ բանի քոյ դարձաւ ի հող ուստի առաւ։ Այլ
արդ տր բարերար՝ ընկա՛լ զաղաչանս մեր ամենեցուն ի
հաճոյս քո. և խառնեա՛ զհոգի սր՛ ի դասունս ստծ մարտիր
րոսաց։ Ո՛չ ամաչեսցէ սա ի հրապարակախօս ատենին
քոյ. զի դու միայն ես առանց մեղաց՝ և քաւիչ մեղա-
ցելոց։ Ա՛ քեզ վայել է փառք իշխանութի և պտ՛։

Խաղաղութի ամենեցուն։ Ա՛ երկիրպագեսցուք։

Նարերա՛ց տր՝ և տմ բարեաց առաջնորդ. որ յօրինե-
ցեր մեզ ճանապարհ կենաց և արդարութե. զի դու ինքն
գնացեր մարմնով ընդ անձուկ ճանապարհս, և նովաւ
ջանացան սրբեալքն քո նեղութե մարմնոյ մտանել ի հան
գիստ քո սր։ Արդ և ծառայս քո այս՝ որ ընտրեաց բարի
յօժարութ հրաժարել յաշխարհէ. և ո՛չ պարապեցաւ
ի յաւելորդ զբաղմունս. այլ խոնարհեցաւ ընդ լծով
ծառայութե պատուիրանի քոյ. և տանջեցաւ ի ճգնութիւնս
համ

Եօթներորդ աւուրն կանոն։

համբերութեամբ պահոց և ծարաւոյ, տքնութե և աղօթից. և այժմ 'ի հրամանէ ակնարկութե քոյ աւարտեցաւ 'ի մարմնի. Այլ մեք ժողովեալքս 'ի յուղարկութիւն եղբօրս մերոյ, լալով և արտասուօք՝ հողով զհողս ծածկեմք, և աղօթիւք զհոգի սորա յուղարկեմք 'ի ձեռն քահանայական շնորհիս։ Արդ աղաչեմք առ քեզ տէր Աստուած մեր՝ հայեաց 'ի բարձրութենէ քումմէ 'ի խոնարհ քո ժողովուրդս. և ընկալ զաղաչանս մեր՝ զոր մատուցանեմք վասն վախճանի եղբօրս մերոյ։ Մի՛ լիցի իշխանութի սատանայի և դիւաց նորա 'ի վերայ սորա. և մի՛ տրտմեցուսցէ զհոգի սորա հոգի չարութե. այլ հոգի քո բարի առաջնորդեսցէ սմա յերկիր ուղիղ. և յուսով հանգիցէ 'ի դասս սրբոց քոց և յերևելն փառս քո՝ քրիստոս Աստուած փրկիչ մեր։ Տո՛ւր սմա համարձակութիւն կալ առաջի Աստուածութեդ քոյ. անտես արա զյանցանս սորա բարեգութ տէր. զկամայ և զակամայ։ Մի՛ մտաներ 'ի դատաստան ընդ ծառայիս քոյ. զի ո՛չ արդարանայ առաջի քոյ ամենայն մսեղի. այլ ըստ մեծի ողորմութեդ քոյ մարդասիրեա՛ և ընկա՛լ 'ի յարկս սրբոց հարցն. բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին, և սրբոց քոց առաքելոց և մարգարէից՝ և սրբոց մարտիրոսացն։ Զի դու ես տէր Աստուած բազումողորմ և մարդասէր. դատաւոր և փրկիչ և կարօղ յամենայնի. և քեզ վայելէ փառք իշխանութի և պատիւ"։

ԵԹԷ ՎԱԽՃԱՆԵԼՈՅՆ ԶՕՐԱՊԵՏ ԿԱՄ ԱՌԱՋՆՈՐԴ ԻՑԷ, ԶԱՅՍ ԱՂՕԹՍ ԸՆԹԵՐՑԻՐ։

Հայր երկնաւոր փրկիչ և ողորմած. որ 'ի նմանութիւն քոյոյ պատկերիդ ստեղծեր զմարդն 'ի հողոյ. և կացուցեր զնա տէր 'ի վերայ ամենայն ստեղծուածոց քոց։ որ 'ի մարդկանէ ընտրեցեր մարգա-

րէս

Կաթուղիկէին և Աստուածորդայն յարութեան։

րէս և առաքելոյս, հովիւս և վարդապետս։ որև զծա-
ռայս քո (այս անուն) շնորհեցեր մեզ առաջնորդ և հովիւ
հոգևոր, և այժմ փոխեցեր 'ի մէնջ։ Շնորհեա՛ սմա լինիլ
ընդ սուրբս քո հանապազ. և զժողովուրդս քո յանձն արա
ուղղափառ հովուի՝ զի հովուեսցէ յերկիւղդ քո սուրբ։ Այլ
զտեղի բնակութեան սորա պահեա՛ անդրդուելի յերևելի
և յաներևոյթ թշնամեացն՝ մինչև յօր կրկնակի գալստեան
քոյ։ Այլ զժողովուրդս քո օրհնեա՛ և մխիթարեա՛. զի
դու ես ճշմարիտ մխիթարութիւն յուսացելոցս 'ի քեզ։ Եւ
քեզ Հօր որդւոյ և Հոգւոյ սրբոյ հոգւոյդ՝ վայելէ փառք՝ իշխան"։

Խաղաղութիւն ամենեցուն։ Զգլ երկիր պագէսցուք։

Փառաւորեմք զանճառ բարերարութիւնդ քո սուրբ՝ Տէրդ
մեր. որ լուսաւորեցեր զհաւատացեալս անուանդ քում
սրբոյ. և փրկեցեր 'ի խաւարային իշխանութենէ և 'ի գայթա-
կղութենէ սատանայի։ Գոհանամք զքէն Տէր, և աղա-
չեմք ամենայն սրտիւք մերովք. հանգո՛ զծառայս քո (այս ա-
նուն,) որ հասարակաց զկեանս իւր խոստովանութեամբ քո. և
գրեա զանուն սորա 'ի դպրութիւն կենաց. և ջնջեա՛ զձեռագիր
յանցանաց սորա։ Այլ զորինչ 'ի մեղանչական կենցաղումս
մեղուցեալ իցէ սա, բանիւ՝ կամ գործով՝ կամ մտածութեամբ.
ներեա՛ և թող սմա քոյով բարերարութեամբդ։ Աղաչեմք ըզ-
քեզ մարդասէր Տէր՝ կարգեա՛ զհոգի սորա ընդ արդարս քո, և
լուսաւորել պայծառացո՛ ընդ բարեգործօքն և ընդ ճշմա-
րիտ պատուիրանաց պահողօք։ Այլ որպէս արժանի արարեր
զսա ուխտի կրօնից՝ և վարուց ժուժկալեալ՝ և ժառան-
գութեան աստիճանի սուրբ առաջնորդացն, արա՛ արժանի և նո-
ցին սուրբ պսակացն. և կատարեա՛ 'ի բարի զկենդրուեանս ծա-
ռայից քոց. և հանգո՛ զհոգի սորա ընդ սուրբս քո։ Զի ընդ նոսին
փառաւորեսցէ զքեզ ընդ Հօր և ընդ սուրբ Հոգւոյդ. այժմ և՛

Ուահգործեալ․ Երգ․ (Ամէնէ կանոն գանձ ասա։) Հոգ-ւոյ։ Ամենեքեան չգերեզմանն, ասաէն՝ Հայր մեր։

Կանոն Հնգետասան աւուրն։ Երթեալ ՚ի գերեզմանն, և ասէն զ[illegible], և զՇարական հանգստեան ՚ի յայժմէն։ Ամ այս կանոն կատարի։

Սաղմոս։ Տր լուր աղօթից իմոց․ աղաղակ իմ առ․․

Ընթերցուած յԵսայեայ Մարգարէէ։

Այսպէս ասէ տր․ Հոգի յինէն ելցէ․ և զամ շունչ ես արարի։ Վս մեղաց առ սակաւ մի տրտմեցուցի զնա․ հարի զնա՝ և դարձուցի զերեսս իմ ՚ի նմանէ․ և տրտմեցաւ՝ և գնաց թախծեալ առաջի իմ զճանապարհս իւր։ Զճանապարհս սորա տեսի․ և բժշկեցի զնա․ և մխիթարեցի զնա․ և ետու նմա մխիթարութի ճշմարտութե՝ և սգաւորաց նորա։ Հաստատեցի զպտուղ խաղաղութե ՚ի վր խաղաղութե՝ հեռաւորաց և մերձաւորաց, ասէ տր։ և ես բժշկեցից զնոսա։

Պօղոսի առաքելոյն ՚ի Կորնթացւոց երկրորդ Թղ։

Օրհնեալ է ած և հայր տն մերոյ յի քի․ հայր գթութեանց՝ և ած ամ մխիթարութե։ Որ մխիթարէ զմեզ յամ նեղութիւս մեր․ առ ՚ի կարօղ լինելոյ մեզ մխիթարել զայնոսիկ՝ որ յամ նեղութիւս իցեն, մխիթարութեամբն՝ որով մեք մխիթարիմք յայ։ Զի որպէս առաւե լան չարչարանքն քի ՚ի մեզ, նոյնպէս և ՚ի ձեռն քի առաւել լիցի և մխիթարութիւն մեր։ Քանզի ոչ կամիմ զձեզ տգէտս լինել եղբարք՝ վս նեղութե մերոյ եղելոյ յասիայ։

 զի

Հնգետասան աւուրն կանոն ։

զի առաւել քան զկար մեր ծանրացաք ․ մինչև անյոյս լինելոյ մեզ և՚ի կենաց ։ Այլ անձամբ յանձինս զվճիռ մահու ընկալաք ․ զի մի՛ յանձինս ապաստանիցիմք՝ այլ յԱծ՝ որ յարուցանէ զմեռեալս ․ որ յայնպիսի մահուանէ փրկեաց զմեզ՝ և փրկեսցէ ։ Յանզի յուսացեալեմ, եթէ տակաւին փրկեսցէ օգնականութբ աղօթից ձերոց վասն մեր ։

Ալէլուիայ ։ Ի խորոց կարդացի առ քեզ ․

Աւետարանն որ ըստ Յոհաննու ։

Եւ յետ ութ աւուր դարձեալ էին ՚ի ներքս աշակերտքն , և Թովմաս ընդ նոսա ։ Գայ Յս դրօքն փակելովք ․ եկաց ՚ի մէջ նց և ասէ՝ ողջոյն ընդ ձեզ ։ Ապա ասէ ցԹովմաս , բե՛ր զմատունս քո և տե՛ս զձեռս իմ ․ և բե՛ր զձեռն քո և մուծ ՚ի կողս իմ ․ և մի՛ լինիր անհաւատ , այլ հաւատացեալ ։ Պատասխանի ետ Թովմաս և ասէ ցնա , տէ՛ր իմ և Ած իմ ։ Ասէ ցնա Յս ․ այդ զի տեսեր զիս՝ և հաւատացեր ․ երանի , որոց ո՛չ իցէ տեսեալ և հաւատասցեն ։

Յորդորէ , Մռ գտանելոյ մեզ ․

Ի ճաշահանայն ասէ զԱղօթս ։

Յոյս արարածոց և փրկիչ աշխարհի Ած իմ Յս ․ որ մարդասիրութբդ քո վս մեր մեռելոցս մեղօք՝ զմահ յանձն առեր ․ և կենարար յարութբդ քո վերածեր զբնութին մեր զստորերանիստեալս ՚ի խաւարի ․ զդժոխս աւերեցեր ․ զսատանայ կապեցեր ․ և զամենեսեան յարուցեալ լուսաւորեցեր ․ և կեանս անապական խոստացար սիրելեաց քոց ՚ի միւսանգամ գալստեան քո ։

Դու

Հնգետասանն աւուրն կանոն ։

Դու տէր և այժմ օրհնեա զտեղի բնակութեան սր̅ ։ և զոսկերս սորա պահեսցես անապական և անմեղաս ամենազօր աջով քով սրբով ։ և հոգւոյ սորա աւանդնորդեսցես յերկիր ուղիղ ։ Զի ը̅ սէս քո փառաւորեսցէ զքեզ ք̅ս, ընդ հօր և որ հոգւոյդ ։ այժմ և միշտ ։

Խաղաղականն ածնեցուն ։ Ա̅ն երկիր պագեսցուք ։

Որ զանպատում և զանհաս և զանբաւ սպարգևս շնորհես ամենեցուն՝ որք ճշմարտապէս ճանաչեն զքեզ տէր ։ որ յայտնի ծագես զլոյս քո ՚ի վր̅ արդարոց և մեղաւորաց ։ որ կանգնես զգլորեալս, և բժշկես զբեկեալս սրտիւք ։ Տուր մեզ տէր և այժմ որ աղաչեմք զքեզ, հոգի զգաստութեան, հոգի մխիթարութեան ։ և մխիթարեալ սփոփեա զվշտագնեալս սրտիւք ։ Զի միասանգամ հաստատուն յուսով քո առաջնորդեալք՝ կացցուք առաջի քո զուարթ և պայծառ ՚ի միւսանգամ գալստեան քո ։ զի ը̅ սէս քո փառաւորեսցուք զքեզ ընդ հօր և ընդ սբ̅ հոգւոյդ · այժմ և միշտ և յաւէտ ։

Ամ̅ անեղ ։ Սրբ · Հոգւոյդ ։ Ապ̃կեսէն պերեպեանն, և ասէն՝ Հայր մեր որ յերկինս ես ։

Այսօր Բաստասունն աւուրն ։ Սրբոյն ՚ի պերեպեանն, և ասէն զՏէր էրմն, և զՏարակեան հանգստեան ՚ի յայնժէն ։ Ա̂յս կանոն կատարի ։ Սաղմոս Ճք ։

Երանելիք են որք բնակեալ են ՚ի տան տն̅ ։ Մինչ սիրելի ։

Ընթերցուած յԵսայեայ Մարգարէի ։

Այսպէս ասէ տէր · զգոյշ կացէք իրաւանց՝ և զործեցէք զարդարութիւն · զի եկեալ հասեալ է

փրկ

փրկութիւն իմ․ և յայտնելոց է ողորմութիւն իմ։ Երանի առն՝ որ առնիցէ զայն․ և մարդոյ՝ որ կալցէ ՚ի նոսին․ և պա_ հիցէ զշաբաթս իմ, և ոչ պղծիցէ․ և պահիցէ զձեռս իւր յառնելոյ զանիրաւութիւն ։

Պօղոսի առաքելոյն ՚ի Թեսաղոնիկեցւոց առաջին թղթոյն է"։

Ոչ կամիմ եղբարք եթէ տգէտ իցէք վսն ննջեցելոցն․ զի մի տրտմեսջիք որպէս և այլքն՝ որոց ոչ գոյ յոյս ։ Եթէ հաւատամք եթէ յս մեռաւ և յարեաւ, նոյնպէս և ած զննջեցեալսն ՚ի ձեռն յի ածցէ ընդ նմա ։ Բայց զայս ասեմք տն բանիւ, եթէ մեք՝ որք կենդանիքս մնա_ ցեալ եմք՝ ՚ի գալստեան տն ոչ ժամանեմք ննջեցելոցն ։ Զի ինքն տր հրամանաւ և ՚ի ձայն հրեշտակապետի՝ և ՚ի փող այ՝ իջանէ յերկնից․ և մեռեալք ՚ի քս յարիցեն յառաջագոյն ։ Ապա և մեք որք կենդանիսն մնացեալ իցեմք՝ նոքօք հանդերձ յափշտակեսցուք ամպովք ընդ ա_ ռաջ տն յօդս․ և այնպէս յամենայն ժամ ընդ տն լինիցիմք ։ Այսու_ հետև մխիթարեսջիք զմիմեանս բանիւքս այսոքիւք ։

Ալէլուիա ։ Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո"։

Աւետարան որ ըստ Մարկոսի ․

Եւ ասէր՝ այսպէս է արքայութիւն այ․ որպէս զի այր մի արկա_ նիցէ զսերմանիս յերկիր ։ Եւ ննջիցէ, և յառնիցէ զցայգ և զցերեկ․ և սերմանիքն բուսանիցեն և աճիցեն ։ Եւ նա ոչ գիտէ, թէ երկիր ինքնին բերէ զպտուղն․ նախ զխոտն՝ և ապա զհասկն՝ ապա զցորեանատոք ՚ի հաս_ կին ։ Եւ յորժամ տայցէ զպտուղն, վաղվաղակի առաքէ մանգաղ՝ զի հասեալ են հունձք ։ Եւ ասէր․ ո՞ւմ նմա_ նեցուսցուք զարքայութիւն այ․ կամ որո՞վ առակաւ ա_

ռա

Քառասնորդ առաւուրն կանոն ։

ուսիկեսցուք զնա ։ Որպէս հատոն մանանխոյ՝ որ յորժամ սերմանիցի յերկիր՝ փոքրագոյն է քան զա̄մ սերմանիս՝ որք են յերկրի ։ Եւ յորժամ սերմանիցի, բուսանի, և լինի մեծ քան զա̄մ բանջար ։ և արձակէ ոստս մեծամեծս, մինչև բաւական լինել է̄ հովանեաւ նր̄ թռչնոց երկնից բնակիլ ։ Եւ այնպիսի առակօք խօսէր ընդ նս̄ զբանն, որպէս կարող լինէին լսել ։ Եւ առանց առակի ոչինչ խօսէր ը̄ նս̄ ։ բայց առանձինն աշակերտացն իւրոց մեկնէր զամենայն ։

Քարոզ՝ Ա̄ գտանելոյ մեզ ։

Եւ ճաշահանգիստ առէ զՍ̄ՉԲ ։

Որ արարիչդ ես ա̄մ արարածոց, և ստեղծիչ ազգի մարդկան ։ որ կեանքդ ես մահկանացուաց, և շտեմարան և սփոփիչ հոգւոց մարդկան ։ որ սրբոց քոց տէրդ ես, և յոյս և ակնկալութի ա̄մ արարածոց ։ որ փրկելոց քոց առաջնորդ ես արդարութե̄ քում ։ որ լուսաւորեցեր զազգս որդւոց մարդկան, և փախեցեր յիշխանութէ խաւարի յարքայութի քո ։ Դու տէր և այժմ ընկալ զխնդրուածս մեր ։ և հանգո՛ զհոգի սորա առ ա̄մ սրբ̄ց և սիրելեաց անուան քոյ ։ Եւ զգերեզման ծառայիս քոյ կնքեալ պահեսցես ։ զի մինչ պահեսցին նշխարք ոսկերաց սորա մինչև յօր վերջնում կոչին գալստեան քոյ ։ Եւ հոգւոյ սորա առաջնորդեա՛ յերկիր ուղիղ ։ բարեխօսութեամբ սրբ̄ց քոց ։ զի քեզ վայելէ փառք իշխա" ։

Խաղաղութիւն ամենեցուն ։ Ա̄յ երկիր պագե՛" ։

Տէ̄ր ա̄ծ՝ որ տէր ես հոգւոց և ստեղծիչ մարմնոց ։ հանգո՛ զհոգի ծառայիս քոյ ընդ սրբ̄ս քո ։ զի դու ես հանգու-

ցիչ

Յարութեան առաւօտուն կանոն։

ցէս քոյոց կամարարաց․ և սփոփիչ և մխիթարիչ հոգւոյ հանգուցելոց։ Ընկալ և այժմ զխնդրուածս մեր․ և կատարեա՛ ՚ի բարի զաղօթս մեր։ զի դու ես Տր դատաւոր կենդանեաց և մեռելոց․ և իշխան հոգւոց և մարմնոց։

Այժ քեզ վայելէ փառք իշխանութի և պատ"։

Ճանապարհ մոլորե"։ Այլ․ Հոգւոյ"։ Այժ ննջե-ցելոցն, և ասեն՝ Հայր մեր որ յերկինս ես"։

Կանոն Տէրունի։ Երթան ՚ի գերեզմանն, և ասեն զՄխիթարան և զՏէրունական հանգստեան ՚ի չայնէն։ Այսպես կանոն կատարի։

Սաղմոս ԻԹ։ Ընդ երեկոյս հանգիցեն լալիք"։ Բարձր առնեմ զքեզ Տր՝ զի ընկալար զիս"։

Ընթերցուած յԵսայեայ Մարգարէէ։

Իբրև զի գեղեցիկ քեն ՚ի վերայ լերանց ոտք աւետարանչի համբաւոյն խաղաղութե․ իբրև աւետարանչի բարութեց․ զի լսելի արարից զփրկութիւն քո․ ասել Սիոն թէ թագաւորեսցէ քեզ Այ։ Զի ձայն պահապանաց քոց բարձրացաւ․ և ՚ի նոյն բարբառ առ հասարակ ցնծասցեն․ զի դէմ յանդիման տեսցեն զժամանակն՝ յորում ողորմեսցի Տր Սիոնի։ Երգեսցեն գոչեսցեն աւերակօքն հանդերձ Եէմի զփրկութիւն․ զի ողորմեցաւ նմա Տր․ և փրկեաց զԵէմ։ Այլ յայտնի արասցէ Տր զբազուկ իւր սբ առաջի ամ ազգաց․ և տեսցեն ամ ծագք երկրի զփրկութի այ մերոյ։

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն ընթեր"։

Բայց հաստատեալ եմք վս ձեր սիրելիք ՚ի լաւ անդր, և որ լի՛ն է փրկութե։ Զի թէպէտ և այսպէս խօսիմք,

Տուրեւլի՛ն կանոն ։

ո՛չ եթէ անիրաւէ ինչ է ած՝ մոռանալ զգործս ձեր և զսէր՝ զոր ցուցանէք յանուն նորա ։ զի պաշտեցիք զսրբսն, և պաշտէք ։ Այլ մեք ըղձամք՝ զի իւրաքանչիւրոք ՚ի ձէնջ զնոյն փոյթ ցուցանիցէ ՚ի հաստատութի յուսոյն՝ մինչև ցվախճան ․ զի մի՛ հեղգամիտք լինիցիք ։ Նմանօղք եղերուք այնոցիկ՝ որք հաւատովք և երկայնմտութեամբ ժառանգեցին զաւետիսն ։

Ալէլուիայ ։ Այ̃ ողորմեա՛ մեզ և օրհնեա՛ զմեզ ․ երև" ։

Աւետարանս որ ըստ Մատթէոսի ։

Յայնմ ժամանակի պատասխանի ետ յի̃՝ և ասէ ։ գոհանամ զքէն հայր՝ տէր երկնի և երկրի ․ զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ՚ի գիտնոց՝ և յայտնեցեր տղայոց ։ Այո՛ հայր ․ զի այսպէս հաճոյ եղև առաջի քո ։ Ամ̃ ինչ տուաւ ինձ ՚ի հօրէ իմմէ ։ և ոչ ո՛ք ճանաչէ զորդի՝ եթէ ոչ հայր ։ և ո՛չ զհայր ոք ճանաչէ՝ եթէ ո՛չ որդի ․ և ում որդին կամիցի յայտնել ։ Եկա՛յք առ իս ամ̃ վաստակեալք և բեռնաւորք՝ և ես հանգուցից զձեզ ։ Առէք զլուծ իմ ՚ի ձեզ ։ և ուսարո՛ւք յինէն՝ զի հեզ եմ, և խոնարհ սրտիւ ։ և գտջիք հանգիստ անձանց ձերոց ։ Զի լուծ իմ քաղցր է ․ և բեռն իմ փոքրոգի ։

․Քարոզ , Կ̃ ՚ի վերուստ խաղաղութե" ։

Այլ քահանայն ասէ զԱղօթս ։

Արարիչ յաւիտենից և ստեղծիչ ազգի մարդկան ․ որ խոնարհեցար յանձառ փառաց ՚ի հողեղէն բնութիս մեր , ազատել զմեզ յանիծից ադամայ ․ և խոստացար անսուտ բանիւ քո՝ ՚ի միւսանգամ գալստեանդ նորոգել զապականեալս մեզ ։ Այլ այժմ ողորմած տէր , գթա՛ ՚ի հոգիս ննջեցելոյս ,

Տօնելոյն կանոն ։

Լոյս որ այժմ 'ի ձեռն կոչման քոյ փոխեցաւ յանցաւոր կենցաղոյս, 'ի քեզ հաւատացեալ ճշմարտութ. եմ ։ Այլ ջնջեա զձեռագիր անօրէնութեան սորա զոր յանցեալն առաջի քոյ, և գրեա զանուն սր 'ի դպրութեան կենաց ։ Զի դու ես յարութիւն և կեանք ամ ննջեցելոց. և քեզ վայել է փառք ։

Խաղաղութիւն ամենեցուն ։ Այ երկիր պագեսցուք ։

Ողորմեա Տր զհոգի ծառայիս քոյ (այս անուն) քահա_նայիս՝ զոր կարգեցեր սպասաւոր եկեղեցւոյ քում սբյ և քարոզ ժողովրդեան քում, համառօտել զբանին ճըշ_մարտութե քոյ. և այժմ ըստ հրամանի քոյոյ կոչմանդ, մերձեցաւ 'ի հող ուստի առեղծեր զնա ։ Ընկալ և դա_սաւորեա զհոգի սր ընդ այլ ճշմարիտ վկայակացուն, որք հաճոյ եղեն քեզ. և ներեա յանցանաց սր, բարեխօ_սութեամբ ընտրելոց քոց ։ Այլ զմեզ զամենեսին զհաւա_տացեալքս 'ի քեզ օրհնեա. զի արժանի լիցուք փառա_ւորել զհայր և զորդի և զսբ հոգին. այժմ և միշտ ։

Ժողովեալքս ։ Արք. Հոգւոյ ։ Այս կնքեն զերեզմանն. և ասեն՝ Հայր մեր որ յերկինս ես ։

Սակաւ ինչ Մերձաւորութիւն ՚ի սրբագրողէ Գրոցս Տն Սիմէոն Երեւանեան կաթուղիկոսէ ամ Հայոց, առ Եղբարսն վերծանողս ։

Ըղձալի է բանասիրաց որոնել զուղիղն բանից ՚ և զանելին քան զհարկաւորն՝ մանաւանդ թէ զարտասանելն անգիր քան զուղղումն, յապաւել ինչս ։ իսկ զպահպանութիւն լինել ըստ ուղիղ մտաց, որպէս զի՛ գտցէ ում բանին զուղղութիւն կարգ., և ՚ի լաւն անգիր կացացի ։ Ըստ սոյն սարասի՝ և յիմ գործ առնութիւնս ընտրելի է լաւն ։ ըստ որում և մեք առաջինն Պօղոս յորդորէ, նախանձաւորք լերուք շնորհացն՝ որք լաւքն են ։ Արդ՝ զսոյն փոյթ և մեր յանձին կալեալ՝ ՚ի վաղուց հետէ ունէաք զդժուարութիւն, սրբագրել զմեծ մաշտոցն մեր . յորս թէ որքան աղճատանք և մեծագոյն սխալանք էին ներմուծեալ ք յանզգոյշ անձանց, թէ ՚ի ձեռագրացն՝ և թէ ՚ի տպելոյն, յայտնի է նորքանկատ քննողաց . Մի այս՝ գումարել ՚ի մի վայր զձեռագիր օրինակս յոգունս, ջանիւք մեծաւ հետազօտեցաք ՚ի յուղղել՝ որս ուղղեցաք իսկ շնորհիւ այն, բառնալով զաւելորդսն՝ որք յետոյ էին ներմուծեցեալք . և լցուցանելով զթերիսն՝ զորս անխընամաբար հանեալ էին ՚ի բառեղեաց հիւրեանց ՚ի յոլով օրինակս, թէ գրոցն՝ և թէ տպինց ։ Այլ ուրեք ուրեք յորս խանգարեալ էին բանին միտք, կամ անհամեստ երևիւր, զայնս փոխեցաք ՚ի յուղիղ և ՚ի համեղ ոճ, պահելով ամբողջ զմիտս հեղինակին ։ Իսկ թէ այժմ մնէր միայն ըղ Քահանայաթագին կանոնն տուաք տպել . քանզի այս կանոն քան զայլսն յոյժ աղճատեալ և խանգարեալ էր, որ յայտ է փորձիւ գիտողաց . իսկ միւսոց կանոնացն ես թէպէտ գոյին աղճատանք, այլ ո՛չ այնքան՝ որքան Քահանայաթագին ։ մանաւանդ՝ զի միւսքն յիմ ուրեք գտանին,

Վերջաբանութիւն Գրչոյս ։

նին, քանզի այս կանոն հազուագիւտ էր եղեալ այժմոյս ։ Վն՝ աճապարեցաք նախապէս զսոյն տպեցուցանել ․ և եթէ որ կամիցի, զայլսն ևս ՚ի դիպող ժամու տպեցուցանելոց եմք ։ Արդ՝ կարէ ոմք համեմատելով զսոյնս ընդ այնոցն՝ իմանալ թէ որքանք գոն ՚ի սմա ուղղութիւնք և բարեձև կարգք ․ թէ ՚ի յընթերցուածսն, թէ ՚ի յաղօթսըն, և թէ ՚ի մակագրութիւն ։ Յորմէ ՚ի բաց բարձաք զաւելորդ և զնորաձայն անախորժ բանսն, և ՚ի նոյն օրինակից զխորհրդաւոր և զզօրաւոր աղօթս առեալ եդաք ՚ի տեղիս նոցին, ըստ նոյն շաւղաց ։ Նաև զընթերցուածսն ևս ուրեք ուրեք փոխեալ՝ զնոյն եդաք, որք բարւոքագոյն երևեցան մեզ ։ և զայլ ուղղութիւն բազումս ըստ սոցին արարաք ։ Զոր և ետուք ահա ՚ի վայելս համայն եկեղեցական սրբասէր պաշտօնէից ։ Լուսաւորչակրօն և միաբանադաւան օրհնեալ ազգիս հայոց ։ [illegible]՝ անտարակոյս դիւրութբ վայելելով ձեր զսոյն, յիշեսջիք զմեզ ՚ի մաքրափայլ աղօթս ձեր ․ և դուք յիշեալ լիջիք ՚ի ՔԷ ՏԷ մերմէ ։ Ամէն ։

Յիշատակարան տպողաց ։

Շնորհիւ և ողորմութեամբն ԱՅ աւարտեցաւ տպագրութիւն գրոցս՝ ՚ի ՌՄԻԷ թուոյ մերում, և յամսեանն փետրվարի ։

Արդ՝ որք վայելէք զսոյն, յիշեսջիք ՚ի ՔՍ զքաջաբախտ Հայրապետս մեր՝ և զյոգնաջան Հովուապետս ամ Հայոց՝ զՏՐ Սիմէօն Արքայան Կաթուղիկոս ․ որ բարեյարմար կարգաւորութեամբ ուղղեաց զկանոն Քահանայաթագիս՝ և զմեծ մաշտոցն իսկ բոլորովիմբ, զոր տպագրելոց եմք յետոյ ամն շնորհիւ ։

Յի

Վերջաբանութիւն Գրոցս։

Յիշեսջի՛ք նաև զհոգացողն բոլոր ծախուց տպարանիս՝ զՋուղայեցի Խօջիջանենց ՚ի տէր հանգուցեալ մեծահա-ւատ և բարեջան Գրիգոր Աղայն Չաքիկենց կոչեցեալ. և զհայրն իւր Միքայէլ Աղայն. և զմայրն իւր Աննախա-թունն. և զվաղաթառամ որդին իւր զՄիքայէլն. և զքորսն իւր՝ զԱննամարիայն՝ և զՕխիխտայն. և զայլ ամ ազգայինս նորին։

Այլև յիշեսջի՛ք զԻսահակ Եպիսկոպոսն Գեղամացի, որ վերակացու և կարգաւորիչ է գործարանիս Նաև զհամայն աշխատաւորս սորին. այսինքն՝ զՎարպետ Յարութիւն. զԳրաշար Գրիգոր Սարկաւագն. և զԳրիգոր՝ Մանուկ և Խաչատուր մշակսն. և զայլս ամն՝ որք մասամբ ինչ աշխատեցան ՚ի սմին։ Եւ դուք յիշեալ լիջիք յողորմութիւն և ՚ի գթութիւն մարդասիրին ·ՔԻ· ԱՄԷՆ

ՎԵՐՋ.

[illegible]
[illegible] . որ [illegible]
[illegible] . [illegible]
[illegible] և [illegible] :
այլ որ [illegible]
[illegible] և [illegible] . [illegible] որ
[illegible] . [illegible]
[illegible] . [illegible] . [illegible] :
Ի [illegible] և [illegible]
[illegible] :—— :

Քահանայանալոյ, տօնելոյ:

Ընթերցուած Յեզեկիէլ Մարգարէի.

Այսպէս ասէ ադոնայի տէր: Եւ ցանեցից ի վերայ ձեր ջուր սուրբ. և սրբեսջիք յամենայն պղծութեանց ձերոց. և յամենայն կռոց ձերոց սրբեցից զձեզ: Եւ տաց ձեզ զսիրտ նոր. և զհոգի նոր նորոգեցից ի ձեզ. և հանից զսիրտն քարեղէն ի մարմնոց ձերոց. և տաց ձեզ զսիրտ մարմնեղէն: Եւ զհոգի իմ տաց ձեզ. և արարից, զի յարդարութիւնս իմ գնայցէք, և զիրաւունս իմ պահիցէք. և առնիցէք զնոսա: Եւ բնակիցէք յերկրին՝ զոր ետու հարցն ձերոց. և եղիջիք ինձ ի ժողովուրդ. և ես եղէց ձեզ յԱստուած:

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուած.

Ունիմք այսուհետև եղբարք զհամարձակութիւն ի մտանել սրբութեանն արեամբն Յիսուսի: Զոր նորոգեաց մեզ զճանապարհ նորոգ և կենդանի ի ձեռն վարագուրին՝ այսինքն է, մարմնոյ իւրոյ: Եւ քահանայ մեծ ի վերայ տանն Աստուծոյ: Մատիցուք ճշմարիտ սրտիւ լրութեամբ հաւատոց. լուացեալ զսիրտս ի խղճէ չարեաց. և մկրտեալ զմարմինս ի ջուր սրբութեան: Պինդ կալցուք զխոստովանութիւն անշարժ յուսոյն. զի հաւատարիմ է որ խոստացաւն: Եւ զգուշացարուք միմեանց յորդորմամբ սիրոյ և գործոց բարեաց: Եւ մի թողցուք զժողովս միմեանց. որպէս և սովոր են ոմանք: Այլ մխիթարեսցուք և այնչափ ևս առաւել՝ որչափ տեսանիցէք զօրն մերձեալ:

Եւ յետ լռութեանն պաշտօնեայն՝ ասասցէ օրհնութիւն: Զգեցուցանեն պարեգօտ սպիտակ. և անդրավարտիքս ի ձեռաց. և օր ի յորան. և գօտի ընդ մէջն. և կնքեալ սքիմն ի գլուխն. և փա-

Քահանայականաց ասելոց։

Նախ ասէ,

Օրհնեալ հոգիդ մեր Ած ճշմա՛. Ողորմեա ինձ Ած։
Օրհնեմք զքեզ ով Տէր։ Յամենայն ժամ աղա՛։ Այժմ եւս խա՛։
Օրհնութիւն։ Այժմ սկսանին Պնեղութե կանոնն,
և ասեն է գուբղայ. և յամէն գուբղայի, եւեւ խա-
ղաղութեան. օրհնութիւն և փառք։

Այժմ ասէն կանոնագլուխ։

Օրհնեա անձն իմ զՏէր. օրհնեցից զՏէր ՚ի կեանս իմ.
սաղմոս ասացից Այ իմոյ մինչև եմ ես ։

(Զ ձայն Բիմ ըստ ասա. և ՚ի վերջն Յայտնի,)

Օրհնեցից [illegible] գոհութեամբ ՚ի կեանս իմ. սաղ
մոս ասացից [illegible] Թագաւորի. յաւիտենականին
Նոր երգ [illegible] օրհնութեամբ։ Երիցս կրկնեա։
Բիմ, Օրհնեցէք զՏէր զի բարի է սաղմոս. Այ մերում
քաղցր եղիցի օրհնութի։ (Զ ձայն ըստ ասա. յետոյ Յայտնի,)
Կամաց [illegible] գոհութեամբ երկրպագեմք
անուանս քոյ. զոր յառաջագոյն [illegible] ողորմութե քո ՚ի
խորհրդս [illegible]։ Երիցս կրկնեա։
Բիմ, Պաշտեա [illegible] զՏէր։ (ըստ ձայն ասա. փառք Հօր։)
Յետոյ Յայտնի, Զքեզ [illegible] փրկեան
[illegible]
[illegible] ՚ի [illegible]
Երիցս կրկնեա։

Զկնի, Այժմ եւ յաւիտեան։ Օրհնութի և փառք։
Այժմ ասէն. Տր զլուր քո լուայ և երկեայ. Տր նայեցայ
՚ի գործս քո և զարհուրեցայ։ Զկնի շարական [illegible],
[illegible] սքանչելի անօրէնութե քո [illegible]
[illegible]
[illegible]

ան

[illegible]

[illegible]